Մեր այսօրվա գիտաժողովի անվանումը՝ «Հայաստանը որպես քաղաքակրթական խաչմերուկ. պատմամշակութային առնչություններ», պատահական չէ ընտրված: Հարյուրամյակներ շարունակ Հայաստանը մշակութային, տնտեսական, քաղաքական սերտ հարաբերություններ է ունեցել թե՛ տարածաշրջանի և թե՛ համաշխարհային պետությունների ու ժողովուրդների հետ: Անգամ պետականության բացակայության պայմաններում հայ ժողովուրդը կարողացել է թեկուզ ոչ մեծ, բայց իր ուրույն հետքն ունենալ համաշխարհային քաղաքակրթությունների և մշակույթի ներկայանալով:

Հայ ժողովուրդը, հազարամյակներ շարունակ սերտորեն շփվելով աշխարհի բազմաթիվ ազգերի հետ, նաև ընդունել է նրանց քաղաքակրթական ազդեցությունը՝ հարստացնելով սեփական մշակույթը: Հայկական լեռնաշխարհի աշխարհագրական դիրքը թույլ է տվել դառնալ յուրատեսակ խաչմերուկ, որտեղ հաճախ միաձուլվում և փոխլրացվում էին մշակույթն ու կրոնը, արվեստն ու առևտուրը, գիտությունն ու փիլիսոփայական միտքը: Եվ այս գիտական համաժողովի ելույթների ու զեկույցների, թեմաների և պատմական ժամանակաշրջանների բազմազանությունն այս խոսքերի վառ ապացույցն են:

Մշակութային խաչմերուկի և համաշխարհային քաղաքակրթությանն ինտեգրվելու գաղափարը միայն պատմական անցյալին չի վերաբերում: Այսօր ևս Հայաստանի Հանրապետությունը կարևորում է տարածաշրջանային և համաշխարհային պետությունների հետ ազատ, անխոչընդոտ հարաբերությունները, ինչն արտահայտվում է անկախ Հայաստանի արտաքին և ներքին քաղաքականությամբ: Որքան էլ բարդ ու անկանխատեսելի լինի մեր դժվարին իրականությունը, Հայաստանը ձգտում է բարիդրացիական հարաբերություններ հաստատելու բոլոր հարևանների հետ: Ավելին՝ մեր երկիրը պատրաստ է ավելի մեծ ջանքեր գործադրելու համաշխարհային քաղաքակրթություններին միանալու, սեփական արժեքները փոխանցելու և նոր գաղափարներ յուրացնելու համար:

Հայաստանի Հանրապետության Կառավարությունն արդեն երկար ժամանակ է, ինչ առաջ է քաշել «Խաղաղության խաչմերուկ»

նախաձեռնությունը, որի հիմնական նպատակն է բացել մեր տարածաշրջանի հաղորդակցության բոլոր ուղիները, նպաստավոր պայմաններ ստեղծել բոլոր երկրների տարանցիկ առևտրի և ենթակառուցվածքների անխափան գործունեության համար: Այս նախաձեռնությունը Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքական հիմնական առաջնահերթություններից մեկն է: Նախագծի անունը նույնպես խորհրդանշական է: Մենք համոզված ենք, որ միայն խաղաղ գործակցության պայմաններում է հնարավոր զարգացնել տնտեսությունը, մշակույթը, գիտությունը և հասնել մարդկանց իրական բարեկեցության:

Օգտագործելով մեր համաժողովի լսարանը՝ ուզում եմ մեր հարգարժան հյուրերին և գիտաժողովի մասնակիցներին ներկայացնել կարճ տեսահոլովակ, որն ավելի ընկալելի ու հասկանալի կդարձնի «Խաղաղության խաչմերուկ»-ի ամբողջ փիլիսոփայությունը:

Հարգելի՛ գործընկերներ, «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոնի» անունից ուզում եմ շնորհակալություն հայտնել բոլորին երկար ճանապարհ կտրելու և Հայաստան այցելելու համար: Մենք ուրախ ենք ձեզ հյուրընկալելու համար: Համոզված եմ, որ այս գիտաժողովը ևս մեկ քայլ կլինի միջազգային մեր գործընկերների հետ կապերն ամրապնդելու և գիտական նոր բարձունքներ նվաճելու համար: Մաղթում եմ բոլորիդ արդյունավետ քննարկումներ և գիտական առողջ բանավեճ:

**DIRECTOR OF PRIME MINISTER'S OFFICE'S
"PUBLIC RELATIONS AND INFORMATION CENTER" SNCO
GOR TSARUKYAN**

Honorable Mr. President,
Distinguished Guests, Respected Colleagues,

The title of today's scientific conference, "Armenia as a Crossroads of Civilizations: Historical and Cultural Relations", was chosen with great deliberation. For centuries, Armenia has maintained close cultural, economic, and political relations with both regional and global states and peoples. Even in the absence of statehood, the Armenian people have managed to leave their mark on the tapestry of world civilizations and culture, even if it is not a large one.

For thousands of years, the Armenian people, having been in close contact with many nations worldwide, have embraced various civilizational influences, enriching their own culture. The geographical location of the Armenian highlands has enabled it to become a unique crossroads where culture and religion, art and trade, science, and philosophical thought have frequently converged and complemented one another.

The variety of speeches, reports, topics, and historical periods covered in this scientific conference is a vivid testament to these assertions.

The idea of cultural intersection and integration into world civilization does not pertain solely to the historical past. Today, the Republic of Armenia values free and unhindered relations with regional and global states, a principle that is reflected in the foreign and domestic policies of independent Armenia. No matter how complicated and unpredictable our challenging reality may be, Armenia strives to establish neighborly relations with all its neighbors. Moreover, our country is prepared to make even greater efforts to integrate into world civilizations, transmitting its values while embracing new ideas.

The Government of the Republic of Armenia has long been promoting the **"Crossroads of Peace"** initiative, whose main goal is to open all communication channels in our region and to create favorable conditions for the smooth operation of transit trade and infrastructure for all countries. This initiative stands as one of the main foreign policy priorities of the Republic of Armenia. The name of the project is also symbolic. We are convinced that only through

peaceful cooperation can we achieve the development of the economy, culture, and science and attain the true well-being of people.

This presentation will help elucidate the philosophy behind the “Crossroads of Peace” initiative, making its principles clearer and more accessible.

Dear colleagues, on behalf of the “Public Relations and Information Center,” I extend my gratitude to each of you for traveling to join us here in Armenia. We are delighted to host you. I am confident that this conference will serve as another step forward in strengthening our ties with international partners and achieving new scientific milestones. I wish you all engaging and productive discussions and a robust scientific debate.

**ДИРЕКТОР ГНК «ЦЕНТР ИНФОРМАЦИИ И
ОБЩЕСТВЕННЫХ СВЯЗЕЙ»
ПРИ АППАРАТЕ ПРЕМЬЕР-МИНИСТРА РА
ГОР ЦАРУКЯН**

Многоуважаемый господин президент!
Уважаемые гости, коллеги!

Название нашей сегодняшней конференции - «Армения как цивилизационный перекресток: историко-культурные связи» - выбрано неслучайно. Веками Армения имела тесные культурные, экономические, политические отношения как с региональными, так и с мировыми государствами и народами. Даже в условиях отсутствия государственности армянский народ смог оставить свой хоть и небольшой, но особенный след на палитре мировых цивилизаций и культур.

Армянский народ, тысячелетиями общаясь с многочисленными народами мира, также принял на себя их цивилизационное воздействие, тем самым обогатив собственную культуру. Географическое положение Армянского нагорья позволило ему стать своеобразным перекрестком, где часто сливались и взаимно обогащались культура и религия, искусство и торговля, наука и философская мысль. И выступления и доклады, темы и многообразие исторических эпох на этом научном собрании – яркое тому подтверждение.

Идея культурного перекрестка и интеграции во всемирную цивилизацию относится не только к историческому прошлому. Республика Армения и сегодня придает важность свободным, беспрепятственным отношениям с региональными и мировыми государствами, что выражается во внешней и внутренней политике Армении. Сколь бы сложной и непредвиденной не была бы наша тяжелая действительность, Армения тем не менее стремится установить добрососедские отношения со всеми своими соседями. Более того, наша страна готова приложить большие усилия для присоединения к мировой цивилизации, передачи собственных ценностей и усвоения новых идей.

Правительство Республики Армения давно выдвинуло инициативу «Перекресток мира», основная цель которой – разблокирование всех коммуникационных путей нашего региона, создание выгодных условий для транзитной торговли и беспрепятственной деятельности инфраструктур всех стран. Эта инициатива – одна из основных первоочередных задач внешней политики Республики Армения. Название проекта также символично. Мы уверены, что только в условиях мирного взаимодействия возможно развивать экономику, культуру, науку и достичь реального благосостояния.

Используя аудиторию нашего собрания, хочу представить нашим многоуважаемым гостям и участникам конференции короткий видеоролик, благодаря которому станет более осязаемой и понятной вся философия «Перекрестка мира».

Уважаемые коллеги, от имени «Центра информации и общественных связей» хочу выразить благодарность всем за преодоление долгого пути и посещение Армении. Мы рады принять вас у себя. Я уверен, что эта конференция будет еще одним шагом для укрепления связей с нашими международными коллегами и для завоевания новых научных высот. Желаю всем продуктивных обсуждений и здоровой научной дискуссии!

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հայաստանի Հանրապետության մեծարգո՝ նախագահ,
Գիտությունների ազգային ակադեմիայի հարգարժան նախագահ,
գիտաժողովի հարգելի մասնակիցներ և հյուրեր

Երևանի պետական համալսարանի և անձամբ իմ անունից ողջունում եմ «Հայաստանը որպես քաղաքակրթական խաչմերուկ. պատմամշակութային առնչություններ» խորագրով միջազգային գիտաժողովի անցկացումը:

Գիտաժողովի մասնակիցների մասնագիտական բարձր հեղինակությունը, ինչպես նաև լայն աշխարհագրությունը ցույց են տալիս, որ Հայաստանի՝ որպես քաղաքակրթության կարևոր կենտրոններից մեկի վերաբերյալ գիտական քննարկումները կարևոր ու արդիական են մեր օրերում:

Դրանք վկայությունն են հայագետների տարբեր սերունդների ջանքերի, նվիրումի, ինչը հնարավոր է դարձրել հայագիտության շարունակականությունը ոչ միայն Հայաստանի Հանրապետությունում, այլև Վրաստանում, Իրանում, Ռուսաստանի Դաշնությունում, ԱՄՆ-ում, Ֆրանսիայում ու գիտաժողովում ներկայացված բազմաթիվ երկրներում:

Նման գիտաժողովի անցկացումը կարևոր է հատկապես մեր օրերում, երբ Հայաստանը կանգնած է լուրջ անվտանգային խնդիրների առջև, երբ Հայաստանի ընտրությունը շատերի կարծիքով քաղաքակրթական ընտրություն է, հայտարարություն այն մասին, որ, ինչպես դարեր ու հազարամյակներ շարունակ, այսօր էլ հայերը քաղաքակրթ աշխարհի մասն են կամենում լինել, այն աշխարհի, որի ձևավորմանն ու կայացմանը մեծ նպաստ են բերել, այն աշխարհի, որի նվաճումների շարքը գրեթե բոլոր պատմական շրջափուլերում համալրել է հայ ժողովրդի տաղանդավոր ներկայացուցիչների միտքն ու ստեղծագործությունը:

Գիտաժողովի ծրագրից երևում է, թե որքան բազմազան ու ընդգրկուն են Հայաստանի և հայերի քաղաքակրթական ներկայության ու նվաճումների շերտերը՝ պատմություն, մշակույթ, հնագիտություն և ազգագրություն, ինքնություն ու տարածաշրջանային զարգացումներ:

Կարևոր ենք համարում, որ դրանք չեն դիտարկվում մեկուսի, այլ քննարկվում են քաղաքակրթական փոխառնչակցությունների, տարածաշրջանային գործընթացների շարժընթացի ու մարտահրավերների, կովկասյան և մերձավորարևելյան տարածաշրջանի էթնիկ, կրոնական

բազմազանության, հայկական մշակութային ժառանգության, բազմաթիվ այլ համատեքստերում:

Կարևոր ենք համարում նաև այն պատասխանատվությունը, որով գիտաժողովի հարգարժան մասնակիցները մոտեցել են տարբեր հարցերի քննարկմանը: Գիտաժողովում ներառված զեկույցները հենց այդ պատասխանատվության վկայությունն են:

Համոզված եմ, որ հետաքրքիր զեկուցումները, մտքերի փոխանակությունն ու քննարկումները էապես հարստացնելու են հայագիտության ներկայակալը, սկիզբ են տալու նոր գաղափարների, ձևավորելու են հայկական մշակույթի, քաղաքակրթության, պետականության ուսումնասիրության խնդիրների նոր ու հետաքրքիր շրջանակ:

Վստահ եմ, որ այս գիտաժողովը դառնալու է ավանդույթ, և որոշակի պարբերականությամբ Հայաստանում հավաքվելու են մեր պատմության, մշակույթի ու ինքնության խնդիրների ուսումնասիրությամբ հետաքրքրված մասնագետներ աշխարհի բազմաթիվ երկրներից:

Երևանի պետական համալսարանը՝ որպես գիտաժողովի կազմակերպիչ կողմերից մեկը, պատրաստ է իր նպաստը բերելու նման գիտաժողովների կազմակերպմանն ու անցկացմանը, աջակցելու տարբեր հետազոտողների միջև կապերի ձևավորմանն ու ամրապնդմանը: Որպես Մայր բուհ՝ մենք պատրաստ ենք հարթակ դառնալու հայագիտական քննարկումների համար, աջակցելու տարբեր երկրներում գործող հայագետների ջանքերի միավորմանն ու հայագիտության էլ ավելի ակտիվ զարգացմանը:

Մեկ անգամ ևս շնորհավորում եմ բոլորիս միջազգային գիտաժողովի անցկացման կապակցությամբ, գիտաժողովին մաղթում եմ արդյունավետ ու բեղուն աշխատանք:

Վստահ եմ, որ գիտաժողովի արդյունքները նպաստելու են Հայաստանի առջև ծառացած տարբեր խնդիրների լուծմանն ու մարտահրավերների հաղթահարմանը:

**RECTOR OF YEREVAN STATE UNIVERSITY
HOVHANNES HOVHANNISYAN**

Honorable President of the Republic of Armenia,
Honorable President of the National Academy of Sciences of RA,
Esteemed Participants and Guests of the Conference:

On behalf of Yerevan State University and myself, I extend a warm welcome to you all for the international scientific conference titled “Armenia as a Civilizational Crossroad: Historical and Cultural Relations”.

The high professional reputation of the conference participants, along with the diverse geographic representation, underscores the importance and relevance of scientific discussions about Armenia as a vital center of civilization in today’s world.

These discussions are a testament to the efforts and dedication of generations of Armenologists, who have ensured the continuity and advancement of Armenian studies not only in the Republic of Armenia but also in Georgia, Iran, the Russian Federation, the United States, France, and many other countries represented at this conference.

Holding such a conference is especially important in our present time, as Armenia faces significant security challenges. Many views Armenia’s current situation as a civilizational choice, affirming that, throughout centuries and millennia, Armenians aspire to be part of the civilized world—a world to which they have contributed significantly in its formation and establishment. This is a world whose remarkable achievements have been enriched by the thoughts and creativity of the talented representatives of the Armenian people across almost all historical periods.

The conference program highlights the diverse and comprehensive layers of Armenia’s civilizational presence and achievements. These encompass history, culture, archaeology, ethnography, identity, and regional developments.

We believe it is essential to examine these topics not in isolation but within the broader context of civilizational interactions, the trends and challenges of regional processes, the ethnic and religious diversity of the Caucasian and Middle Eastern regions, Armenian cultural heritage, and many other pertinent contexts.

We also recognize the responsibility with which the esteemed participants of this conference have approached the discussion of various issues. The reports

included in this conference are a testament to that dedication and responsibility.

I am confident that the insightful reports, the exchange of ideas, and the discussions will significantly enrich the field of Armenian studies. They will inspire new ideas and create an exciting and diverse framework for exploring Armenian culture, civilization, and statehood.

I am certain that this conference will become a tradition, drawing experts from around the world who are interested in studying the complexities of our history, culture, and identity.

Yerevan State University, as one of the organizing parties of this conference, stands ready to contribute to the organization and execution of such events, supporting the formation and strengthening of connections between researchers worldwide. As the Mother University, we are prepared to serve as a platform for Discussions on Armenian Studies, support the unification of efforts of Armenologists working in various countries, and actively promote the development of Armenian studies.

Once again, I extend my congratulations to all of us on the occasion of this international conference.

I am confident that the outcomes of this gathering will significantly contribute to addressing the various challenges and issues facing Armenia today.

**РЕКТОР ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
УНИВЕРСИТЕТА
ОГАННЕС ОГАННИСЯН**

Многоуважаемый президент Республики Армения!
Многоуважаемый президент Национальной академии наук!
Уважаемые участники и гости конференции!

От имени Ереванского государственного университета и лично от своего имени приветствую проведение международной конференции под названием «Армения как цивилизационный перекресток: историко-культурные связи».

Высокий научный авторитет, как и широкая география участников конференции показывает, что научные обсуждения Армении как важного цивилизационного центра важны и актуальны и в наши дни.

Они являются свидетельством усилий и преданности разных поколений арменоведов, благодаря которым арменоведение непрерывно развивалось не только в Республике Армения, но и в Грузии, Иране, Российской Федерации, США, Франции и в представленных на конференции многочисленных странах.

Проведение подобной научной конференции важно особенно в наши дни, когда перед Арменией стоят серьезные проблемы безопасности, когда выбор Армении по мнению многих является цивилизационным выбором, заявлением о том, что как веками и тысячелетиями, так и сегодня армяне хотят быть частью цивилизованного мира, того мира, в формирование и становление которого внесли большой вклад. Того мира, ряд достижений которого во все исторические эпохи пополняли мысль и творчество талантливых представителей армянского народа.

Программа научной конференции показывает, насколько разнообразными и содержательными могут быть пласты цивилизационного присутствия и достижений Армении и нас, армян: это история, культура, археология и этнография, идентичность и региональные развития.

Считаем важным отметить то обстоятельство, что эти пласты рассматриваются не обособленно, а в контекстах цивилизационных взаимодействий, динамики и вызовов региональных процессов, этнического и религиозного многообразия кавказского и ближневосточного регионов, армянского культурного наследия и в многочисленных других контекстах.

Мы считаем важной ту ответственность, с которой уважаемые участники научной конференции подошли к обсуждению разных вопросов. Включенные в программу научной конференции доклады являются свидетельством именно этой ответственности.

Я уверен, что интересные доклады, обмен мыслями и обсуждения существенно обогатят палитру арменоведения, дадут начало новым идеям, сформируют новый и интересный круг изучаемых вопросов армянской культуры, цивилизации, государственности.

Я убежден, что эта научная конференция станет традицией, и с определенной периодичностью в Армении будут собираться специалисты из многочисленных стран света, которые заинтересованы в изучении проблем нашей истории, культуры и идентичности.

Ереванский государственный университет, как одна из сторон-организаторов конференции, готова внести свой вклад в организацию и проведение подобных научных конференций, готова содействовать формированию и укреплению связей между разными исследователями. Как главный вуз страны мы готовы стать платформой для арменоведческих обсуждений, содействовать объединению усилий арменоведов, действующих в разных странах, и более активному развитию арменоведения.

Еще раз поздравляю всех нас в связи с проведением международной конференции, желаю продуктивной и плодотворной работы!

Я уверен, что результаты конференции будут способствовать решению разных проблем и преодолению вызовов, которые стоят перед Арменией.

**ՀՀ ԱԺ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ, «ԳԱՐԴՄԱՆ-ՇԻՐՎԱՆ-
ՆԱԽԻՋԵՎԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ՎԻԼԵՆ ԳԱՐԻԵԼՅԱՆ**

Մեծարգո՛ նախագահ,
հարգելի՛ հյուրեր

Որպես ԱԺ պատգամավոր և «Գարդման-Շիրվան-Նախիջևան» համահայկական միության նախագահ՝ ողջունում եմ բոլորիդ այս գիտական մեծամասշտաբ նախաձեռնության շրջանակում: Հազարամյակներ ի վեր հայ ժողովուրդը, ապրելով և արարելով Հայկական լեռնաշխարհում, կերտել է իր՝ վերուվարումներով լեցուն պատմությունը և ստեղծել մի ուրույն և անկրկնելի մշակույթ: Սակայն հայոց պատմությունն ու հայկական մշակույթը հանդես չեն գալիս որպես մեկուսի երևույթներ, այլ օրգանապես փոխկապակցված են պատմական ժամանակի տարածաշրջանային և համաշխարհային իրողություններին: Պատմաաշխարհագրական պայմանների և հոգևոր ու աշխարհիկ ընկալունակության բնատուր տաղանդի շնորհիվ Հայաստանը իրապես վերածվել է քաղաքակրթական խաչմերուկի, որտեղ հանդիպել են Արևելքն ու Արևմուտքը: Քաղաքակրթական փոխառնչությունները մեկ կամ երկու օրինակով չէ, որ բնութագրելի են: Դրանք ուղեկցում են պատմության զարգացման ընթացքը Ասորեստանից և Բաբելոնից մինչև Հռոմ և Բյուզանդիա, Արաբական աշխարհից և Իրանից մինչև Եվրոպա և Ռուսաստան: Հայաստանի՝ որպես քաղաքակրթական հատումների կիզակետի նշանակությունն ու կարևորությունը այսօր ավելի քան տեսանելի են:

Քաղաքակրթական առնչությունները միշտ չէ, որ խաղաղ ընթացք են ունեցել, և իր բնույթով ու կենցաղավարությամբ խաղաղասեր և արարող հայ ժողովուրդը մեկ անգամ չէ, որ բախվել է համակեցության անհնարինության պատնեշին: Նոր ժամանակների սկզբին հայոց պետականության բացակայությունը սկսեց նոր մարտահրավերներ ստեղծել հայության համար՝ օրակարգ բերելով հայկական պետության վերականգնման, ինքնիշխանության կերտման տեսլականը՝ ի դեմս այն պայքարի, որ մղեց հայ ժողովուրդը ամբողջ նոր և նորագույն ժամանակներում՝ ապահովելու իր բնականոն կենսագործունեության անօտարելի իրավունքը:

Այդ ժամանակաշրջանն իր հետ բերեց այնպիսի անդարձելի իրողություն, ինչպիսին արևմտահայության ցեղասպանությունն է: Սակայն միայն արևմտահայությանը չէ, որ վիճակված էր կրելու ցեղասպանության դառը

իրողությունը: Հավաքական արևելահայությունը 1905-1906 թթ. հայ-թաթարական բախումներից սկսած կանգնեց թաթարական, հետագայում՝ ադրբեջանական գոյութենական սպառնալիքի առջև, որն արտահայտվեց 1918 թ. սեպտեմբերին Բաքվի հայության կոտորածով, 1918-1919 թթ. Նախիջևանի հայության գրեթե ամբողջական հայրենագրկմամբ, 1920 թ. մարտին Շուշիի հայության կոտորածով և նման այլ իրողություններով, որոնց թվարկումը կարելի է դեռ երկար շարունակել: Խորհրդային «ինտերնացիոնալիզմը» սպասված խաղաղություն այդպես էլ չբերեց, այլ միայն ժամանակավորապես հետաձգեց այն խնդիրների բարձրաձայնումը, որոնց անարդարացի լուծումներն ընկան հայ-ադրբեջանական հակամարտության նորագույն փուլի հիմքում:

20-րդ դարեմուտին հայության հսկայական զանգվածներ կրկին կանգնեցին գոյութենական վտանգի առջև՝ ի դեմս 1988 թ. Սումգայիթի, 1990 թ. Բաքվի, 1992 թ. Մարաղայի և Ադրբեջանի տարածքում հայտնված հայկական կամ հայաբնակ այլ հատվածների էթնոցիդի: 1988-1992 թթ. արևելահայության օրգանական մասը հանդիսացող պատմական Գարդմանի, Շիրվանի և Նախիջևանի հայությունը զոհ դարձավ Ադրբեջանի ռասիստական խտրական քաղաքականությանը՝ ենթարկվելով աննկարագրելի դաժանություններով ուղեկցվող բռնի տեղահանման, հայրենագրկման և ունեգրկման: Դրանք այն հայերի սերունդներն էին, որոնք անչափելի ավանդ էին ունեցել դեռ ցարական ժամանակներում Բաքու քաղաքի կառուցման և կայացման գործում, այն հայերի, ովքեր պայմանավորում էին Բաքվի սոցիալ-տնտեսական զարգացման և ինտելեկտուալ կարողությունների տեսակարար հատվածը, նրանց, ովքեր դարեր առաջ կերտել էին մշակութային անգնահատելի արժեք ներկայացնող Ջուղայի խաչքարերը՝ հայկական հոգևոր կրոնական արժեքային հարստության առհավատչյան: Այժմ Ջուղայի հայկական գերեզմանատան տեղում կառուցված է հրաձգարան: Այս մեկ արձանագրումն իր խորքում ամփոփում է տարածաշրջանում արժեքային համայնապատկերը:

Գարդման-Շիրվան-Նախիջևան համահայկական միությունը լիահույս է, որ այս միջազգային գիտաժողովը կդառնա բռնի տեղահանված հայության ոտնահարված անօտարելի իրավունքների անհապաղ և երաշխավորված վերականգնման խնդրի բարձրաձայնման հարթակ:

**MEMBER OF THE NATIONAL ASSEMBLY OF THE
REPUBLIC OF ARMENIA,
PRESIDENT OF THE “GARDMAN-SHIRVAN-NAKHICHEVAN”
PAN-ARMENIAN UNION
VILEN GABRIELIAN**

Your Excellency, President,
Dear guests,

As a member of the National Assembly and the President of the “Gardman-Shirvan-Nakhichevan” Pan-Armenian Union, I extend a warm welcome to all of you participating in this large-scale scientific initiative. For thousands of years, the Armenian people, living and creating in the Armenian Highlands, have crafted a history rich with both triumphs and challenges, resulting in a unique and distinctive culture. However, Armenian history and culture do not exist as isolated phenomena; rather, they are deeply intertwined with the regional and global realities of historical times. Thanks to its historical-geographical conditions and its natural talent for spiritual and secular receptivity, Armenia has truly become a crossroads of civilizations where the East meets the West. These civilizational exchanges are not limited to a few examples; they span history from Assyria and Babylon to Rome and Byzantium, from the Arab world and Iran to Europe and Russia. The significance of Armenia as a center of civilizational crossings is more apparent than ever today.

Civilizational relations have not always been peaceful, and the peace-loving Armenian people, known for their ceremonial nature and way of life, have often faced barriers to coexistence. At the beginning of modern times, the absence of Armenian statehood created new challenges for Armenians, highlighting the urgent need for the reevaluation of Armenian sovereignty. Throughout modern history, Armenians have fought tirelessly to ensure their inalienable right to a normal life.

That period brought with it irreversible realities, including the genocide of Western Armenians. However, it was not only Western Armenians who faced the bitter reality of genocide. Eastern Armenians collectively faced existential threats beginning with the Armenian-Tatar clashes of 1905-1906. This threat later evolved into the Azerbaijani existential threat, manifested in events such as the massacre of Armenians in Baku in September 1918, the almost complete repatriation of Armenians from Nakhichevan in 1918-1919, and the massacre

of Armenians in Shushi in March 1920. The Soviet era's so-called "internationalism" did not bring the expected peace; instead, it merely postponed addressing the underlying issues, which ultimately fueled the most recent stage of the Armenian-Azerbaijani conflict.

At the turn of the 20th century, Armenians once again faced an existential threat, highlighted by the 1988 Sumgait pogrom, the 1990 Baku pogrom, and the 1992 ethnocide of Armenians in Maragha and other Armenian-inhabited areas in Azerbaijan. From 1988 to 1992, the historical Armenians of Gardman, Shirvan, and Nakhichevan, integral parts of Eastern Armenians, suffered from Azerbaijan's racist and discriminatory policies, enduring forced displacement, repatriation, and dispossession accompanied by indescribable cruelties. These were the generations of Armenians who made immeasurable contributions to the construction and development of the city of Baku even during tsarist times. They were the Armenians who shaped the socio-economic development and intellectual landscape of Baku and those who, centuries ago, built the invaluable cultural treasures of Jugha. The khachkars of Jugha are symbols of Armenian spiritual and religious wealth, yet today, the site of the Jugha Armenian cemetery has been desecrated and turned into a shooting range. This single act epitomizes the broader value panorama in the region.

The Gardman-Shirvan-Nakhichevan Pan-Armenian Union hopes that this international conference will serve as a platform to address the urgent and necessary restoration of the violated inalienable rights of forcibly displaced Armenians.

**ДЕПУТАТ НАЦИОНАЛЬНОГО СОБРАНИЯ,
ПРЕДСЕДАТЕЛЬ ВСЕАРМЯНСКОГО СОЮЗА
«ГАРДМАН-ШИРВАН-НАХИДЖЕВАН»
ВИЛЕН ГАБРИЕЛЯН**

Многоуважаемый президент!
Уважаемые гости!

Как депутат НС и как председатель всеармянского союза «Гардман-Ширван-Нахиджеван» приветствую всех вас в рамках этой научной широкомасштабной инициативы. Тысячелетиями армянский народ, проживая и созидая на Армянском нагорье, создал свою, наполненную взлетами и падениями историю и сотворил уникальную и неповторимую культуру. Однако армянская история и армянская культура не являются обособленными явлениями, а органично переплетены с региональными и всемирными событиями исторического времени. Благодаря историко-географическим условиям и природному таланту к восприятию мирского и духовного начал Армения действительно превратилась в цивилизационный перекресток, где встретились Восток и Запад. Цивилизационные взаимодействия невозможно охарактеризовать одним или двумя примерами. Они сопровождают течение развития истории, начиная с Ассирии и Вавилона до Рима и Византии, с Арабского мира и Ирана до Европы и России. Важность Армении, как эпицентра цивилизационных пересечений, сегодня более чем очевидна.

Цивилизационные связи не всегда имели мирный характер, и мирный и созидательный по своей натуре и по своему образу жизни армянский народ не раз сталкивался с барьером невозможности сосуществования. Отсутствие армянской государственности в начале нового периода создало новые вызовы для армянства, включив в повестку дня восстановление армянской государственности и создание суверенности. В новое и новейшее время армянский народ вел неустанную борьбу, дабы завоевать неотъемлемое право на нормальную жизнь.

Эта эпоха принесла с собой такие необратимые события, как Геноцид западных армян. Однако не только западным армянам было суждено подвергнуться геноциду. Восточные армяне, начиная с армяно-татарских конфликтов 1905-1906 гг., встали перед татарской, впоследствии – перед азербайджанской экзистенциальной опасностью, которая выразилась

резней армян в Баку в 1918 году, почти полным лишением родины нахиджеванских армян в 1918-1919 гг., резней армян в Шуши в марте 1920 г. и другими подобными событиями, перечень которых может быть долгим. Советский «интернационализм» не принес ожидаемого мира, он всего лишь отсрочил озвучивание тех проблем, несправедливое решение которых легло в основу новейшего этапа армяно-азербайджанского конфликта.

На исходе XX века огромные массы армянства вновь встали перед экзистенциальной опасностью: это этноцид 1988 г. в Сумгаите, 1990 г. в Баку, 1992 г. в Мараге и на оказавшихся в составе Азербайджана других армянских или армянонаселенных территориях. Армянство Гардмана, Ширвана и Нахиджевана, которое являлось органической частью восточного армянства, в 1988-1992 гг. стало жертвой расистской дискриминационной политики Азербайджана, подвергшись насильственной и немыслимо жестокой депортации, лишившись родины и имущества. Это потомки тех армян, которые внесли неизмеримый вклад еще в царское время в деле строительства и становления Баку, тех армян, которые формировали социально-экономическое развитие и интеллектуальный ландшафт Баку, тех, которые в прошлые века создали хачкары Джуги, представляющие уникальную ценность – залог армянского духовного религиозного ценностного богатства. В настоящее время на месте армянского кладбища Джуги построено стрельбище. Констатация этого факта в своей глубине отражает ценностную панораму региона.

Всеармянский союз «Гардман-Ширван-Нахиджеван» полон надежды, что эта международная конференция станет платформой для выражения проблемы неотъемлемых поправленных прав насильственно депортированного армянства.

«ԳԵՂԱՐԴ» ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՏՆՕՐԵՆ ՌՈԲԵՐՏ ՂԱԶԱՐՅԱՆ

Հայաստանի Հանրապետության մեծարգո՝ նախագահ, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մեծարգո՝ նախագահ, մեծարգո՝ պետական այրեր, հարգարժան հյուրեր, գիտաժողովի մասնակիցներ, գործընկերներ

Այսօր մենք հավաքվել ենք այստեղ՝ Հայաստանի Հանրապետության և հայության գիտական գլխավոր կենտրոնում՝ քննարկելու Հայաստանի, հայ ժողովրդի քաղաքակրթական ձեռքբերումները և արժեքները, Հայաստանի՝ որպես քաղաքակրթական խաչմերուկի դերը, ինչպես նաև հարևան ժողովուրդների հետ առնչությունները:

Ուրախալի է, որ միջազգային այս գիտաժողովը լայն արձագանք գտավ ոչ միայն հայաստանյան, այլ նաև արտերկրի գիտական շրջանակներում: Այսօր այս տանիքի ներքո հավաքվել են ներկայացուցիչներ ոչ միայն հայաստանյան գիտական, բուհական հաստատություններից, այլև արտասահմանյան շատ երկրների գիտական կենտրոններից և բուհերից: Փաստորեն, այս երկու օրերի ընթացքում Երևանը կդառնա լայնամասշտաբ հայագիտական, հասարակագիտական քննարկումների մեծ, տարածաշրջանային հարթակ:

Ինչպես տեսնում եք, գիտաժողովի համար մենք ընտրել ենք բավականին հավակնոտ խորագիր: Սակայն, միևնույն ժամանակ, այն նաև պարտադրող է, քանի որ խոսքը նախ և առաջ քաղաքակրթական այն խաչմերուկի մասին է, որը կարող է միավորել ժողովուրդներին և պետությունները, կամրջի դեր կատարել տարածաշրջանի համար:

Գիտաժողովը նաև գիտակրթական, գիտավերլուծական մի քանի կենտրոնների իրականացրած համատեղ աշխատանքի արգասիքն է: Դրանք են ՀՀ ԳԱԱ-ն, ԵՊՀ-ն, «Օրբելի» կենտրոնը և «Գեղարդ» գիտավերլուծական նորաստեղծ հիմնադրամը:

Տարածաշրջանը, որտեղ մենք ապրում ենք, հնուց ի վեր եղել է քաղաքակրթական արժեքների առաջացման բնօրրան, որտեղից այդ արժեքները սփռվել են բոլոր ուղղություններով: Իհարկե, այդ ամենից անմասն չեն մնացել նաև Հայկական լեռնաշխարհը և նրա բնիկները՝ հայերը:

Մենք հպարտ ենք, որ ապրում ենք այստեղ, հպարտ ենք, որ ունենք այսպիսի մշակույթ և քաղաքակրթություն, հպարտ ենք, որ հազարամյակներ շարունակ շփում ենք ունեցել տեղի հնագույն քաղաքակրթ

ժողովուրդների հետ, որոնցից մենք շատ բան ենք սովորել և կարողացել ենք նաև նրանց սովորեցնել: Փոխառնչությունների ընթացքում ձևավորել ենք նաև մեր քաղաքակրթական արժեքները, որտեղ էական նշանակություն ունեն նախևառաջ հարգանքը այլ ժողովուրդների և մշակույթների նկատմամբ, սերը դեպի գիտությունը և կրթությունը:

Եթե ուշադրություն դարձնենք գիտաժողովին ներկայացված թեմաներին, ապա պարզ երևում է, որ այն ընդգրկում է տարածաշրջանի պատմությունը հին շրջանից մինչև մեր օրերը: Գիտաժողովի ընթացքում մենք կանդրադառնանք Հայաստանի, Վրաստանի, Իրանի, Թուրքիայի, Ռուսաստանի, մասնավորապես՝ Հյուսիսային Կովկասի և, ընդհանուր առմամբ, Մերձավոր և Միջին Արևելքի ժողովուրդների և պետությունների փոխառնչություններին, տարածաշրջանային գործընթացներին և, իհարկե, մարտահրավերներին: Բավականին մեծ տեղ կհատկացվի մշակութային ժառանգության պահպանման հիմնախնդիրներին:

Ցավոք, այսօր ամբողջ աշխարհում, մասնավորապես՝ մեր տարածաշրջանում, տեղի են ունենում գործընթացներ, որոնք շատ մտահոգիչ են: Տեղի է ունենում պատմական իրադարձությունների, փաստերի կեղծման, ձևախեղման կազմակերպված քաղաքականություն: Փորձ է արվում յուրացնելու, օտարելու տեղաբնիկ ժողովուրդների պատմությունն ու մշակույթը: Կարծում եմ՝ դա միայն պարզ կեղծարարություն չէ, այլ նաև քաղաքակրթական արժեքների դեմ հանցագործություն, փորձ՝ ձևախեղելու նաև սերունդների հիշողությունը, պատմական ժառանգությունը: Գիտաժողովի խնդիրներից մեկն է նաև վերհանել նման դեպքերը, քննարկել և այդ ամենի վրա ուշադրություն հրավիրել:

Հարգելի՛ ներկաներ, լիահույս եմ, որ այս երկու օրերի ընթացքում մենք ոչ միայն կքննարկենք տարաբնույթ հարցեր, այլ նաև կհաստատենք նոր գիտական կապեր, կամրապնդենք հները:

Համոզված եմ, որ գիտաժողովի ընթացքում կայանալիք քննարկումները կլինեն հետաքրքիր ու օգտակար, իսկ գիտաժողովի մթնոլորտը՝ նպաստավոր նոր գաղափարների առաջադրման համար:

Բոլորիս հաջողություն եմ մաղթում:

**DIRECTOR OF “GEGHARD” SCIENTIFIC ANALYTICAL
FOUNDATION
ROBERT GHAZARYAN**

Excellency President of the Republic of Armenia,
Excellency President of the National Academy of Sciences of the Republic
of Armenia,

Esteemed state officials,

Honorable guests, Participants of the conference, Colleagues, today, we have convened at the premier scientific center of the Republic of Armenia, to explore the civilizational achievements and enduring values of Armenia and its people. We aim to explore Armenia's pivotal role as a crossroads of civilizations and its relations with neighboring nations.

It is immensely gratifying that this international conference has resonated not only within the scientific community of Armenia but also on a global scale. Today, we are honored to welcome representatives from Armenian scientific and university institutions, as well as esteemed colleagues from scientific centers and universities across many foreign countries.

Over the next two days, Yerevan will transform into a major regional hub for comprehensive discussions on Armenian and social sciences. Our gathering here underscores the importance of collaboration and dialogue, furthering our understanding and appreciation of Armenia's unique contributions to civilization.

As you can see, we have chosen a rather ambitious title for this conference. However, it is equally compelling, as it centers on the intersection of civilizations—a theme that has the power to unite peoples and states and serve as a bridge for the region.

This conference is the culmination of collaborative efforts by several esteemed scientific and educational institutions, including the National Academy of Sciences of the Republic of Armenia, Yerevan State University, the “Orbeli” Center, and the newly established “Geghard” Scientific Analytical Foundation.

The region in which we live has long been the cradle of civilizational values, spreading these ideals in all directions since ancient times. Naturally, the Armenian highlands and their people, the Armenians, have played a pivotal role in this historical narrative.

We take pride in our homeland, our rich culture, and our longstanding civilization. We are honored to have interacted with the ancient civilized peoples of

this region for millennia, from whom we have learned much and to whom we have imparted much in return. Through these exchanges, we have forged our civilizational values, which emphasize respect for other peoples and cultures, as well as a profound love for science and education.

The conference program encompasses an extensive range of topics, covering the history of our region from ancient times to the present day. Throughout the conference, we will examine interactions, regional processes, and the challenges faced by the peoples and states of Armenia, Georgia, Iran, Turkey, and Russia, particularly the North Caucasus, and the Middle East. A significant focus will be devoted to issues surrounding the preservation of cultural heritage.

Regrettably, we are witnessing troubling trends worldwide, particularly within our region, where there is a concerted effort to rewrite historical events, falsify facts, and transform narratives. There are attempts to appropriate and alienate the history and culture of indigenous peoples. This is not merely a simple forgery but a profound crime against civilizational values and an attempt to distort the memory and historical heritage of generations. One of the key objectives of this conference is to spotlight such cases, engage in meaningful discussion, and draw attention to these critical issues.

Dear Attendees,

I sincerely hope that over these two days, we will not only engage in meaningful discussions on various issues but also forge new scientific connections and strengthen existing ones.

I am confident that the discussions during the conference will be both fascinating and valuable, and I trust that the atmosphere will be conducive to the presentation of innovative ideas.

I wish everyone the best of luck and thank you all for your participation.

**ДИРЕКТОР НАУЧНО-АНАЛИТИЧЕСКОГО ФОНДА «ГЕГАРД»
РОБЕРТ КАЗАРЯН**

Многоуважаемый президент Республики Армения!

Многоуважаемый президент Национальной академии наук Республики Армения!

Многоуважаемые государственные деятели, уважаемые гости, участники научной конференции, коллеги!

Сегодня мы собрались здесь, в главном научном центре Республики Армения и всего армянства, чтобы обсудить цивилизационные достижения и ценности Армении и армянского народа, роль Армении как цивилизационного перекрестка, а также ее связи с соседними народами.

Отрадно, что эта международная конференция нашла широкий отклик не только в армянских, но и в зарубежных научных кругах. Сегодня под этой крышей собрались не только представители научных и вузовских центров Республики Армения, но и представители научных центров и вузов многих зарубежных стран. Фактически, Ереван в течение двух дней станет широкой региональной платформой для арменоведческих и обществоведческих обсуждений.

Как видите, мы выбрали для научной конференции достаточно амбициозное название. Однако в то же время это обязывающее название, так как речь идет прежде всего о том цивилизационном перекрестке, который может объединить народы и государства, сыграть роль моста в регионе.

Научная конференция также является плодом совместной работы некоторых научно-образовательных и научно-аналитических центров. Это НАН РА, ЕГУ, Центр «Орбели» и новосозданный научно-аналитический фонд «Гегард».

Регион, в котором мы живем, с древнейших времен являлся колыбелью формирования цивилизационных ценностей, колыбелью, откуда эти ценности распространились по всем направлениям. Конечно же, свой вклад внесли Армянское нагорье и его автохтонный народ – армяне.

Мы гордимся, что живем здесь, гордимся, что обладаем такой культурой и цивилизацией, гордимся, что тысячелетиями общались с древнейшими цивилизованными народами региона, у которых мы научились многому и которым передали многое. В результате взаимодействий сформировались

наши цивилизационные ценности, среди которых важное значение имеют прежде всего уважение к другим народам и культурам, любовь к науке и образованию.

Если вы обратите внимание на представленные на конференции темы, то можно увидеть, что они включают в себя историю региона с древней эпохи до наших дней. В течение научной конференции мы обсудим взаимосвязи между народами и странами Армении, Грузии, Ирана, Турции, России, в частности Северного Кавказа, и в целом Ближнего и Среднего Востока, обратимся к региональным процессам и конечно же, к тем вызовам, которые стоят перед регионом. Достаточно большое внимание будет уделено проблемам сохранения культурного наследия.

К сожалению, сегодня во всем мире и, в частности, в нашем регионе протекают явления, которые вызывают большое беспокойство. Налицо организованная политика по фальсификации и искажению исторических событий и фактов. Пытаются присвоить и исказить историю и культуру автохтонных народов. Я считаю, что подобные явления – не простая фальсификация, а преступление против цивилизационных ценностей, попытка по искажению памяти поколений и исторического наследия. Одна из задач научной конференции – выявить подобные случаи, обсудить их и привлечь к ним внимание.

Уважаемые присутствующие, я полон надежды, что в течение этих двух дней мы не только обсудим различные вопросы, но и установим новые научные связи и укрепим старые.

Я уверен, что ожидаемые обсуждения во время научной конференции будут интересными и полезными, а атмосфера научной конференции – благоприятной для выдвижения новых идей.

Желаю всем нам удачи!

ՀՈԴԱԾՆԵՐ

ARTICLES

СТАТЬИ

**ՃԳՆԱԺԱՄԵՐԸ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ
ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ՈՐՊԵՍ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅԵՐԻ
ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ
ԽԹԱՆ (2000-ԱԿԱՆՆԵՐ)**

2001 թ. սեպտեմբերի 11-ին ԱՄՆ-ում տեղի ունեցած ահաբեկչությամբ Մերձավոր Արևելքում սկզբնավորված իրարահաջորդ ավերիչ պատերազմներն անշրջելի հետևանք են ունեցել և շարունակելու են ունենալ նաև տեղի հայ համայնքների վրա՝ պատճառ դառնալով հայերի զանգվածային արտահոսքի:

Սփյուռքի հայության գենոֆոնդը փրկելու նպատակով, տեղի ազգային կառույցների հետ փոխհամաձայնությամբ, անհրաժեշտ է բոլոր հայաշատ համայնքներում ստեղծել տեղաբնակ հայերից բաղկացած՝ հայրենադարձությունը խթանող մարմին, որը գաղափարագործնական աշխատանք կիրականացնի հայության շրջանում՝ ուղղորդելով ներգաղթել ցանկացողներին:

Բանալի բառեր՝ սփյուռք, ճգնաժամ, արտագաղթ, ներգաղթ, Հայրենիք, Մերձավոր Արևելք, Սիրիա, Լիբանան:

Հայոց ցեղասպանությունից 100 տարի անց՝ բոլորովին վերջերս՝ 2000-ականներին, տեղի է ունենում Մերձավոր Արևելքի հայկական «Մայր գաղութներ»-ից ամենից զանգվածային արտահոսքը միջազգային ահաբեկիչների սանձազերծած ռազմական գործողությունների, սպանդի ու ավերածությունների հետևանքով:

2003 թ. ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի կողմից Իրաքի վրա հարձակման հետևանքով տեղի հայ համայնքը (1981 թ. հայերի թիվը շուրջ 12.000¹ էր) կրել է զգալի մարդկային և նյութական վնասներ: 2003-2009 թթ. ընթացքում սպանվել է շուրջ 45 իրաքահայ, առևանգվել՝ 38-ը: Հեռանալով Իրաքից՝ հայերն ապաստան են գտել հարևան Սիրիայում, Հորդանանում, արևմուտքի երկրներում, ինչպես նաև՝ Հայաստանում: Ընդհանուր առմամբ, Հայաստան է ժամանել շուրջ 2.000 իրաքահայ²:

¹ Բեժանյան 2020, 70:

² Նույն տեղում, 11-12:

Շուտով՝ 2011 թ. մարտին, միջազգային ահաբեկիչների ներխուժումը Սիրիա սպառնալիք է ստեղծել տեղի 80.000 հայերի համար՝ պատճառ դառնալով երկրից նրանց զանգվածաբար արտագաղթի սկզբնավորման¹: 2012-2018 թթ. ավելի քան 22.000 սիրիահայ է ներգաղթել Հայաստան²: Այդուհանդերձ, շատերը նախընտրել են ժամանակավոր կամ մշտական կարգավիճակով մեկնել այլ երկրներ՝ Լիբանան, Թուրքիա, Հորդանան, Արաբական Միացյալ Էմիրություններ, ԱՄՆ, Կանադա, Շվեդիա, Ավստրալիա և այլուր³:

2011-2017 թթ. Սիրիայի պատերազմի հետևանքով զոհվել է ավելի քան 225 հայ⁴: Պատերազմի պատճառով սկսված արտագաղթի, ինչպես նաև տված զոհերի հետևանքով հայ համայնքը շեշտակի նոսրացել է. 80.000 հայերից մնացել է շուրջ 10.000-ը: Նոսրացել կամ ընդհանրապես հայաթափվել են երբեմնի հայաշատ քաղաքները⁵: Հաշվի առնելով սիրիական պատերազմի ընթացքում հայերին բաժին հասած դաժան փորձությունները՝ ֆիզիկական ու բարոյահոգեբանական զրկանքները, առանձին դեպքերում գոյատևման անհրաժեշտությունից դրդված՝ նրանք նույնիսկ ինքնակամ ընդունել են իսլամ⁶:

Պատերազմական գործողություններից բացի, մերձավորարևելյան սփյուռքի մեր համայնքներն ու հայրենակիցները բախվել են նաև տնտեսական աղետների հետ, որոնք օրակարգային են դարձրել հայրենադարձվելու հարցը:

Այսպես, մերձավորարևելյան հայաշատ Լիբանանն իր աշխարհագրական դիրքով, բազմաէթնիկ և այլադավան կառուցվածքով մշտապես եղել է տարբեր ուժերի թիրախում՝ պատճառ դառնալով այդտեղից նաև հայերի՝ մինչև օրս շարունակվող արտագաղթի: Երկրին հասցված վերջին խոշոր հարվածը 2020 թ. օգոստոսի 4-ի մայրաքաղաք Բեյրութի նավահանգստում տեղի ունեցած տեխնոգեն երկու հզոր պայթյուններն էին, որոնց հետևանքով զոհվել, վիրավորվել, շինությունների փլուզվելու հետևանքով անտուն էր մնացել շուրջ 300.000 մարդ⁷: Սիրիայի պատերազմից առաջ, դրա ընթացքում և հետո լիբանանահայերն արդեն իսկ

¹ Ավագյան 2022(ա), 12-29:

² Սիրիահայերի մասին՝ վիճակագրության լեզվով, 2017, <<http://nyut.am>>:

³ Ավագյան 2023(բ), 61-74: Ավագյան 2022(բ), 63-80:

⁴ Reisyan 2017, <<http://www.groong.org>>. Համաժողովներ, 2017, 1, <<http://www.mindiaspora.am>>: More Than 200..., 2017, <<http://www.groong.org>>:

⁵ Սիմավորյան, Հովյան, Վերանյան 2017, 153:

⁶ Ավագյան 2023(ա), 194-209:

⁷ Khoury, Landau, 2020, <<https://www.haaretz.com>>.

տարերայնորեն հայրենադարձվում էին Հայաստան, սակայն պայթյունը դեպի Հայրենիք հոսքի ստվարացման նոր խթան է դարձել:

2023 թ. հոկտեմբերի 6-ին Համասի կողմից իրականացված հարձակման հետևանքով թեժացած արաբ-իսրայելական հակամարտությունը առիթ է դարձել նաև Իսրայելից հայերի Հայաստան վերադարձի համար:

ՀՀ կառավարությունը, սկզբում ՀՀ սփյուռքի նախարարության (2008-2018 թթ.) գործունեության ընթացքում, ապա՝ 2019 թ. հունիսի 11-ին բացված ՀՀ սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի միջոցով ամեն կերպ սատարել է հայրենադարձվել ցանկացողներին, նպաստել Հայրենիքում ներգաղթյալների սոցիալ-տնտեսական և կրթամշակութային համարկմանը:

Այսպես, ՀՀ կառավարությունը Սիրիայի պատերազմի հետևանքով Հայաստան տեղափոխված սիրիահայերի կենսական նշանակություն ունեցող հարցերը լուծելու նպատակով իրականացրել է մի շարք աջակցության ծրագրեր և միջոցառումներ, որոնք շատ շուտով տարածվել են նաև Հայաստան ժամանած իրաքահայերի, լիբանանահայերի, ինչպես նաև Ուկրաինայի հակամարտության հետևանքով հայրենիք ժամանած հայերի վրա: Դրանք ներառել են կազմակերպչական ծրագրեր, փոփոխություններ իրավական գործառնություններում, փաստաթղթային ձեւակերպումների դյուրացում, կացարանով և բնակարանով ապահովում, աշխատանքով ապահովում, առողջապահական խնդիրներ, կրթական հիմնախնդիրներ, երիտասարդական ծրագրեր, մշակութային միջոցառումներ¹ և այլն:

ՀՀ սփյուռքի նախարարության լուծարումից հետո կառավարության որոշմամբ 2019 թ. հունիսի 11-ից բացված ՀՀ սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակն արդեն 2023 թ. Երևանում բացել է Հայրենադարձության և ինտեգրման առաջին կենտրոնը: Կենտրոնի աշխատակիցը նախապատրաստելու և ուղեկցելու է մեր հայրենակցին հայրենադարձման ողջ ընթացքում՝ նրան ներկայացնելով ու ծանոթացնելով Հայրենիքում իրավական գործընթացներին, կրթական, առողջապահական, մաքսային, զբաղվածության, բիզնես գործունեություն ծավալելու և այլ հարցերին՝ սերտորեն գործակցելով գործընկեր կազմակերպությունների հետ: Կենտրոնն առաջարկում է մշտապես գործող դասընթացներ, սեմինարներ, պոտենցիալ գործատուների հետ շփումներ² և այլն:

¹ Զաքարյան 2018, 569-576:

² Հայրենադարձությունը ցանկալի է, 2023, <<https://verelq.am>>: Երևանում բացվեց..., 2023, <<https://www.primeminister.am>>:

Արդի աշխարհաքաղաքական մարտահրավերներն առավել քան առիթ պետք է դառնան համասփյուռքյան առաջնահերթությունների վերարժևորման՝ գերնպատակ ունենալով պասիվ **հայապահպանությունից** ու անհեռանկար **համայնքապահպանությունից** անցում կատարելու գործնական **հողապահպանություն՝ «Դեպի Երկիր»** կազմակերպված հայրենադարձության և հայրենաշինության:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ավագյան Ք., Սիրիայի հայ համայնքի կրած մարդկային և նյութական վնասները (2012-2018 թթ.), Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 2022(ա), № 1, էջ 12-29:

Ավագյան Ք., Սիրիահայերի արտագաղթը Կանադա (2013-2016 թթ.), Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 2022(բ), №3, էջ 63-80:

Ավագյան Ք., Սիրիայի պատերազմի ընթացքում հայերի կրած զրկանքները (2012-2018 թթ.), Հայոց պատմության հարցեր. գիտական հոդվածների ժողովածու, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, Երևան, 2023(ա), № 2 (27), էջ 194-209:

Ավագյան Ք., Սիրիայի հայերի տեղաշարժը արտերկիր (Լիբանան, Թուրքիա, Հորդանան, ԱՄՆ, Շվեդիա, Ավստրալիա) (2012-2018 թթ.), Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 2023(բ), № 3, էջ 61-74:

Բեժանյան Ա., Կորսված հնարավորություններ. իրաքահայերի հայրենադարձությունը 2003-2008 թթ., Երևան, «Մագաղաթ պլուս» հրատ., 2020, 260 էջ:

Երևանում բացվեց Հայրենադարձության և ինտեգրման առաջին կենտրոնը, 2023, 27 հուլիսի, <<https://www.primeminister.am/hy/press-release/item/2023/07/27/Nikol-Pashinyan/>>:

Զաքարյան Ֆ., Սիրիայի հայ համայնքի հետ տարուող աշխատանքները (2008-2015), «Սուրիոյ հայերը. Գիտաժողովի նիւթեր (24-27 Մայիս, 2015)», խմբ.՝ Անդրանիկ Տազէսեան, Պէյրութ, Haigazian University Press, 2018, էջ 569-576:

Համաժողովներ. Հայաստան-Սփյուռք 6-րդ համաժողով, *Սիրիայի Արաբական Հանրապետությունում ՀՀ դեսպան Արշակ Փոլադյանի*

զեկույցը, «Սիրիահայ համայնքի վիճակը (2011-2017 թթ.)», 2017, 18-20 սեպտեմբերի, էջ 1, <http://www.mindiaspora.am/am/HS_6_hamajoxov>:

Հայրենադարձությունը ցանկալի է. բացվեց Հայրենադարձության և ինտեգրման առաջին կենտրոնը, 2023, 27 հուլիսի, <<https://verelq.am/hy/node/130594>>:

Սիմավորյան Ա., Հովյան Վ., Վերանյան Կ., Իսրայելի, Իրանի, Թուրքիայի, Ադրբեջանի քաղաքականությունը սփյուռքի նկատմամբ, Երևան, «Նորավանք» ԳԿՀ, 2017, 274 էջ:

Սիրիահայերի մասին՝ վիճակագրության լեզվով. մեր հյուրն է «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ի նախագահ Լենա Հալաճյանը, 2017, 27 հունվարի, <<http://nyut.am>>:

Khoury J., Landau N., Massive Beirut Port Blast Kills Over 100, Leaves Thousands Wounded. 2020, August 5, <<https://www.haaretz.com/middle-east-news/2020-08-05/ty-article/massive-explosion-shakes-lebanese-capital-buildings-near-beirut-port-damaged/0000017f-df1e-df7c-a5ff-df7ef53e0000>>.

More Than 200 Ethnic Armenians Killed During Syria War. 2017, September 23, <<http://www.groong.org/news/msg610886.html>>.

Zhirayr Reisyan: One of the Main Victories of the Syrian Army in Recent Years was the City of Deir ez Zor. 2017, September 23, <<http://www.groong.org/news/msg610872.html>>.

THE CRISIS IN THE MIDDLE EAST COUNTRIES AS INCENTIVE OF REPATRIATION FOR THE DIASPORAS' ARMENIANS TO ARMENIA (2000s)

Keywords: diaspora, crisis, emigration, repatriation, Motherland, Middle East, Syria, Lebanon.

Beginning in the 2000s, a series of devastating wars in the Middle East have severely impacted Armenian communities in Iraq, Syria, Lebanon, Israel, and other regions, leading to the most significant exodus of Armenians in recent history. These conflicts have not only resulted in a loss of life and property but also pose a grave threat to the cultural and demographic integrity of the Armenian diaspora. To address this pressing issue and preserve the gene pool of Diaspora Armenians, it is crucial to establish a Repatriation Promotion Body.

This body should consist of local Armenians from the various communities, acting as a vital link between the diaspora and Armenia. Its primary focus would be on conducting explanatory and ideological-practical work, informing community members about the benefits and opportunities of repatriation. This initiative aims to unite and guide those interested in returning to Armenia, fostering a sense of shared identity and purpose.

By engaging local leaders, educators, and cultural figures, the Repatriation Promotion Body can effectively communicate the importance of preserving Armenian heritage and encourage active participation in the repatriation process. This strategic approach will not only strengthen the Armenian presence in the homeland but also revitalize the global Armenian community.

КРИЗИС В СТРАНАХ БЛИЖНЕГО ВОСТОКА КАК СТИМУЛ РЕПАТРИАЦИИ АРМЯН ДИАСПОРЫ В АРМЕНИЮ (2000-ЫЕ ГОДЫ)

Ключевые слова: диаспора, кризис, эмиграция, репатриация, Отечество, Ближний Восток, Сирия, Ливан.

С 2000 года последовательные разрушительные войны на Ближнем Востоке вызвали кризис в армянских общинах (Ирак, Сирия, Ливан, Израиль и т.д.), положив начало массовому исходу армян.

Эти конфликты не только привели к гибели людей и потере имущества, но и представляют серьезную угрозу культурной и демографической целостности армянской диаспоры. Для решения этой насущной проблемы и сохранения генофонда армян диаспоры крайне важно создать Орган по содействию репатриации.

Этот орган должен состоять из местных армян из различных общин и выступать в качестве важного связующего звена между диаспорой и Арменией. Его основное внимание будет уделяться проведению разъяснительной и идеологически-практической работы, информированию членов общины о преимуществах и возможностях репатриации. Цель этой инициативы - содействие тем лицам, которые заинтересованы в возвращении в Армению.

Привлекая местных лидеров, педагогов и деятелей культуры, Орган по содействию репатриации может эффективно донести важность сохранения армянского наследия и поощрять активное участие в процессе репатриации.

**ՇՈՒՇԻԻ ՀԱՅ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՂՆԵՐԻ ԴԵՐԸ
ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԵՐԿՐՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ
ՀԵՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ
(1813-1920 ԹԹ.)**

19-րդ դարի սկզբներից զարգացման ուղին բռնած Շուշին օրեցօր դառնում էր տարածաշրջանի վարչական, քաղաքական, տնտեսական և մշակութային կենտրոն: 19-րդ դարի առաջին կեսին Շուշին առավել շափ հայտնի էր որպես արհեստագործական կենտրոն, որտեղ արտադրված զարդերը, գորգերը, կոշիկները սպառվում էին նաև հարևան գավառներում ու երկրներում:

Բանալի բառեր՝ Շուշի, արդյունաբերություն, առևտուր, երկրներ, գավառներ, տարածաշրջան:

19-րդ դարի 70-80-ական թվականներին Շուշին ներքաշվեց համառուսական շուկայի մեջ: Հայ դրամատերերից շատերն սկսեցին իրենց միջոցները տեղափոխել արտադրության առավել շահավետ ոլորտներ՝ ստեղծելով զանազան գործարաններ ու ֆաբրիկաներ: Նրանք իրենց կապիտալի մի մասը տեղափոխում էին նաև Բաքու, Թիֆլիս, Պետերբուրգ, Թավրիզ, Մադրաս և այլ քաղաքներ՝ դրանով իսկ իրենց նպաստն ունենալով հիշյալ քաղաքների զարգացմանը: Շուշեցի գործարարների մեծ մասը զբաղվում էր բնական մետաքսի արտադրությամբ: Այստեղ պատրաստված մետաքսաթելը և կտորները մեծ համարում ունեին Պարսկաստանում, Մերձավոր Արևելքի երկրներում, Ռուսաստանում, Եվրոպայում: Այդ ամենի սպառման գործում մեծ էր շուշեցի հայ առևտրական ընտանիքների, մասնավորապես Հախումյանների, Թառումյանների, Խանդամիրյանների դերը: Շուշեցի գործարարները սերտ համագործակցում էին նաև արտասահմանյան առևտրաարդյունաբերողների հետ:

19-րդ դարի առաջին կեսին Շուշին առավել շատ հայտնի էր որպես արհեստագործական կենտրոն: 41 արհեստավորական համքարությունների արտադրանքը շուկայական հարաբերությունների տրամաբանությամբ արդեն ապրանքային բնույթ ուներ և սպառվում էր քաղաքի սահմաններից դուրս:

Շուշիում զարգացման բարձր հիմքերի վրա էր գտնվում ոսկերչական և ակնագործական արհեստը, որը հասել էր արվեստի կատարելության: Ոսկերիչներին հումքով բավարարում և նրանց արտադրանքը Ռուսաստանում, Ֆրանսիայում, Միջին Ասիայի և Մերձավոր Արևելքի երկրներում իրացնում էին հայտնի վաճառականներ Ա. Խանդամիրյանը, Ա. Մելիք-Շահնազարյանը, Բ. Սահակյանը և ուրիշներ: 1882 թ. Մոսկվայի ցուցահանդեսին շուշեցի ոսկերիչ Բադամյանը արժանացել է մրցանակի¹:

Տնտեսական վերելքի պայմաններում Շուշիից նոր ճանապարհներ են կառուցվում դեպի Պարտավ, Եվլախ, Գանձակ, Գորիս, Կապան, Նախիջևան, Երևան: Շուշեցի քարագործ, փայտագործ, թիթեղագործ արհեստավորները ոչ միայն կառուցում էին իրենց հայրենի քաղաքը, այլև իրենց արհեստավարժ և ժրաջան աշխատանքով շենացնում էին Այսրկովկասի ինչպես հայկական, այնպես էլ այլազգիների, այդ թվում՝ թյուրքերի, քրդերի բնակավայրերը: Շուշիում գործում էին մի քանի մասնագիտացված ձեռնարկություններ, որոնք զբաղվում էին փայտանյութի մշակման և ստացված արտադրանքն արտասահմանյան երկրներ փոխադրելու գործով: Բրուտագործությունը բերդաքաղաքում այնքան զարգացած էր, որ մեծահարուստներից մեկը՝ Թադևոս Թամիրյանը, որոշել էր քաղաքից դուրս կառուցել կավե խողովակներ (թունգիներ) արտադրող մի գործարան և դրանց միջոցով 17 կմ հեռավորության վրա գտնվող սառնորակ ջուրը հասցնել բնակավայր: Թադևոս Թամիրյանցի նախաձեռնությամբ կառուցվել էր նաև աղյուսի երկու գործարան, որոնց արտադրանքը սպառվում էր նաև Այսրկովկասի տարբեր բնակավայրերում: 1888 թ. քաղաքում կար հինգ կաշեգործարան, որտեղ 60 բանվորներ էին աշխատում²: Կաշվի տարբեր տեսակներ ներկրվում էին Պարսկաստանից, հիմնականում՝ Թավրիզից, ինչպես նաև Նուխիից, Ելիզավետպոլից, Թիֆլիսից: 20-րդ դարի սկզբներին Շուշիում նույնիսկ կար եվրոպական ոճի կոշիկներ կառող բանվորների միություն³:

Առանձնապես հայտնի էին շուշեցի գորգագործները: Շուշիում գործված գորգերն ու կարպետներն աչքի են ընկել բնական գունային բազմազան կառուցվածքով, զարդանախշերի հարստությամբ, պատրաստված արտադրանքի արհեստավարժությամբ: Նրանց արտադրած գորգերը մեծ համարում ունեին Եվրոպայում, Ռուսաստանում և արևելքի երկրներում: Բրոքհաուզ և Եֆրոնի հանրագիտարանում կարդում ենք. «Շուշին

¹ Համբո 1882, 540:

² СМОМПК, 1888, 87.

³ «Ապառաժ», հմ. 18, 1917:

Կովկասում գորգագործության ամենախոշոր կենտրոնն է, որի արտադրությունը սպառվում է նահանգի սահմաններից դուրս շատ հեռու և հասնում է Մոսկվա ու Պետերբուրգ: Մետաքսի գորգերի աշխույժ առևտուր է գնում, որը համարյա բացառապես գտնվում է տեղի հայերի ձեռքին»¹: Մեկ այլ սկզբնաղբյուր ասում է. «Գորգագործության ծավալներով Շուշին էր պատկանում առաջին տեղն ամբողջ Կովկասում»²:

19-րդ դարի վերջերին օտարերկրացիներ էին գալիս Շուշի և իրենց հավաքածուների համար գնում բացառապես հին գորգեր: Շուշիում տարեկան արտադրվում էր 200 000 ռուբլի արժողությամբ գորգ³: 1899 թ. Թիֆլիսում ստեղծված «Կովկասյան տնայնագործական կոմիտե»-ի նախաձեռնությամբ Շուշիում բացվում են գորգագործական դպրոցներ⁴, որոնք նոր ընթացք են հաղորդում Արցախում գորգագործության զարգացմանը: Գորգագործությունը քաղաքի տնտեսության մեջ կարևոր տեղ էր գրավում ու այնքան եկամտաբեր էր, որ 1905 թ. հայ-թաթարական ընդհարումների հետևանքով զոհված շուշեցիների կանանց աշխատանքով ապահովելու համար բարերարների կողմից բացվեց գորգագործարան, որտեղ 120 աշխատակից կար: Գորգագործարանի արտադրած որակյալ 700 գորգեր արտահանվել են եվրոպական երկրներ⁵:

19-րդ դարի 70-80-ական թվականներից հայ դրամատերերից շատերն սկսեցին իրենց միջոցները տեղափոխել արտադրության առավել շահավետ ոլորտներ՝ ստեղծելով զանազան գործարաններ ու ֆաբրիկաներ: 20-րդ դարի սկզբներին Շուշիում կային 570 արհեստանոցներ, ֆաբրիկաներ, արտադրական կենտրոններ⁶: Այդ գործարանների զգալի մասը զբաղվում էր մետաքսի արտադրությամբ: Արցախի հայությունը հնուց ի վեր զբաղվում էր շերամապահությամբ և մետաքսագործությամբ: 1868 թ. Շուշի գավառում կար 490 մետաքսագործական արհեստանոց, որտեղ թողարկվում էր 76 000 ռուբլու արտադրանք⁷: Արդյունաբերական եղանակով մետաքսաթելի արտադրության առաջին փորձերը Արցախում կատարվել են դեռևս 19-րդ դարի կեսերին: Շուշեցի Աղաբաբա և Գրիգոր Խաչատրյաններն ու Կարապետ Շահմուրադյանը 1856-1857 թթ. Վարարակնում հիմնադրեցին մետաքսի ֆաբրիկա, որտեղ աշխատում էին Նուխիից

¹ Энциклопедический словарь Брокгауза и Ефрона, 1904, 25.

² СМОМПК, вып. 11-ый, 1891, 7.

³ СМОМПК, 1891, 39.

⁴ Կարա Մուրա 1901, 516:

⁵ Тер-Саркисянц 2015, 205.

⁶ Тер-Саркисянц 2015, 205.

⁷ История Азербайджана, 1960, 237.

եկած 25-30 հայ բանվորներ: Նույն դարի 60-ական թվականներին շուշեցի վաճառականները, լինելով Մարսել, Լիոն, Միլան, Վենետիկ, Ջենովա քաղաքներում, արտասահմանից օրինակում են մանարանը, մետաքս ոլորող մեքենան և միաժամանակ «ցելլիվսի» եղանակով սկսում են ստանալ առողջ սերմ: Առաջին անգամ արցախցի մետաքսագործի կիսանահապետական աշխատանքին փոխարինելու եկավ շոգու աշխատանքը: 1873 թ. շուշեցի առևտրական Գ. Հարությունյանը քաղաքում հիմնեց մետաքսաօլորման առաջին ֆաբրիկան, և այդպես Ռուսական կայսրության տարածքում առաջին անգամ կիրառվեց բոժոժ չորացնելու հատուկ մեխանիկական սարքավորում: Գ. Հարությունյանի ֆաբրիկան սերտորեն կապված էր «Ա. և Վ. Սապոժնիկովներ», «Ա. Իլյին որդիների հետ և Կ.», «Ե. Ա. Սոկոլիկովա» մետաքսի առևտրով զբաղվող խոշորագույն ընկերությունների հետ¹: 1870-ական թվականներից Արցախում լայն տարածված էր ճապոնական դեղին ցեղի մանր բոժոժ ունեցող հունդը, որին տեղացիները «յապոն» էին անվանում: Այն ծովային ճանապարհով Չինաստանից շուշեցի առևտրականները տեղափոխում էին Հունաստան, իսկ այնտեղից՝ Արցախ: Գյուլչայից, Աղդամից, Աղդաշից, Աղջաբեդուց շերամապահները որակյալ սերմերը ձեռք էին բերում Շուշիից:

19-րդ դարի վերջերին Անդրկովկասում հունդի աճեցման և տարածման գործը կենտրոնացած էր 3 ընտանիքների ձեռքում, որոնցից մեկը՝ Տեր-Գրիգորյանները, շուշեցի էին²: Արդեն 1912 թ. Լեոնային Ղարաբաղում կար 40 մետաքսագործարան, որտեղ աշխատում էր 2735 բանվոր³:

Շուշիում պատրաստված մետաքսաթելը և կտորները մեծ համարում ունեին Պարսկաստանում, Մերձավոր Արևելքի երկրներում, Ռուսաստանում, Եվրոպայում: Ժամանակակիցներից մեկը վկայում է. «Նուխին և Շուշին համարվում էին Անդրկովկասի մետաքսագործության թագավորություն»⁴: Պատահական չէ, որ Շուշիում արտադրված մետաքսը ցուցահանդեսներում բարձր գնահատականների էր արժանանում: 1877 թ. հադրութի Ղուլի Հակոբյանը, շուշեցի Իվան Զոհրաբյանը և Նորշենացի Ավագ Իսախանյանը բացել էին մետաքսագործարան, որի արտադրանքը 1882 թ. Մոսկվայի տոնավաճառում արժանացել է բրոնզե մեդալի, մեկ տարի անց՝ ԱՄՆ-ի Ֆիլադելֆիա քաղաքում՝ ոսկե մեդալի⁵: 1889 թ. նոյեմբերի

¹ Նույն տեղում, 237:

² Բալայան 2011, 187:

³ «Բագովի ծայն», հմ. 53, 1913:

⁴ Желиховская 1901, 32.

⁵ СМОМПК, 1888, 174-175.

12-ին Կովկասյան ցուցահանդեսի մրցանակաբաշխության ժամանակ 48 ոսկե մեդալներից 15-ը բաժին է հասել հայերին, այդ թվում՝ մետաքսագործության ասպարեզում՝ շուշեցի Դանիել Արունյանցին¹: Տեղին է հիշել, որ 19-րդ դարի վերջերին Արցախի մետաքսից են պատրաստվել Փարիզի Ելիսեյան պալատի վարագույրները²: Մետաքսի արտադրությամբ Ռուսաստանի երկրամասերի մեջ Ղարաբաղը գրավում էր 2-րդ տեղը և տալիս էր Անդրկովկասի մետաքսի արտադրության 35 տոկոսը³:

19-րդ դարի երկրորդ կեսին Շուշիի գավառում կային տնայնագործական բնույթի 463 օղեթորման գործարաններ⁴: Առավել մեծ ծավալներ և որակ ապահովելու նպատակով շուշեցի մեծահարուստներ Խուբլարյանները և Սողոմոնյանները որոշեցին օղու և գինու արտադրությունը դնել գործարանային հիմքերի վրա: 1880-ական թվականներին նրանք Աղդամում հիմնում են սպիրտի և գինու գործարաններ, որոնց հիմքերի վրա ստեղծեցին նաև կոնյակի փոքր գործարան⁵: Արցախում արտադրված օղին, սպիրտը և գինին արտահանվում էին Կովկասի քաղաքներ, Ռուսաստան և եվրոպական երկրներ: Միայն Խուբլարյանների և Սողոմոնյանների գործարաններից արտահանվում էր տարեկան 100 000 փուֆ օղի և սպիրտ⁶: Շուշիում միաժամանակ 1891-1895 թթ. կենտրոնացված էին 6 կաշվի, 5 օճառի, 10 ներկարարական և 2 աղյուսի գործարաններ⁷:

Շուշին, Ռուսաստանը և Կովկասը Իրանի հետ կապող տարանցիկ մայրուղիների վրա գտնվելով, վեր է ածվել առևտրական կենտրոնի: Մայրուղիներից մեկը ձգվում էր Հնդկաստանից միջինասիական երկրներ, Պարսկաստան և, Արաքսը հատելով, Խուդափերինի կամրջով անցնում էր Արցախ, հասնում Շուշի, այստեղից էլ ձգվելով՝ մտնում Գանձակ ու Թիֆլիս և, հյուսիսային Կովկասից ճյուղավորվելով, տարածվում ռուսական քաղաքներ: Մեկ այլ մայրուղի էլ ձգվում էր Շուշի-Գորիս-Երևան, այնտեղից էլ՝ Թուրքիա: Դեռևս 18-րդ դարի սկզբներից սկսած՝ հայերն առանցքային դեր ունեին Պարսկաստանի և Ռուսաստանի միջև առևտրական կապերի ընդլայնման գործում: Ժամանակակիցը գրել է. «Վերին դասը պարապում է վաճառականութեամբ Ռուսիայի, Եվրոպայի մի քանի քաղաքների և Պարսկաստանի հետ»⁸:

¹ Ա. Կ., 1889, 703:

² Մկրտչյան 1991, 46:

³ «Заря Востока», но. 1527, 1927.

⁴ Науменко 1903, 363.

⁵ История Азербайджана, 1960, 272.

⁶ «Новое обозрение», но. 1840, 188.

⁷ «Ազգագրական հանդես», 1897, 98; СМОМПК, 1891, 73.

⁸ «Մեղու Հայաստանի», հմ. 11, 1876, 1:

19-րդ դարի սկզբներից Շուշիում սկսեցին գործել նաև մասնագիտացված առևտրական ձեռնարկություններ: Դրանցից ամենախոշորները պատկանում էին Հախումյանների և Թառումյանների գերդաստաններին: Շուշեցի ամենահարուստ գործարարները Հախումյաններն էին, որոնք առևտրական կապեր ունեին Իրանի, Ռուսաստանի, եվրոպական երկրների հետ: Հախումյանները նշված երկրներում ունեին իրենց գործարանները և Ռուսական կայսրության բանկերում ունեին մոտ մեկ միլիոն ռուբլի¹: Թառումյաններն էլ, առևտրական լայն գործունեությունից զատ, հետաքրքրության շրջանակներ էին ընտրել նաև այլ ոլորտներ: 1808 թ. Բաքվի տուրքերի հավաքագրումը 4 տարով տրվել էր Բաբա Թառումյանին²: Նրա ձեռքին էր գտնվում նաև Կասպից ծովի նավթի, ձկան, աղի արտադրության կապալը:

Շուշիում քայլ առ քայլ ձևավորվում էր խոշոր առևտրական կապիտալ, որը հատուկ էր նոր ձևավորվող շուկայական տնտեսությանը: 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբներին Շուշիի շուկաներում և առևտրի կենտրոններում հաճախակի կարելի էր հանդիպել Հնդկաստանի, Թուրքիայի, Պարսկաստանի, Մերձավոր և Միջին արևելքի երկրների, Ռուսաստանի, Այսրկովկասի տարբեր հատվածներից այդտեղ ժամանած առևտրականների: Շուշեցի առևտրականներն էլ իրենց հերթին լինում էին վերոհիշյալ երկրներում: 19-րդ դարի 30-ական թվականների ցարական պաշտոնական աղբյուրները հաստատում են այն իրողությունը, որ հայ առևտրականներն իրենց ձեռքն են առել «ամբողջ Անդրկովկասի առևտուրը»³: Գերմանական «Ալգեմայնե ցայտունգ» թերթը 1846 թ. նոյեմբերի 15-ի համարում գրել է. «Ղարաբաղի գլխավոր քաղաքը՝ Շուշին, առանց չափազանցության, կարելի է համարել Կովկասյան Զիբրալթար»⁴: «Հայկական աշխարհ»-ի թղթակիցը գրել է. «Շուշեցիների գլխավոր պարապմունքն են առևտուր և արուեստներ: Առուտուրը Պարսկաստանի հետ անում են ձեռագործ ապրանքով, շաքարով, թեյով, մետաքսով և բամբակով: Նոյն առուտուրն անում են եվրոպական Լեյպցիգ, Լոնդոն, Մասրոեյլ և Մանչեստր քաղաքների հետ: Բայց շուշեցիների առուտուրի գլխավոր ճիղը տորոն և մետաքսն է, որ ծախում են Մոսկվայի մէջ»⁵:

¹ Լեո 1914, 60:

² ՀԺՊ, 1974, 268:

³ Обзорение Российских владений за Кавказом, 1836, 199.

⁴ «Allgemeine Zeitung», 15 November, 1846.

⁵ «Հայկական աշխարհ», 1874, 38:

1850 թ. Շուշիում կար 493 առևտրական¹, իսկ 1902 թ. դրանց թիվը հասավ 1535-ի²: 19-րդ դարի երկրորդ կեսին Շուշիում գործում էին «Նադեժդա» և «Ռոսիյսկոյե» ընկերությունների գրասենյակները³: Նշանավոր էին նաև «Սյունիք» և «Պատիվ» ընկերությունները: Այստեղ էր գտնվում «Զինգեր»-ի գործակալությունը:

Շուշեցի որոշ առևտրականներ, իրենց գործունեության շրջանակներն ընդլայնելու նպատակով, տեղափոխվել և հաստատվել էին Մոսկվայում, Պետերբուրգում և այլ քաղաքներում: Շուշեցի Սարգիս Ծատուր Դավիթ Օրբելյանն առևտրական լայն գործունեություն էր ծավալել Մադրասում և այդտեղ էլ 1794 թվականին վախճանվել՝ կտակ թողնելով 80 000 հուն (Մադրասի հին դրամ)⁴: 1860–ական թվականներին շուշեցի Գյանջեցյանների ընտանիքը տեղափոխվում է Աղդաշ, այդտեղ կառուցում խանութ, գեղեցիկ և ընդարձակ իջևանատուն, բոժոժ չորացնելու, հակեր կապելու, մետաքսի գործարան⁵: Թիֆլիսում հաստատվել էին Սաֆարյան եղբայրները, Ղևոնդ Այդինյանը, Մոսկվայում՝ Գրիգոր Առաքելովը, Ժամհարյանները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ա. Կ., Ներքին տեսութիւն (Կովկասեան ցուցահանդեսի պարզեաբաշխութիւնը), «Արծազանք», հմ. 43, 19 նոյեմբերի, Թիֆլիս, 1889, հրատ. Արծազանք, էջ 703-704:

«Ազգագրական հանդես», գիրք Բ, Թիֆլիս, 1897, էջ 77-101:

«Ապառաժ», հմ. 18, 20 օգոստոսի, Շուշի, 1917:

«Բագուի ծայն», հմ. 53, 9 մարտի, Բագու, 1913:

Լեօ, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգեւոր դպրոցի, Թիֆլիս, 1914, թեմական դպրոցի հոգաբարձութեան հրատ., 696 էջ:

Կարա Մուրզա, Տնայնագործականների ժողովը, «Ազգագրական հանդես», գիրք 7-8, Թիֆլիս, 1901, 513-517:

Համբօ, Ներքին տեսություն (Մոսկվայի աշխարհանդէսում պարզևստացած հայերը), «Արծազանք», հմ. 35, 17 հոկտեմբերի, Թիֆլիս, 1882, էջ 537-540:

¹ «Кавказ», но. 23, 1850.

² Науменко 1903, 330.

³ «Ազգագրական հանդես», 1897, 112:

⁴ «Մշակ», հմ. 39, 1873, 3:

⁵ Շահունյանց 1873, 3:

Հայկական աշխարհ», հմ. 1-2, ապրիլ-մայիս, Թիֆլիս, Բաքու, Գանձակ, Շուշի, Երևան, 1874, էջ 34-38:

Հարությունյան Հ., Շուշի. Քարաշեն անխոս վկաներ, Ստեփանակերտ, 2013, Սոնա հրատ., 292 էջ:

Հայ ժողովուրդի պատմություն, հ. 5, Երևան, 1974, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 732 էջ:

«Մեղու Հայաստան»-ի, հմ. 11, 20 մարտի, Թիֆլիս, 1876:

Մկրտչյան Շ., Արցախ, Երևան, 1991, Արցախականչ հրատ., 112 էջ:

«Մշակ», հմ. 39, 1873, Թիֆլիս:

Շահունյանց Վ., 1873, 3-«Մշակ», հմ. 35, 13 սեպտեմբերի, Թիֆլիս, 1873, ռուսերենով:

«Заря Востока», но. 1527, Тифлис, 1927.

«Кавказ», но. 23, Тифлис, 1850.

«Кавказский календарь» на 1915 г., Тифлис, 1914, стр. 81–214.

«Новое обозрение», но. 1840, СПб, 1889.

Желиховская В., Кавказ и Закавказье, Москва, 1901, 3-е изд., изд-во К.И. Тихомиров, 139 стр.

История Азербайджана, т. 2, Баку, 1960, изд. АН Аз.ССР, 953 стр.

Науменко Е., Елизаветпольская губерния. Военно-статистическое описание, часть 1, Тифлис, 1903, 418 стр.

Обозрение Российских владений за Кавказом, в статистическом, топографическом и финансовом отношениях, произведенное и изданное по высочайшему соизволению, ч. 1, СПб, 1836, тип. Департамента внешней торговли, 280 стр.

Сборник материалов для описания местностей и племен Кавказа (СМОМПК), вып. 6, Тифлис, 1888, 479 стр., вып. 11, Тифлис, 1891, тип. Канцелярии главноначальствующего гражданского частию на Кавказе, 717 стр.

Сборник материалов для описания местностей и племен Кавказа (СМОМПК), вып. 11, Тифлис, 1891.

Тер-Саркисянц А., Армяне Нагорного Карабаха, история, культура, традиции, Москва, 2015, Изд.во «Русская панорама», 918 стр.

Энциклопедический словарь Брокгауза и Ефрона, том XL, книга 79, СПб, 1904, типография Акц. Общ. Брокгауз-Ефронь, 468 стр.

«Algemeine Zeitung», 15 November, 1846.

THE ROLE OF THE ARMENIAN INDUSTRIALISTS OF SHUSHI IN STRENGTHENING ECONOMIC TIES WITH THE COUNTRIES AND SETTLEMENTS OF THE REGION (1813-1920)

Keywords: Shushi, industry, trade, countries, provinces, region.

Since the beginning of the 19th century, Shushi has gradually become the administrative, political, economic and cultural center of the region. The jewelry, carpets, and shoes produced here were also sold in neighboring provinces and countries.

In the 70s and 80s of the XIX century, many Armenian playwrights began to transfer their funds to more profitable areas of production, establishing various factories. They also moved part of their capital to Baku, Tiflis, St. Petersburg, Tabriz, Madras and other cities, thereby contributing to the development of the aforementioned cities. Most of the Shushi entrepreneurs were engaged in the production of natural silk. Silk products were in great demand in Persia, the Middle East, Russia, and Europe. The role of Armenian entrepreneurs Akhumyans, Tarumyans, Khandamiryans in strengthening economic ties with different countries was great. Thus, a scientific analysis of primary sources and literature allows us to conclude that from 1813 to 1920, Armenian merchants, through economic ties with various provinces and countries, contributed to the development of not only their hometown, but also these countries.

РОЛЬ АРМЯНСКИХ ПРОМЫШЛЕННИКОВ ШУШИ В УКРЕПЛЕНИИ ЭКОНОМИЧЕСКИХ СВЯЗЕЙ СО СТРАНАМИ И НАСЕЛЕННЫМИ ПУНКТАМИ РЕГИОНА (1813-1920 ГГ.)

Ключевые слова: Шуши, промышленность, торговля, страны, провинции, регион.

С начала 19-го века Шуши постепенно становился административным, политическим, экономическим и культурным центром региона. Шуши был также наиболее известен как ремесленный центр. Производимые здесь украшения, ковры, обувь продавались также в соседних провинциях и странах.

В 70-х и 80-х годах XIX века Шуши был вовлечен в общероссийский рынок. Многие армянские предприниматели начали переводить свой капитал в более прибыльные сферы производства, основав различные фабрики и заводы. Они также перевели часть своего капитала в Баку, Тбилиси, Петербург, Тебриз, Мадрас и другие города, тем самым внося свой вклад в развитие вышеупомянутых городов. Большинство шушинских предпринимателей занимались производством натурального шелка. Шелковые изделия пользовались большим спросом в Персии, странах Ближнего Востока, России, Европе. Велика была роль армянских предпринимателей Ахумянов, Тарумянов, Хандамирянов в укреплении экономических связей с разными странами.

Таким образом, научный анализ первоисточников и литературы позволяет сделать вывод, что с 1813 по 1920 год армянские торговцы посредством экономических связей с различными провинциями и странами способствовали развитию не только родного города, но и этих стран.

**ԱՂԻՐԵՋԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԿԵՐՏՈՒՄԸ ԵՎ
ՏԵՂԱԲՆԻԿՈՒԹՅԱՆ ԹԵԶԵՐԻ ԱՌԱՋՔԱՇՈՒՄԸ
1940-ԱԿԱՆ ԹԹ. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ (Ի. Պ. ՊԵՏՐՈՒՇԵՎՍԿԻԻ ՕՐԻՆԱԿՈՎ)**

Հայրենական մեծ պատերազմի տարիներին Խորհրդային Միությունում ակտիվացավ հայրենասիրության վերաբերյալ քարոզչությունը. այս համապետքստում Խորհրդային Ադրբեջանում ինքնության պահանջ դրվեց: Խորհրդային պատմաբաններն առաջ քաշեցին Ադրբեջանի տարածքում թյուրքախոս մուսուլմանական բնակչության տեղաբնիկության, ազգակերպման, էթնիկ ինքնության փնտրությունների հարցերը: Այս հայեցակետն ուներ նպատակ՝ Անդրկովկասի երեք «եղբայրական» հանրապետությունների պատմական անցյալի միջև ընդհանրության, կապի ու հավասարության նշան դնելը, քանի որ

1. Հայրենական մեծ պատերազմում դիմակայելը պահանջում էր նաև միասնականություն, ոգևորող օրինակներ անցյալի հերոսներից:

2. Ադրբեջանցու համար կերպովոլ պատմությունը պետք է կապվեր տեղաբնիկ հայերի և վրացիների հազարամյա պատմությանը, և միայն այդ միջոցով հնարավոր կլիներ հնեցնել ադրբեջանցու պատմությունը: Ասել է թե՛ նորահայտ ադրբեջանական ժողովրդին ևս պետք էր դարձնել հայ և վրաց ժողովուրդներին հասակակից: Ադրբեջանական ժողովրդի պատմությունը ևս պետք է հասցվեր հին ու հնագույն ժամանակներ, մինչև իսկ հայոց պատմության հնագույն շրջանը. նրանք անցյալում պետք է ունենային նույն պատմական ճակատագիրը, իսկ արդեն Հայրենական մեծ պատերազմի ժամանակ, հանուն «խորհրդային հայրենիքի», Խորհրդային ժողովուրդների հետ միասնաբար պետք է պայքարեին պատերազմում:

Եվ, որպեսզի գիտական աշխատանքներն առավել հավաստի լինեին, գործին լծվում են ոչ միայն ադրբեջանցի, այլև Խորհրդային այլ հանրապետությունների հայտնի պատմաբանները: Այդ հարցում կարևորագույն դերակատարում ունեցավ հատկապես հայտնի արևելագետ Իլյա Պավլովիչ Պետրուշևսկին. ըստ այդմ, սույն հեղափոխության կիզակետում Ի. Պետրուշևսկու 1940-ական թթ. Ադրբեջանի պատմության վերաբերյալ աշխատություններն են և դրանցում առաջ քաշված թեզերի քննությունը: Հեղափոխության առարկա են դարձել Պետրուշևսկիի «Велуху́н на́мруом

Ширваншах Ибрагим», «Государства Азербайджана в VI веке», «Из героической борьбы азербайджанского народа в XIII-XIV веках», «История Азербайджана, краткие очерки» և այլ աշխատությունները:

Բանալի բառեր՝ Խորհրդային, Ադրբեջան, պատմագրություն, զեղծարարություն, Հայրենական մեծ պատերազմ, ադրբեջանցի ժողովուրդ, հերոս, «միջնադարյան ադրբեջանցի»:

Խորհրդային պատմաբան, արևելագետ, Լենինգրադի համալսարանի պրոֆեսոր Իլյա Պետրուշևսկին (1898-1977 թթ.) գիտական հանրությանը հայտնի է Անդրկովկասի, Միջին Ասիայի, Իրանի միջնադարյան պատմության, իլխանության շրջանի սոցիալ-տնտեսական հարցերի, ինչպես նաև աղբյուրագիտական արժեքավոր ուսումնասիրություններով:

Մյուս կողմից, սակայն, պակաս հայտնի է Ի. Պետրուշևսկիի գործունեության մյուս՝ «ստվերային» կողմը, որտեղ գիտակ արևելագետը լծված էր պատմական կեղծարարության գործին՝ հմտորեն գործածելով արևելագիտական և պատմագիտական իր հարուստ գիտելիքները և աղբյուրների ու արևելյան լեզուների հրաշալի իմացությունը: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է Խորհրդային Ադրբեջան պետության և «ադրբեջանցի ժողովուրդի» համար պատմության փաստացի հորինվածքին և շարադրմանը: Ուշագրավ է, որ Պետրուշևսկիի վերը նշված գործունեությունը «համընկնում է» մի կարևոր պատմափուլի հետ, երբ անհրաժեշտություն էր առաջացել ստեղծել ԽՍՀՄ հերոս ժողովրդի կերպար՝ հայրենասիրական հերոսական անցյալով: Խոսքը վերաբերում է երկրորդ համաշխարհային պատերազմին, ինչն էլ հրաշալի օգտագործում է Պետրուշևսկին այդ ժամանակաշրջանի իր աշխատություններում¹:

Խորհրդային Միության համար ծանր ժամանակներ էին. Հայրենական մեծ պատերազմն իր բոլոր դրսևորումներով ծանրացել էր ԽՍՀՄ ղեկավարության ուսերին, և, որպեսզի կարողանան դիմակայել համաշխարհային պատերազմի արհավիրքներին, Ստալինը մի շարք հնարքներ էր կիրառում, որոնցից մեկն էլ ԽՍՀՄ ժողովուրդներին հերոսության մղելու փորձն էր² և Խորհրդային ազգերին ու ժողովուրդներին մեկ ամբողջական կերպարի մեջ դիտարկելը: Այլ կերպ ասած՝ անհրաժեշտություն էր առաջացել հայրենասիրության թեզի փաթեթավորմամբ գաղափարական

¹ Петрушевский 1941; Петрушевский 1942; Петрушевский 1949.

² 1941 թ.-ի հուլիսի 3-ին Ստալինը Խորհրդային ժողովրդին ուղղված ռադիոռազմարկի ժամանակ առաջին անգամ գործածում է «Համազգային, հայրենական մեծ պատերազմ» անվանումը:

հենքի վրա համախմբել խորհրդային ժողովուրդների մարդկային ռեսուրսները և դրանց հաղորդելով հայրենասիրական երանգավորում՝ ուղղել ջանքերը «խորհրդային հայրենիքի» պաշտպանությանը: Սակայն այս ճանապարհին հայեցակարգը լուրջ խնդրի առաջ կարող էր կանգնել, քանի որ խորհրդային ոչ բոլոր հանրապետությունները, մասնավորապես՝ Ադրբեջանը, ունեին հնագույն պատմություն, հայրենիքի՝ դարերով արմատացած գաղափար, հայրենիքի պայքարի համար ոգեշնչող ազգային հերոսներ և պատմամշակութային կերպարներ: Այս խնդիրն իր լուծումը գտավ պատմությունից ու պատմական անցյալից զուրկ ադրբեջանցի ժողովրդի համար պատմության հորինմամբ, հարևան ժողովուրդների հերոսական անցյալի դրվագներն ու պատմամշակութային ժառանգության յուրացմամբ, դրանց ադրբեջանականացմամբ: Սա էր համաշխարհային պատերազմի ժամանակ խորհրդային պատմագրության գաղափարախոսական հայեցակարգերից մեկը: Եվ այս հարցում կարևոր դերակատարում է ունենում արևելագետ Իլյա Պետրուշևսկին:

Ինչու՞ հենց Պետրուշևսկին. նախ, որովհետև Պետրուշևսկին շատ լավ ծանոթ էր տարածաշրջանի պատմությանը, երկար տարիներ շփվել էր տեղի բնակչության հետ (1926-1936 թթ.): Նա ավարտել էր Բաքվի համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետը և արաբերեն ու պարսկերեն էր ուսանել Թբիլիսիի Կովկասագիտության ինստիտուտում¹: Այլ կերպ ասած՝ հարցի լուծման համար գործի էր դրվել խորհրդային արևելագիտության «ծանր հրետանին»:

Ինչպես արդեն նշեցինք, քանի որ այդ ժամանակաշրջանում անհրաժեշտություն էր առաջացել խորհրդային հանրապետությունների ժողովուրդներին միասնական ներկայացնելը և «հայրենականի» գաղափարն արդիական ու հրատապ դարձնելը, Պետրուշևսկին, զուգահեռաբար, այս գործը ծառայեցնում է Ադրբեջանի «հերոսական և հայրենասեր ժողովրդի» կերպարի ստեղծմանը. «Այսօր, երբ հզոր սովետական ժողովուրդը հերոսաբար պաշտպանում է իր ազատությունը և պատիվը հիտլերյան մարդակերներից, սովետական պատմաբանների միտքը գնում է Սովետական Միության ժողովուրդների հերոսական անցյալին», «խորհրդային Միության ժողովուրդների մոտ հերոսությունը դաստիարակվել է դարերի ընթացքում, այդ թվում ադրբեջանցի ժողովրդի մոտ. այդ հերոսների խիզախ պատմություններն այսօր վառ օրինակ են Եվ այսպես, անդրադառնալով ԽՍՀՄ ժողովուրդների հերոսական անցյալին, Պետրուշևսկին շեշտում է ադրբեջանցիների անցյալի հերոսների ու հերոսական պատմությունների

¹ <https://relstud-hist.spbu.ru/en/articles/petrushevsky-ilya>

մասին դրվագները: Իր ժամանակի Ադրբեջանի պատմությանն է վերագրում Ադրբեջանի տարածքում նախկինում ձևավորված պետություններն ու իշխանությունները և, ավելին, ադրբեջանական է ներկայացնում այն պետությունները և իշխանությունները, որոնք առաջացել են իրանական Ազարբայջանի տարածքում: Ավելին՝ 3000 տարի առաջ այսօրվա Ադրբեջանի տարածքում ապրած ժողովուրդներին նա համարում է ադրբեջանցիների նախնիները. «Ադրբեջանցիների ամենավաղ նախնիները համարվում են մարերը, կասպերը, ալբանները և այն ցեղերը, որոնք երեք

Պետրուշևսկին խորհրդային մարդու գովքի լույսի ներքո ստեղծում է նաև ադրբեջանցի հերոսին: Նա «Ադրբեջանի պատմությունը» աշխատության հենց նախաբանում ներկայացնում է խորհրդային ադրբեջանցուն՝ նույն ինքը խորհրդային ադրբեջանցու «պատմական հերոսին». «Ադրբեջանական ժողովրդի պատմական անցյալը լի է հրաշալի իրադարձություններով, որը պարտավոր է իմանալ սովետական հերոսը»¹: Նկարագրելով խորհրդային մարդու հայրենասիրական կերպարը՝ Պետրուշևսկին զուգահեռաբար ստեղծում է միջնադարյան ադրբեջանցու կերպարը: Եվ այսպես, որպես ադրբեջանական հերոս է ներկայացվում շիրվանշահ Իբրահիմը (1382-1417 թթ.)²: Խորհրդային պատմաբանը նշում է, որ հայրենասեր շիրվանշահի մեծ ծրագիրն էր ազատագրել Ադրբեջանի մի մասը օտար տիրապետությունից և միավորել ողջ Ադրբեջանը. խոսքը գնում է իրանական Ազարբայջանի և Շիրվանի միավորման մասին, որը ներկայացվում է որպես Ադրբեջան³:

Պետրուշևսկին ադրբեջանցիների անցյալի հերոսների շարքին է դասում 7-րդ դարի կեսերին Դավթակ Քերթոդի կողմից հիշատակվող Ջևանշիր մեծ իշխանին. «Այն բանից հետո, երբ Իրանը դարձավ խալիֆայության հպատակ, իրանցի ֆեոդալները, կորցնելով իրենց հողերը, հավաքվեցին Ադրբեջանում՝ ցանկանալով այստեղ հողեր գրավել: Ջիվանշիրը նրանց ընդառաջ դուրս եկավ և վռնդեց սասանյան ֆեոդալներին ադրբեջանական տարածքներից»⁴:

Խուռամիների (խուռամդինների) հակամուսուլմանական, հակաարաբական ապստամբության առաջնորդ իրանցի Բաբեքին նա ներկայացնում է որպես գյուղացիական ապստամբության ադրբեջանցի առաջնորդ Բաբեկ. «Ադրբեջանցիները իրենց երկար պատմության ընթացքում քիչ

¹ Петрушевский 1941, 5.

² Петрушевский 1942, 33.

³ Петрушевский 1942, 33.

⁴ Петрушевский 1941, 54.

հերոսներ չեն տվել, որոնք կռվել են իրենց հայրենիքի ազատության համար, դրանցից են ալբանացի Զիվանշիրը, գյուղական ապստամբության առաջնորդ Բաբեքը»¹: Պետրուշևսկին ավելի հեռուն է գնում և նշում, որ ադրբեջանցի Բաբեկի կերպարը արտացոլվել է Սասունցի Դավիթ էպոսում. «Անդրկովկասի ժողովուրդները երբեք չմոռացան այդ հերոսական պայքարը անկախության և ազատության համար: Այդ պայքարի մասին առանձին էպիզոդներ մնացին նրանց հիշողությունների մեջ՝ արտացոլվելով ժողովրդական հեքիաթներում, երգերում: Հայաստանում այն արտացոլվել է Սասունցի Դավիթ էպոսում»²:

Բազում հայտնի արևելագետներ և պատմաբաններ³, ինչպես և «Encyclopaedia Iranica» հեղինակավոր հանրագիտարանի⁴ հեղինակները վաղուց ի վեր ապացուցել են, որ Բաբեկը իրանցի էր:

Ադրբեջանականացվելուց չեն խուսափել նաև պարսիկ պոետներ Խաղանի Շիրվանին և Նիզամի Գանջևին⁵: Եվ, որպեսզի հարցեր չառաջանան, թե այդ դեպքում ինչու պոետները չէին ստեղծագործում ադրբեջաներեն (Պետրուշևսկին նշում էր, որ ադրբեջաներենը հնագույն լեզու է), այլ գրում էին պարսկերեն, պատմաբանը նոր հնարքների է դիմում. նա նշում է, որ շիրվանշահերը և այլ ֆեոդալները ստիպում են ադրբեջանցի պոետներին գրել ժողովրդին օտար պարսկերենով⁶, քանի որ իրենք խոսում էին պարսկերեն և որպես ասածի հիմնավորում՝ բերում է մի անհեթեթ օրինակ՝ համեմատելով այս երևույթը հայկական միջավայրում գրաբարի կիրառության հետ՝ նշելով, որ այդ ժամանակահատվածում գրաբարը ևս լայնորեն կիրառվի չէր հասարակության շրջանում այնպես, ինչպես ադրբեջաներենը: Գիտնականը միտումնավոր չի նշում գրաբարի և միջին հայերենի նույն լեզուն լինելու հանգամանքի մասին:

Շարունակելով Ի. Պետրուշևսկիի՝ տվյալ ժամանակահատվածի աշխատությունների ուսումնասիրությունը՝ մենք տեսնում ենք, թե ինչպես է նա օգտագործում հարևան ժողովուրդներին⁷ ադրբեջանական ժողովրդի հերոսական կերպար ստեղծելու համար՝ խոսելով հայ և վրացի ժողովրդների մասին՝ զուգահեռաբար նշելով նաև «ադրբեջանցի» ժողովրդին⁸.

¹ Петрушевский 1942, 5.

² Петрушевский 1941, 73.

³ Encyclopaedia Iranica. Vol. III, 1987, Fasc. 2-3. pp. 224-231.

⁴ <https://www.iranicaonline.org/articles/babak-korrami>

⁵ Петрушевский 1941, 50.

⁶ Петрушевский 1942, 91.

⁷ Петрушевский 1941, 27.

⁸ Петрушевский 1942, 24.

«Շատ ծանր էր մոնղոլական լուծը, ինչպես այլ ժողովուրդների (հայեր վրացիներ, ռուսներ), այնպես էլ ադրբեջանցիների համար, բայց մոնղոլական այդ ծանր լուծը չկարողացավ կոտրել ադրբեջանցիների կամքը և չստիպեց նրանց հրաժարվել պայքարից»¹ կամ «Չնայած հետապնդումներին՝ ադրբեջանցիները չընդհատեցին պայքարը արաբական ֆեոդալների դեմ. այդ պայքարը զգալի էր հատկապես 785 թ., երբ ադրբեջանցիներն ու հայերը ապստամբություն բարձրացրին խալիֆի դեմ»²:

Եվ այսպես, քայլ առ քայլ քարոզելով «հայրենասիրական թեզեր», Պետրուշևսկին հորինում է ադրբեջանցի ժողովուրդ տերմինը. «սովետական պատմաբանների նպատակն է անդրադառնալ Սովետական Միության ժողովուրդների հերոսական անցյալին, այդ թվում՝ ադրբեջանական ժողովրդի»³:

Ուշագրավ է, որ մինչև այսօր ադրբեջանցի գիտնականներն առատորեն հղում են Պետրուշևսկիի հենց այս շրջանի աշխատությունները՝ դրանով փորձելով լեգիտիմիացնել պատմության կեղծարարության նոր դրսևորումները:

Հավելենք, որ Պետրուշևսկին այսօրվա Ադրբեջանի տարածքում ապրող ժողովուրդներին պարզապես անվանում է ադրբեջանցիներ, իսկ այդ հարցում հենց նրանք՝ խորհրդային Ադրբեջանում ապրող ժողովուրդներն, անգամ միակարծիք չէին: Դեռ 1920-ականներին այսօրվա Ադրբեջանի Հանրապետության տարածքում ապրող թյուրքախոս մուսուլմաններն իրենց անվանում էին թուրք կամ Ադրբեջանի թուրք կամ պարզապես մուսուլման: Այստեղ ուշագրավ է նշել, որ մուսավաթական Ադրբեջանի վերնախավը թյուրքական գաղափարախոսության կրողն էր, և այն ավելի ազդեցիկ դարձավ հատկապես այն բանից հետո, երբ 1918 թ. Նուրի փաշան, ով ղեկավարում էր Կովկասի իսլամական բանակը, գրավեց Բաքու քաղաքը⁴: Մուսավաթական Ադրբեջանը, «հողի վրա զգալով» թուրքերի օգնությունը, ավելի «հիմնավոր» դարձրեց թյուրքականության գաղափարախոսության ամրապնդումը Ադրբեջանում: Հասկանալի պատճառներով խորհրդային Միությանը պետք չէր թյուրքական ինքնությամբ Ադրբեջան, և սկսվեց ադրբեջանականության գաղափարախոսության ներմուծումը. եթե 1926 թ.

¹ Петрушевский 1941, 52.

² Петрушевский 1941, 58.

³ Петрушевский 1942, 5.

⁴ Մելիքյան 2018, 97:

Առհասարակ ադրբեջանականության գաղափարախոսության կրողն ու ջատագովը հետագայում դարձավ Հեյդար Ալիևը: Նա երկրի մտավորականներին համոզում էր, որ պետք է սահմանադրության մեջ ներառել ադրբեջանցի եզրույթը, ոչ թե նշել Ադրբեջանի թուրք, կովկասյան թաթարներ կամ այլ անվանումները, որոնք կիրառելի էին նախկինում:

մարդահամարում երկրի բնակչության մեծամասնությունն ինքն իրեն անվանում էր «թուրք», «կովկասյան թաթար» կամ «մուսուլման» ապա 1937 թվականին խորհրդային Ադրբեջանի նոր սահմանադրությամբ առաջին անգամ պետականորեն սահմանվում է ադրբեջանցի եզրույթը, և 1939 թվականի մարդահամարում ստեղծվում է նոր միասնական էթնոհորոնիմ՝ «ադրբեջանցի»¹:

Եզրակացություն

Իլյա Պետրուշևսկու գործունեությունը խորհրդային պատմագիտության ոլորտում վառ օրինակ է, թե ինչպես կարող է գիտական աշխատանքը դառնալ քաղաքական նպատակների գործիք: Հայրենական մեծ պատերազմի ընթացքում խորհրդային Միությունը ձգտում էր ապահովել խորհրդային պետության բազմազգ միասնականությունը, և այդ գործում նորահայտ ադրբեջանցի ժողովրդի համար այս թեզը կիրառելու համար գործընթացին զուգահեռ, Ի. Պետրուշևսկին, գործածելով իր արևելագիտական գիտելիքներն ու հեղինակությունը, ստեղծեց պատմական շփոթ: Վերջինից էլ հետագայում նա կերտեց ադրբեջանցու պատմությունը: Նրա աշխատություններում պատմական փաստերը միտումնավոր ձևափոխվեցին՝ ստեղծելու «ադրբեջանցի ժողովրդի» հերոսական անցյալը, որը նախապես գոյություն չուներ:

Պետրուշևսկին վերագրեց ադրբեջանցիներին այնպիսի պատմական գործիչներ և իրադարձություններ, որոնք իրականում կապ չունեին այդ ժողովրդի հետ: Նա ադրբեջանականացրեց իրանական և կովկասյան պետություններն ու մշակութային գործիչներին, ինչպիսիք են Շիրվանշահերը, Նիզամի Գյանջևին, Խաղանի Շիրվանին և Բաբեկը՝ ներկայացնելով նրանց որպես ադրբեջանական պատմության մաս: Պետրուշևսկու պատմական կեղծիքները նպաստեցին այդ ժամանակաշրջանի խորհրդային գաղափարախոսության ձևավորմանը, որը նպատակ ուներ ներկայացնել ԽՍՀՄ ժողովուրդներին՝ որպես միասնության և հայրենասիրության օրինակ:

Այս մանիպուլյացիաները հետագայում հիմք դարձան Ադրբեջանի ազգային պատմության ձևավորման համար: Եվ այսօր էլ, ներկայացնելով իրենց երկրի պատմությունը, ադրբեջանցի գիտնականները հենվում են Պետրուշևսկու աշխատությունների վրա: Պետրուշևսկու գործը վկայում է,

¹ Գեղամյան, Էլբակյան 2019, 25:

թե ինչպես քաղաքական պահանջները կարող են փոխել պատմության ընկալումը, և ինչպես արհեստականորեն ստեղծված պատմական կերպարները կարող են ազդեցություն ունենալ ազգային ինքնության վրա:

Այսպիսով, խորհրդային պատմաբան Իլյա Պետրուշևսկին փայլուն կերպով լուծեց իր առջև դրված խնդիրը. այն է՝ պատերազմի մեջ գտնվող խորհրդային հանրապետություններից Ադրբեջանին դարձնել համահավասար տարածաշրջանի մյուս հանրապետությունների հետ: Սա է եղել համաշխարհային պատերազմի ժամանակ խորհրդային պատմագրության գաղափարախոսական հայեցակարգերից մեկը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մելիքյան Վ., Պայքար Բաքվի համար (1917 թ. նոյեմբեր - 1918 թ. ապրիլ), Երևան, 2018:

Գեղամյան Վ., Էլբակյան Է., Ժամանակակից Ադրբեջան, Երևան, 2019:
Петрушевский И.П., Из героической борьбы азербайджанского народа в XIII-XIV веках, Баку, 1941.

Петрушевский И.П., История Азербайджана, краткие очерки, Баку, 1941.

Петрушевский И.П., Великий патриот Ширваншах Ибрагим, Баку, 1942.

Петрушевский И.П., Государства Азербайджана, Баку, 1949.

Bahramian A., Hirtenstein S., Gholami R., «Bābak Khurram-Dīn». In Madelung, Wilferd; Daftary Farhad (eds.).

Encyclopaedia Islamica Online, 2013, Brill Online. ISSN 1875-9831; Bosworth C. E., «Azerbaijan IV. Islamic History to 1941». Encyclopaedia Iranica. Vol. III, 1987, Fasc. 2-3.

Էլեկտրոնային գրականություն

<https://relstud-hist.spbu.ru/en/articles/petrushevsky-ilya>

THE CONSTRUCTION OF AZERBAIJANI HISTORY AND THE PROMOTION OF AUTOCHTHONY THEORIES BY SOVIET HISTORIOGRAPHY IN THE 1940S (WITH THE EXAMPLE OF I. P. PETRUSHEVSKY)

Key words: Soviet, Azerbaijan, historiography, falsification, Patriotic war, Azerbaijani nation, hero, “middle-aged Azerbaijani”.

During the Great Patriotic War, propaganda of patriotism was intensified in the Soviet Union. In this context, the demand for identity was put forward in Soviet Azerbaijan. Azerbaijani and Soviet historians from other republics raised the issue of the indigenous population of the Turkic-speaking Muslim population on the territory of Azerbaijan, the search for ethnic identity for the formation of the nation. This concept aimed to establish a sign of community, connection and equality between the historical past of the three republics of Transcaucasia, since

1. Resistance to the world war also required unity and enthusiasm from the heroes of the past.

2. Through the thousand-year history of autochthonous Armenians and Georgians, it would be possible to “olden” the history of Azerbaijanis. In other words, the past history of Armenians, as well as Georgians, is very old, therefore, the recently formed Azerbaijani people, as a nation-people, should also be compared to the first two. The history of the Azerbaijani people should also be transferred to ancient times, up to the most ancient period of Armenian history. They should have had the same historical fate in the past, and already during the Patriotic War they should have fought together with the Soviet people in the war.

And in order for scientific works to be more reliable, not only Azerbaijani but also famous Soviet historians from other republics are involved. One of them is the famous orientalist Ilya Petrushevsky. The object of research in the article is the works of the Soviet historian of the 1940s on the history of Azerbaijan and the study of theses advanced in them. The subject of research was the following works of Petrushevskogo - “Great patriot Shirvansakh Ibrahim”, “States of Azerbaijan in the 15th century”, “From the heroic struggle of the Azerbaijani people in the XIII-XIV centuries”, “History of Azerbaijan, short essays”.

КОНСТРУИРОВАНИЕ ИСТОРИИ АЗЕРБАЙДЖАНА И ПРОПАГАНДА ТЕОРИЙ АВТОХТОННОСТИ СОВЕТСКОЙ ИСТОРИОГРАФИЕЙ В 1940-ЫЕ ГГ. (НА ПРИМЕРЕ И. П. ПЕТРУШЕВСКОГО)

Ключевые слова: Советский Азербайджан, историография, фальсификация, Отечественная война, азербайджанский народ, герой, средневековый «азербайджанец».

В годы Великой Отечественной войны в Советском Союзе усилилась пропаганда патриотизма. В этом контексте в Советском Азербайджане сформировался запрос на приведение истории Азербайджана к общему знаменателю с историей других закавказских стран. Азербайджанские и советские историки из других республик поднимали вопрос о коренном тюркоязычном мусульманском населении на территории Азербайджана и пытались решить проблему поиска этнической идентичности для формирования азербайджанской нации. Целью этой концепции было установление общности, связи и равенства между историческим прошлым трех республик Закавказья, так как:

1. сопротивление в Великой Отечественной войне также требовало единства, энтузиазма и использования образов героев прошлого,

2. посредством тысячелетней истории автохтонных армян и грузин можно было бы «удревнить» историю азербайджанцев. Иными словами, история армян, как и грузин, была очень древней, поэтому историю азербайджанского народа также следует перенести в глубокую древность, вплоть до древнейшего периода армянской истории. Они должны были иметь такую же историческую судьбу в прошлом, и уже во время Отечественной войны они должны были сражаться вместе с советским народом на войне.

А для того, чтобы научные труды были более достоверными, привлекались не только азербайджанские, но и известные советские историки из других республик. Одним из них является известный востоковед Илья Петрушевский. Объектом исследования в статье являются труды советского историка 1940-х годов по истории Азербайджана и

изучение выдвинутых в них тезисов. Предметом исследования стали следующие труды Петрушевского: - «Великий патриот Ширваншах Ибрагим», «Государства Азербайджана в XV веке», «Из героической борьбы азербайджанского народа в XIII-XIV веках», «История Азербайджана, краткие очерки».

ՑԱՐԱԿԱՆ ԲԱՔՈՒՆ ՈՐՊԵՍ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Կուրի ծախ ափից մինչև Ապշերոնյան թերակղզի ընկած տարածքում հայերը բնակություն են հաստատել վաղնջական ժամանակներից: Երկրամասի հայաբնակ բնակավայրերից էր նաև Բաքու քաղաքը, ուր նկատվում էր հայ բնակչության թվի անընդհատ աճ հասկապես 19-րդ դարում: Ապշերոնյան թերակղզում հայերի ներկայության մասին են վկայում ինչպես հայկական, այնպես էլ օտար աղբյուրները: Բավականին խոստում է կովկասագետ Յու. Գազենմեսյանի հիշատակությունը. «Նախկին Կասպիական մարզի ամբողջ բնակչությունից իրենց նախաբնակությունը կարող են ապացուցել միայն հայերն ու ուղիները»¹:

Բանալի բառեր՝ Բաքու, Ռուսաստան, նավթարդյունաբերություն, ձեռնարկատեր, Ա. Մանթաշյանց, բաժնետիրական ընկերություն:

Հայերը Բաքու քաղաքում ապրել են հնուց ի վեր: Հայ բնակչության թիվը քաղաքում աճեց հատկապես ռուսական տիրապետության տարիներին: Պատճառներից մեկը այն էր, որ քաղաքը դարձել էր կայսրության կարևոր տնտեսական կենտրոններից մեկը: Առևտրատնտեսական կապերով կապված լինելով Ռուսաստանի ու Եվրոպայի հետ, ինչպես նաև հասկանալով Բաքվի նավթի արժեքն ու նշանակությունը՝ հայ արդյունաբերողները սկսեցին զբաղվել նաև դրա արդյունահանմամբ: Քաղաքի արդյունաբերական զարգացման գործում հայերը մեծ ներդրում ունեցան:

19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբին Բաքվի խոշոր ձեռնարկատերերի շարքում մեծ թիվ էին կազմում հայ նավթարդյունաբերողները: Նրանցից առավել նշանավորներն ու հայտնիներն էին Ալեքսանդր Մանթաշյանցը, Ղորղանյան եղբայրները, Իսայի և Իվան Փիթոյան եղբայրները, Օրբելյան եղբայրները, Հովհաննես Միրզոյանը, Գևորգ Լիանոսյանը, Արկադի Տեր-Ակոպովը, Ա. Վերմիշյանը, Զ. Մելիքյանը թիֆլիսաբնակ վաճառականներ Բաբանասյանը, Կուկուջանյանը, գեներալ Արշակ Տեր-Ղուկասյանը, ինչպես նաև արցախցիներ Գրիգոր Դիլդարյանը, Մուսայել Շահգեղանյանը, Սամվել Բաղիրյանը, Պողոս, Հակոբ, Արշակ

¹ Ատեփանյան 2015, 222:

և Աբրահամ Ղուկասյան եղբայրները, Գրիգոր և Հովսեփ Թումայան եղբայրները, Առաֆեյան եղբայրները, Սողոմոն և Ներսես Կրասիլնիկյան եղբայրները և այլք: Տնտեսական կյանքի աշխուժացմանը զուգընթաց տեղի հայերը հիմնեցին նաև իրենց գործարանները, ֆաբրիկաներն ու արդյունաբերական շատ ձեռնարկություններ:

Արդեն 1850-1854 թթ. Բաքվի նավթահորերի խոշորագույն վարձակալներ էին թիֆլիսաբնակ վաճառականներ Կուկուջանյանը, Բաբանասյանը և գեներալ Տեր-Ղուկասյանը՝ տարեկան 110 հազ. ռուբլի վարձավճարով, 1854-1863 թթ. Տեր-Ղուկասյանը՝ 117 հազ. ռուբլով, 1863-1867 թթ. Հ. Միրզոյանը 162 հազարով, իսկ 1867-1873 թթ.՝ 136 հազ. ռուբլով¹:

Որոշ ժամանակ անց ցարական կառավարությունն աճուրդի դրեց նավթադաշտերը: 11 հայ անհատներ (Հովհաննես Միրզոյան, Գևորգ Լիանոսյան (Լիանոզյան), Բեժանյան, Օնիկյան, Վերմիշյան, Ծուրինյան, Լալայան, Ղարաբեկյան, Տեր-Հակոբյան, Բաղդասար և Պողոս Սարգսյան եղբայրներ) և մեկ հայկական ընկերություն՝ «Սողաաստնիկի» անվամբ (հիմնադիրներ՝ Բոգդան Դոլուխանյան, Սեմյոն Կվինտո և Մինաս Կաճկաճյան) դարձան նավթահորերի սեփականատերեր²: Նավթային ոլորտում աչքի ընկնող Հովի. Միրզոյանը առաջինն էր, որ 1868 թ. Բաքվի գավառի Սուրախան գյուղում հիմնեց կերոսինի երկու գործարան և ստացավ 260 հազ. ռուբլու 160 հազ. փութ կերոսին, ինչպես նաև առաջինն էր, ով արտահանեց կերոսինը: Նա 1871 թ. Բալախանում հիմնեց առաջին արդյունաբերական հորատանցքը, իսկ 1872 թ.՝ երկրորդը: Վերջինիս մահից հետո 1886 թ. նրա ժառանգները ստեղծեցին «Միրզոյան եղբ. և ընկերներ» նավթարդյունաբերական և առևտրային ընկերությունը³:

Այս համատեքստում պետք է հիշատակել նավթարդյունաբերության «արքա» համարվող Ալեքսանդր Մանթաշյանցին, որն իր շուրջը համախմբեց բոլոր մանր ու մեծ հայ նավթարդյունաբերողներին՝ նավթաբիզնեսի մեջ դառնալով մի առաջնորդ, որի շնորհիվ այսպես կոչված «հայկական նավթ»-ը սկսեց իշխող դիրք գրավել միջազգային շուկայում: Ալ. Մանթաշյանցի շնորհիվ տեղի հայ գործարանատերերը հնարավորություն ունեցան անարգել դուրս գալ համաշխարհային շուկա⁴: 1889 թ. Ալ. Մանթաշյանցը և Մ. Արամյանցը հիմնեցին «Ա. Հ. Մանթաշյանց առևտրային տուն» ընկերությունը: Ալ. Մանթաշյանցի ֆինանսավորմամբ 1907 թ. կառուցվել է

¹ Դադայան 2006, 11:

² Гулишамбаров 1879, 343-344.

³ Դադայան 2006, 15:

⁴ Գասպարյան 2020:

այդ ժամանակի համար աշխարհում ամենաերկար՝ 835 կմ երկարությամբ Բաքու-Բաթում նավթամուղը: Նրան էին պատկանում Բաքվում գտնվող մի շարք տներ, հյուրանոցներ, կալվածքներ, հանքեր, գործարաններ:

1878 թ. Սամվել Բաղիրյանը և Հարություն (Արտեմ) Մադաթյանն արդյունաբերող Բրունո դե Բուրի հետ հիմնեցին «Կասպից ընկերություն» ֆիրման: Նավթաբիզնեսի մեջ առաջատար դիրք էին գրավում նաև շուշեցի Պողոս, Հակոբ, Արշակ և Աբրահամ Ղուկասյան եղբայրները: Վերջիններս, ձեռք բերելով Հ. Մադաթյանի և Ս. Բաղիրյանի մասնաբաժինները, 1887 թ. 2 մլն. ռուբլի հիմնադիր կապիտալով վերածվեցին բաժնետիրական ընկերության, իսկ 1888 թ. Բրունո դե Բուրի մահից հետո դարձան «Կասպից ընկերություն» կոչվող ֆիրմայի լիակատար սեփականատերերը: 1891 թ. Պողոս Ղուկասյանը, իսկ վերջինիս մահից հետո եղբայրը՝ Արշակը, ղեկավարում էին «Բաքվի նավթարդյունաբերողների միությունը»: 1897 թ. Պ. Ղուկասյանը ռուս արդյունաբերող Ս. Յակովլևի հետ միասին 1 մլն. ռուբլի հիմնադիր կապիտալով հիմնեցին «Կասպից խողովակամուղը», որն իր բազմաճյուղ ցանցերով Բաքու քաղաքին մատակարարում էր ջուր: Պ. Ղուկասյանի ջանքերով Բաքվում հիմնվեց նաև մեքենաշինական մեծ գործարան¹:

Բաքվում նույն ժամանակաշրջանում արցախցի Թումայան եղբայրները հիմնեցին «Եղբ. Թումայանց» նավթարդյունաբերական ընկերությունը, իսկ Առաֆեյան և Կրասիլնիկյան եղբայրների նավթարդյունաբերական ընկերությունների միավորմամբ սկսեց գործել «Եղբ. Կրասիլնիկյան և Առաֆեյան» ընկերությունը: Շուշեցի մեկ այլ առևտրաարդյունաբերող՝ Միքայել Արամյանցը, որը Բաքվում զբաղվում էր շաքարի առևտրով, 1884 թ. Գերասիմ Թումայանի, Առաքել Ծատուրյանցի և Առաֆեյան եղբայրների հետ միասին հիմնեց «Առ. Ծատուրյան և մյուսներ» նավթային ընկերությունը, որը տարեկան արտահանում էր 4 մլն. փուֆ (մեկ փուֆը հավասար է 16.3 կգ) նավթ և քսուքային տարբեր յուղեր²:

Արդեն 1889 թ. Բաքվում գրանցված նավթարդյունաբերական 69 ընկերություններից 34-ը հայկական էին, որոնք մրցակցում էին այդ շրջանի հայտնի «Նոբել եղբ.» և «Կասպից-Սևծովյան ընկերություն (Ռոտշիլդ)» ընկերությունների հետ³: 1890 թ. դրությամբ 226 մլն. փուֆ ապշերոնյան նավթի հանույթի 46%-ը պատկանում էր հայերին:

¹ Դադայան 2006, 20:

² Ստեփանյան 2011, 126:

³ Դադայան 2006, 218:

Հայերը իրենց ավանդն ունեին նաև Բաքվի տնտեսության այլ ճյուղերում: 1899 թ. Պ. և Զ. Հակոբյան եղբայրները Պ. Կրոխինի հետ ստեղծեցին նավթարդյունաբերական և մեխանիկական գործարանների մատակարարման «Վուլկան» բաժնետիրական ընկերությունը¹: Նույն թվականին սկսեց գործել Հովհաննես Ադամյանի, Բ. Շխյանցի և Կ. Դունդերի «Ապշերոնի էլեկտրական ընկերություն»-ը²: Մեկ տարի անց Բաքվի լավագույն ճարտարագետներից Կոնստանտին Խատիսյանը Հ. Տեր-Միքայելյանի և Լ. Գինգբուրգի ընկերակցությամբ հիմնեց Բաքվի մեքենաշինական, նավթարդյունաբերական և առևտրային ընկերությունը: Արդեն 1902 թ. Բաքվում գործող 24 ընկերություններից հայկական էին 13-ը, որոնք արդյունահանում էին 203 մլն փուֆ նավթ կամ ընդհանուր քանակի 39%-ը, որից 51.946.779 փուֆը՝ Ալ. Մանթաշյանցը:

Բաքվի նավթարդյունաբերության զարգացման գործում մեծ ներդրում ունեցան Ալեքսանդր Մանթաշյանցի որդի Լևոնը և Գևորգ Լիանոսյանի որդի Ստեփանը: 1907 թ. վերջինս 2 մլն. ռուբլի հիմնադիր կապիտալով Պետերբուրգում ստեղծեց «Գ. Մ. Լիանոսյանի որդիներ» բաժնետիրական ընկերությունը³: Ստեփան Լիանոսյանը Բաքվում ուներ կերոսինի, քսայուղերի գործարան, Կասպից ծովի ափին՝ նավամատույց, 10 վերստ (մեկ վերստը հավասար է 1,06 կմ) երկարությամբ նավթամուղ: Նրա շնորհիվ 1912 թ. Լոնդոնում ստեղծվեց «Ռուսական գլխավոր նավթային կորպորացիա»-ն (Russian General Oil Corporation), որը հնարավորություն տվեց իրականացնել նավթի և նավթամթերքների վաճառքը թե՛ Ռուսաստանում, թե՛ արտասահմանում: Այն աշխարհի երրորդ խոշորագույն նավթարտադրող ընկերությունն էր: Ստեփան Լիանոսյանը համաշխարհային նավթարդյունաբերության առաջնորդը լինելուց զատ, դարձել էր Կասպից ծովի առափնյա գետաբերաններում ձկնամթերք արտադրող ամենախոշոր ձեռնարկատերը⁴:

Բաքվում հայ դրամատերերն ունեին նաև իրենց սեփական նավամատույցներն ու շոգենավերը, որոնք բեռնափոխադրումներ էին կատարում Կասպից ծովում: 1912 թ. Բաքվում նավ ունեցող 66 անհատներից և ընկերությունների սեփականատերերից 14-ը հայեր էին: Նրանց էր պատկանում 24 նավ (դեռևս 16-րդ դարի վերջերին, ըստ Բաքու այցելած եվրոպացի ճանապարհորդ Քրիստոֆեր Բուրոյի, Բաքվում բնակվել է Հակոբ անունով

¹ Ստեփանյան 2011, 143:

² Դադայան 2006, 47:

³ Նշվ. աշխ., 36:

⁴ Նշվ. աշխ., 37:

մի հայ, որը Կասպից ծովի վրա շահագործել է 35 տոննա տարողությամբ նավ): Հատկանշական է, որ տեղի մուսուլման նավատերերն իրենց նավերն անվանում էին հայկական անուններով (Աշուրբեկովի և Ջաֆարովի նավը՝ «Ավետիք», Բաբաշևինը՝ «Մասիս», Մամեդովինը՝ «Արարատ»)¹:

Բացի նավթարդյունաբերությունից, Բաքվում հայերի ձեռքում էր գտնվում նաև ծխախոտի արդյունաբերությունը (Միրզաբեկյանց եղբայրներ, «Ս. Մ. Կարակոզ» ընկերության սեփականատեր Սարգիս Կարազյուզյան, Ավետ Առաքելյանց, Սանամյանց եղբայրներ և ուրիշներ)²: Բաքվում էին գործում Կովկասի հայելիների առաջին ֆաբրիկան (Բոգդան Սարաջյան)³, շոկոլադի գործարանը (Փիլիպոսյանց եղբայրներ), Անդրկովկասում առաջինը համարվող բնական մրգահյութերի և հանքային ջրերի գործարանը (Ստեփան Մելիք-Ղուլամբարյանց): Մեծ էր հայերի ներդրումը նաև Բաքվի ֆինանսավարկային համակարգի ստեղծման և զարգացման գործում⁴:

Զգալի էր հայերի ներդրումն ինչպես քաղաքի տնտեսության, այնպես էլ մշակութային կյանքում ու քաղաքաշինության ոլորտում: Բաքու քաղաքի ճարտարապետական տեսքի ձևավորման գործում մեծ դեր են ունեցել Սանկտ-Պետերբուրգում կրթություն ստացած հայ ճարտարապետներն ու շինարարները: Նրանցից առավել աչքի են ընկել Գաբրիել Տեր-Միքելյանը, Վարդան Սարգսյանը, Հովհաննես Տեր-Հովհաննիսյանը (Քաջազնունի), Ֆրեյդուն Աղալյանը, Աննա Օլթեցյանը, Նիկողայոս Բաևը և ուրիշներ:

Բաքվում նավթարդյունաբերողներ Կրասիլնիկյանների տանը հիմնվել է քաղաքի հայկական թատրոնը, ապա ավելի ուշ կովկասյան թաթար Թադիևը հիմնել է իր թատրոնը, ուր, ի դեպ, հայկական պիեսներ էին նաև բեմադրվում: 1908 թ. ձկնարդյունաբերող Եղիա (Ղազար) Մայիլյանը կառուցել է մուսուլմանական աշխարհում առաջինը համարվող Բաքվի օպերային թատրոնի շենքը⁵: 1910-1912 թթ. Գաբրիել Տեր-Միքելյանը կառուցել է Բաքվի հասարակական հավաքույթի ամառային ակումբը (այժմ՝ Ադրբեջանի ֆիլհարմոնիայի շենքը), 1909 թ.՝ Սադիխով եղբայրների բազմահարկ բնակելի տունը, 1909-1911 թթ.՝ Թադիև եղբայրների տները:

Այսպիսով, 19-րդ դարավերջին, 20-րդ դարասկզբին Բաքվի հայ համայնքը լայն գործունեություն է ծավալել քաղաքական, տնտեսական ու

¹ Ստեփանյան 2011, 42:

² Դադայան 2006, 53:

³ Դադայան 2006, 55: Ստեփանյան 2011, 142:

⁴ Микаелян, Мирзоян 1990.

⁵ Դադայան 2006, 60-61:

մշակութային ոլորտներում և մեծ ազդեցություն է ձեռք բերել Անդրկովկասում: Սակայն 1917 թ. հեղափոխություններից հետո տեղի ունեցած իրադարձությունների հետևանքով Բաքվի հայ արդյունաբերողները կորցրել են իրենց ունեցվածքը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Դադայան Խ., Հայերը և Բաքուն (1850-ական թթ. - 1920 թ.), Երևան, «Նորավանք» ԳԿՀ, 2006, 241 էջ:

Գասպարյան Ա., Կովկասի արքան, 2020, 368 էջ:

Ստեփանյան Գ., Բաքու քաղաքի հայության պատմությունը (պատմա-ժողովրդագրական ուսումնասիրություն), Երևան, 2011, 650 էջ:

Ստեփանյան Գ., Գանձակ-Ելիզավետպոլի նահանգի Նուխի և Արեշ գավառների ու Բաքվի նահանգի հայ բնակչության պատմաժողովրդագրական համառոտ ակնարկ (XIX դարի երկրորդ կես - XX դ. սկիզբ), Արևելագիտության հարցեր, N 9, 2015, էջ 222:

Гулишамбаров Ст., Очерк развития и современное состояние нефтяной промышленности Бакинского района (Сборник сведений о Кавказе, т. VII, Тифлис, 1880г.).

Микаелян В., Мирзоян С., Участие армян в экономической жизни Восточного Закавказья (вторая половина XIX – первые десятилетия XX вв.), Вестник общественных наук АН Арм. ССР, 1990, 2, стр. 74-81.

TSARIST BAKU AS A CENTER OF ARMENIAN INVESTMENTS

Keywords: Baku, Russia, oil industry, entrepreneur, A. Mantashyants, joint-stock company.

Armenians have long inhabited the territory extending from the left bank of the Kura River to the Absheron Peninsula, with Baku emerging as a significant Armenian-populated settlement. In the 19th century, the number of Armenians in Baku increased markedly due to the city's rise as an important economic center within the Russian Empire.

Baku's strategic location facilitated connections with both Russia and Europe, which were crucial for trade and economic development. Recognizing the burgeoning importance of Baku's oil reserves, Armenian industrialists began investing in and engaging with the oil production sector. They played a pivotal role in this burgeoning industry, leveraging their skills and entrepreneurial spirit to capitalize on the city's economic potential.

Armenians not only contributed to the oil industry but also participated in various sectors, including trade, construction, and finance, helping to shape Baku's industrial landscape. Their involvement significantly influenced the city's development, leaving an enduring legacy that contributed to Baku's emergence as a key economic hub. The Armenian community's impact on Baku during this transformative period reflects their resilience and adaptability in the face of changing socio-economic conditions in the region.

ЦАРСКИЙ БАКУ КАК ЦЕНТР АРМЯНСКИХ ИНВЕСТИЦИЙ

Ключевые слова: Баку, Россия, нефтяная промышленность, предприниматель, А. Манташянц, акционерное общество.

Армяне издавна населяли территорию от левобережья Куры до Апшеронского полуострова. Город Баку также был одним из армянонаселенных поселений региона, где наблюдался постоянный рост численности армянского населения, особенно в XIX веке.

Одной из причин было то обстоятельство, что город стал одним из важных экономических центров империи. Будучи связанными с Россией и Европой торгово-экономическими связями, а также понимая ценность и значение бакинской нефти, армянские промышленники стали заниматься и ее добычей. Армяне внесли большой вклад в промышленное развитие города.

Армяне не только внесли свой вклад в нефтяную промышленность, но и участвовали в различных секторах экономики города, включая торговлю, строительство и финансы, помогая формировать промышленный ландшафт Баку. Их участие значительно повлияло на развитие города, оставив непреходящее наследие, которое способствовало становлению Баку как ключевого экономического центра. Влияние армянской общины на Баку в этот преобразующий период отражает ее устойчивость и способность адаптироваться к меняющимся социально-экономическим условиям в регионе.

ԱՐՑԱԽԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Սույն հոդվածում անդրադարձ է կատարվել Արցախի Հանրապետության տարածքում գտնվող իսլամական հուշարձանների հետազոտության, պահպանության խնդիրներին, դրանց ուսումնասիրության պատմությանը: Այս թեման արդիական դարձավ հատկապես 2020 թվականի 44-օրյա պատերազմի հետևանքով ստեղծված իրավիճակի հետևանքով, երբ ադրբեջանական կողմը սկսեց լայնորեն քարոզչական բնույթի կեղծ թեզեր տարածել Արցախի իսլամական մշակութային ժառանգության մասին: Փորձ է արվում միտումնավոր կերպով փոխել հուշարձանների թվագրությունը՝ արհեստականորեն հնացնելով դրանք, կեղծել թվաքանակը՝ դրանց ստեղծման պատմական և մշակութային միջավայրը՝ Արցախը, կտրելով հայկական պատմական և մշակութային միջավայրից:

Բանալի բառեր՝ Արցախ, իսլամական մշակույթ, մզկիթ, իսլամական դամբարան, պահպանություն:

Արցախի մշակութային ժառանգության մասն են կազմում իսլամական հուշարձանները՝ մզկիթները, դամբարանները: Սրանցից խորհրդային տարիներին որոշակի չափով հետազոտվել են գերազանցապես իսլամական դամբարանները: Հետևելով Խորհրդային Ադրբեջանի մշակութային գաղափարախոսությանը և քաղաքականությանը՝ հետազոտողներից շատերը լիարժեք չեն ներկայացրել այս հուշարձանների ստեղծման պատմական միջավայրը, մշակութային փոխազդեցությունները, պատմական Արցախի տարածքներն արհեստականորեն կտրվել են հայկական պատմական և մշակութային միջավայրից, և գրեթե չի դիտարկվել հայկական մշակույթի հետ եղած և ակնառու փոխազդեցությունները:

Խորհրդային տարիներին գրեթե չեն հետազոտվել Արցախի տարածքում գտնվող մզկիթները: Արցախի գյուղական մզկիթներից շատերի արտաքին տեսքն ուղղակի նման է Արցախի տարածքում 19-րդ դարում կառուցված եկեղեցիներին: Այնտեղ գտնվող իսլամական հուշարձաններից շատերն առաջին անգամ նկարագրվել են, լուսանկարվել և հետազոտվել

հայ գիտնականների կողմից: Այս հուշարձանների գիտական օբյեկտիվ հետազոտությունն ունի կարևորագույն նշանակություն:

Արցախի Հանրապետության¹ տարածքում գտնվող հուշարձանների պաշտոնական ցանկն ընդգրկում է ավելի քան 4000 հուշարձան, որոնցից մոտ մեկ տոկոսը մահմեդական են: Դրանք են մզկիթները, մահմեդական դամբարանները, գերեզմանոցները: Այս հուշարձանների զգալի մասը պատկանում է 19-րդ դարավերջին և 20-րդ դարասկզբին, իսկ մնացածն՝ առավելապես 14-17-րդ դարերին: Կան նաև 18-րդ դարի առանձին օրինակներ:

Արցախի Հանրապետության տարածքում գտնվող իսլամական հուշարձանների զգալի մասը գտնվում են նախկին ԼՂԻՄ տարածքից դուրս՝ նախկին ԱդրՍՍՀ Ֆիզուլու, Կուբաթլուի, Ջանգելանի, Աղդամի, Ջեբրայիլի, Լաչինի շրջաններն ընդգրկող տարածքներում²: ԼՂԻՄ տարածքում իսլամական հուշարձաններ փաստված են գերազանցապես Շուշի քաղաքում, ինչպես նաև նախկին Մալիբեյլի գյուղում և Իվանյանում:

Խորհրդային Ադրբեջանի տարածքում գտնվող պատմաճարտարապետական կառույցների ուսումնասիրության պատմությունը սկսվում է 1923 թվականից, երբ հիմնվում է «Ադրբեջանի ուսումնասիրության և հետազոտության ընկերությունը», որի նպատակներից մեկը Ադրբեջանի տարածքում գտնվող բազմաբնույթ հուշարձանների նկարագրությունն էր, նորերի հայտնաբերումը և ուսումնասիրությունը³:

1920-ական թվականներին հետազոտողներին առավելապես հետաքրքրել են Արցախում գտնվող բրոնզ-երկաթեդարյան դամբարանադաշտերը:

Արցախի տարածքում գտնվող իսլամական հուշարձանների ուսումնասիրության հարցում առաջին լուրջ աշխատանքները կատարվել են 1933-1936, 1939-1940 և 1947 թվականներին, երբ առաջին անգամ նկարագրվել, չափագրվել, որոշ դեպքերում նաև պեղվել են, մաքրվել 13-14-րդ դարերով թվագրվող մեկ տասնյակից ավելի իսլամական դամբարաններ Ֆիզուլիի, Կուբաթլուի, Ջանգելանի, Աղդամի շրջաններում⁴:

¹ Վերցված են Արցախի Հանրապետության սահմանները նախքան 2020 թվականի 44-օրյա պատերազմը:

² Արցախի Հանրապետության վարչատարածքային բաժանմամբ այդ հուշարձանները գտնվում են Հադրութի, Մարտակերտի, Քաշաթաղի, Շուշիի, Մարտունու շրջաններում: Աշխարհագրորեն դրանց մեծ մասը գտնվում է Արցախի հարթավայրային և նախալեռնային գոտում՝ բացառյալ Շուշի քաղաքի հուշարձանների:

³ Сафарян 2016, 21.

⁴ Александрович 1927, 3-9; Щелыкин 1943, 79-88; Архитектура Азербайджана эпохи Низами 1947, 157-163.

Գրեթե մինչև 1990-ական թվականներն ադրբեջանական ճարտարապետություն եզրույթի տակ հասկացվել է միմիայն իսլամական մշակութային ժառանգությունը: Ադրբեջանի տարածքում գտնվող քրիստոնեական կառույցները գրեթե դուրս էին մնացել գիտական շրջանառությունից, հազվադեպ են դիտարկվել: Առավելապես խնդիր էր դրված հիմնավորել ադրբեջանական ճարտարապետության տեղն ու դերը Փոքր Ասիայի, Մերձավոր Արևելքի և Անդրկովկասի տարածաշրջաններում, ինչպես նաև ադրբեջանական ճարտարապետության՝ իրանականից առանձին միավոր լինելը¹:

1950-ական թվականներին Ադրբեջանի տարածքում առանձնացվել են մի շարք ճարտարապետական դպրոցներ, որոնցից մեզ համար կարևոր է «Առանի դպրոցը»: Վերջինս ներառում էր Կուր և Արաքս գետերի միջակայքը, նաև՝ Արցախը, թեև նրա մասին ոչ մի խոսք չկա²: Ըստ հետազոտողների՝ հատկապես Առանի ճարտարապետական դպրոցի իսլամական հուշարձանները կրում էին փոխազդեցություն քրիստոնեական մշակույթից³:

Հետազոտողները, տուրք տալով խորհրդային ինտերնացիոնալիզմին, խոսելով փոխազդեցությունների մասին, օգտագործում էին ընդհանրական և չեզոք բնութագրիչներ ունեցող իսլամական/քրիստոնեական մշակույթ եզրերը: Որպես քրիստոնեական ճարտարապետությունից փոխազդեցության գոտի՝ սովորաբար հիշատակվում է Անդրկովկաս եզրույթը կամ Հայաստան/Վրաստան, հայկական/վրացական ճարտարապետություն, միջավայր արտահայտությունները: Սակայն, որպես համեմատական և զուգահեռ օրինակներ, մեջբերվում են գերազանցապես հայկական հուշարձանները, այդ թվում՝ խորհրդային Հայաստանի տարածքից դուրս՝ Անի, Աղթամար և այլն: Ակնառու է, որ հետազոտողներից շատերի մոտ Արաքս և Կուր գետերի միջակայքը առհասարակ կտրված է պատմական, մշակութային միջավայրից, ժամանակաշրջանի իրողություններից⁴:

Եթե 1940-1960-ական թվականների հետազոտողները թեև ընդհանրական, սակայն ուղղակի զուգահեռներ տեսնում էին հայկական հուշարձանների, հայկական ճարտարապետության հետ, ապա, սկսած 1970-ական թվականների վերջերից, տեսնում ենք ուղղակի ընդհանրական հիշատակում քրիստոնեական, իսկ վերջին տարիներին՝ միմիայն աղվանական

¹ Сафарян 2016, 28-29; Памятники архитектуры Азербайджана 1946, 5-7; Саламзаде 1964, 3-7; Бретаницкий 1966, 7-11, 129-137; Усейнов 1963, 5-6.

² Бретаницкий 1966, 469, 493-496.

³ Мамедов 1988, 60-62; Гияси 1991, 229-230, 235.

⁴ Бретаницкий 1961, 227-244.

մշակույթի¹ մասին: Նկատելի է իսլամական հուշարձանների «ադրբեջանականացումը»:

Արցախի տարածքում մզկիթների զգալի մասը թվագրվում են 19-րդ դարավերջով և 20-րդ դարասկզբով, ինչի մասին վկայում են դրանց պատերին ամրացված արաբալեզու շինարարական արձանագրությունները: Այս փաստումը կարևոր է, քանի որ վերջին տարիներին նկատելի է մզկիթների թվագրությունը հնացնելու միտում: Առկա նյութերի հիման վրա կարող ենք փաստել, որ Արցախի Հանրապետության տարածքում 17-րդ դարից ավելի վաղ կառուցված մզկիթներ փաստված չեն:

Արցախի տարածքում գտնվող մզկիթները մինչև 1970-ական թվականները գիտական ուսումնասիրության գրեթե չեն ենթարկվել: Առաջին հերթին սկսել են հետազոտվել Շուշի քաղաքում գտնվող մզկիթները և աղոթատները: Է. Ավալովը Շուշիին նվիրված իր գրքում անդրադարձել է քաղաքի մզկիթներին և դրանց պահպանության խնդիրներին՝ թվարկելով նաև վթարային վիճակում գտնվող թաղային աղոթատները²:

Ադրբեջանական գիտական հանրույթը, սկսած 1980-ական թվականների վերջերից, սկսում է առանձնացնել «Ղարաբաղի մզկիթաշինությունը» և դրան բնորոշ ոճը: Վերջինս ներկայանում է բացառապես Քերբալա Սեֆիխան Ղարաբաղիի և Նրա հետնորդների կողմից կառուցված մզկիթներով³: Վերջիններս ունեն մզկիթներին բնորոշ արտաքին տեսք և տեղային ընդգծված յուրահատկություններ: Դրանք են առջևի եռակամար սրահը, եռանավ սյունազարդ ընդարձակ դահլիճը: Նկատենք, որ եռակամար նախասրահներն իրենց զուգահեռներն ունեն Արցախի միջնադարյան քրիստոնեական ճարտարապետության մեջ (Մեծարանից վանք, Կոշիկ անապատ, Երից Մանկանց վանք):

Արցախի տարածքում գտնվող մզկիթների զգալի մասը, սակայն, գյուղական բնակավայրերում կառուցված պարզ աղոթատներն են: Սրանք ունեն պարզ ճարտարապետություն, գրեթե աչքի չընկնող արտաքին տեսք, իսկ հատակագծում ուղղանկյուն են, մեծամասամբ՝ միանավ: Մզկիթներից շատերի արտաքին տեսքը ուղղակի նման է Արցախի տարածքում հատկապես 19-րդ դարում կառուցված եկեղեցիներին, ինչը ենթադրել է տալիս, որ դրանք ուղղակիորեն ներշնչվել են եկեղեցիներից, չի բացառվում նաև՝ կառուցվել են հայ վարպետների կողմից, որոնց անգամ խորհրդային

¹ Мамедов 1988, 68-76.

² Авалов 1977, 80-106.

³ Фатуллаев 1986, 237, 259.

տարիներին հրավիրում էին շինարարական զանազան աշխատանքներ կատարելու համար¹:

Արցախի գյուղական մզկիթները գրեթե չեն ուսումնասիրվել խորհրդային տարիներին: Դրանցից շատերի մասին չկան փաստացի տվյալներ՝ լուսանկարներ, գծագրեր, սրանց մեծ մասը չի հաշվառվել: Այդ պատճառով մզկիթների պարագայում խնդրահարույց է դրանց քանակի հարցը: Գրեթե չունենք տեղեկություններ խորհրդային տարիներին այդ մզկիթների պահպանության վիճակի մասին: Արցախի տարածքում գտնվող գյուղական մզկիթներից հետազոտվել են միայն Ֆիզուլու շրջանի որոշ մզկիթները, վկայվել է դրանց՝ որպես գյուղական ակումբ և տնտեսական նպատակով կիրառումը²:

Խորհրդային տարիներին բավական մակերեսային աշխատանք է տարվել իսլամական հուշարձանների վրայի արձանագրությունների հավաքագրման և հրատարակման գործում: Այս արձանագրությունները գրված են արաբերենով: Կան նաև անճշտություններ, ինչը նկատել են հայ մասնագետները³:

Առկա տվյալների հիման վրա փաստվում է գլխավորապես առավել հայտնի մզկիթների և դամբարանների վերանորոգումը և ամրակայումը խորհրդային տարիներին: Մնացածի մասին ուղղակի տվյալներ հայտնի չեն:

Արցախի Հանրապետության ձևավորումից հետո Արցախի իշխանությունների հոգածության ներքո հայտնվեցին նաև իսլամական հուշարձանները: Կարևոր է նշել, որ իսլամական հուշարձաններից շատերն առաջին անգամ գիտական ուսումնասիրության են ենթարկվել հայ հետազոտողների կողմից: Արցախի մշակույթի նախարարության կողմից կազմվել էին մի շարք դամբարանների և մզկիթների, այդ թվում՝ գյուղական մզկիթների փաստաթղթերը, պահպանության գոտիները: Արցախի մշակութային ժառանգությանը նվիրված գիտական հրատարակություններում անդրադարձ է կատարվել նաև այդ հուշարձաններին⁴:

Որոշակի քայլեր էին կատարվել նաև հուշարձանների հանրայնացման և պահպանության հարցում: 2010 թվականին ընթացիկ վերանորոգման աշխատանքներ էին կատարվել Աղդամի մզկիթում, վերանորոգվել և բարեկարգվել էին Շահբուլաղի ամրոցը և մզկիթը, Շուշիի Սեփդի մզկիթը,

¹ Կարապետյան 1999, 241:

² Garabaghli 2019, 69-71.

³ Քորթոշյան 2020, 39:

⁴ Կարապետյան 1999, 194, 203-204, 227-228:

իսկ 2019 թվականին ավարտվել էին Շուշիի Վերին մզկիթի հիմնանորոգման աշխատանքները: Հարկ ենք համարում նշել, որ Շահբուլադի, Շուշիի Վերին մզկիթի վերանորոգումից առաջ դրանց շուրջ կատարվել էին հնագիտական պեղումներ, հետազոտվել էր տարածքը:

Իհարկե, աշխատանքների ծավալները մեծ չէին, ինչը պայմանավորված էր առաջին հերթին ֆինանսական հնարավորություններով, կային նաև որոշակի խնդիրներ հուշարձանների պահպանության հարցում, ինչը երբեք չի թաքցվել և հանրայնացվել է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, Երևան, 1999, 248 էջ:

Քորթոյան Բ., Խաչեն-Դորբաստիի դամբարանի արաբերեն արձանագրությունը, Վարձք, N 14, էջ 36-40:

Авалов Э., Архитектура города Шуши и проблемы сохранения его исторического облика, Баку, 1977, 112 с.

Александрович Д., Евлах-Шуша, Известия Азкомстарис, вып. 3, с. 3-23.

Алосманова М., Мечети, сооруженные в XIX веке в Ленкорань-Астаринском регионе Азербайджанской республики, Москва, АМІТ 3 (44), 2018, с. 110-120.

Архитектура Азербайджана эпохи Низами, Москва-Баку, 1947, 444 с.

Бретаницкий Л., Крупкин Э., Мамиконов Л., Мавзолей в сел. Хачен-Дорбатлы, Советская археология, N 4, с. 227-244.

Бретаницкий Л., Зодчество Азербайджана XII-XV веков и его место в архитектуре Переднего Востока, Москва, 1966, 558 с.

Гаджиева С., Памятники культовой архитектуры северо-западного региона Азербайджана и проблемы их сохранения, Москва, АМІТ 2 (19), 2012, с. 2-20.

Мамедов Ф., Архитектурные связи школ зодчеств средневекового Азербайджана, Баку, 1988, 116 с.

Памятники архитектуры Азербайджана. Сборник материалов, Москва-Баку, 1946, 228 с.

Саламзаде А., Архитектура Азербайджана XVI-XIX вв., Баку, 1964, 255 с.

Сафарян В., Фальсификация древней и средневековой истории и культуры Арцаха в азербайджанской историографии, Ереван, 2016, 227 с.

Щеблыкин И., Памятники азербайджанского зодчества эпохи Низами, Баку, 1943, 95 с.

Усейнов М., Бретаницкий Л., Саламзаде А., История архитектуры Азербайджана, Москва, 1963, 395 с.

Фатуллаев Ш., Градостроительство и архитектура Азербайджана XIX-начала XX века, Москва, 1986, 456 с.

Garabaghli R., Monuments of architecture in Fizuli (mosques), Baku, Problems of Arts and Culture: International scientific journal, N 1 (67), 2019, pp. 62-71.

Ruben Hovsepyan (Armenia, Yerevan)

PROBLEMS OF RESEARCH AND PRESERVATION OF ISLAMIC MONUMENTS OF ARTSAKH

Keywords: Artsakh, Islamic culture, mosque, Islamic mausoleum, preservation.

In this article, we will refer to the problems of research and preservation of Islamic monuments in the territory of the Republic of Artsakh, as well as the history of their study. This theme became topical especially as a result of the situation created after the 44-day war of 2020, when the Azerbaijani side began to widely spread false theses of a propaganda nature about the Islamic cultural heritage of Artsakh. An attempt is being made to deliberately change the dating of the monuments by artificially making them more ancient, to falsify their number, the historical and cultural environment of their creation, cutting off Artsakh from the Armenian historical and cultural environment.

Islamic monuments - mosques, tombs - are part of Artsakh cultural heritage. During the Soviet years, the Islamic tombs were investigated to a certain extent. Following the cultural ideology and policy of Soviet Azerbaijan, most of the researchers did not fully present the historical environment of the creation of these monuments, as well as the cultural interactions. The historical territories of Artsakh were artificially cut off from the Armenian historical and cultural environment, and the outstanding interactions with the Armenian culture were hardly observed.

During the Soviet years, the mosques in the territory of Artsakh were hardly investigated. The appearance of many of the village mosques in Artsakh is just similar to the churches built in the 19th century in Artsakh. Many of the Islamic monuments in the territory of Artsakh were described, photographed and researched by Armenian scientists for the first time. An objective scientific study of these monuments is of the utmost importance.

Рубен Овсепян (Армения, Ереван)

ПРОБЛЕМЫ ИССЛЕДОВАНИЯ И СОХРАНЕНИЯ ИСЛАМСКИХ ПАМЯТНИКОВ АРЦАХА

Ключевые слова: Арцах, исламская культура, мечети, исламские мавзолеи, сохранение.

В этой статье мы коснемся проблем исследования и сохранения исламских памятников на территории Республики Арцах, а также истории их изучения. Эта тема стала особенно актуальной в результате ситуации, сложившейся после 44-дневной войны 2020 года, когда азербайджанская сторона начала широко распространять ложные тезисы пропагандистского характера об исламском культурном наследии Арцаха. Предпринимается попытка сознательно изменить датировку памятников, искусственно состарив их, изменить их реальное количество, историко-культурную среду их создания, отрезав Арцах от армянской историко-культурной среды.

Исламские памятники – мечети, гробницы – являются частью культурного наследия Арцаха. В советские годы исламские могилы в определенной степени исследовались. Следуя культурной идеологии и политике Советского Азербайджана, большинство исследователей не в полной мере представляли историческую среду создания этих памятников, а также межкультурные взаимосвязи. Территория исторического Арцаха была искусственно отрезана от армянской историко-культурной среды, почти не рассматривались вопросы взаимосвязи с армянской культурной средой.

В советские годы мечети на территории Арцаха практически не исследовались. Внешний вид многих сельских мечетей Арцаха очень похож на церкви, построенные в 19 веке в Арцахе. Многие исламские памятники на территории Арцаха впервые были описаны, сфотографированы и исследованы армянскими учеными. Объективное научное изучение этих памятников имеет первостепенное значение.

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՊԱՆԹՅՈՒՐՔԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ

Այսրկովկասը կամ Հարավային Կովկասը իր աշխարհագրական դիրքով, կոմունիկացիոն հնարավորություններով, հարուստ մշակույթով և քաղաքական ու տնտեսական ներուժով կարևոր նշանակություն է ունեցել Օսմանյան կայսրության համար: Հարավային Կովկասի դերն ու նշանակությունն ավելի բարձրացավ պանթյուրքիզմի գաղափարների ձևավորման շրջանից սկսած, երբ Օսմանյան կայսրությունում առաջին պարկերացումները, ապա՝ նաև քաղաքականությունը մշակվեց «արտաքին թյուրքերի» նկատմամբ:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել պանթյուրքական ծրագրերի համարեքստում Հարավային Կովկասի նկատմամբ Թուրքիայի քաղաքականության ձևավորման հիմքերը, ինչպես նաև ցույց տալ պանթյուրքիզմի գաղափարախոսության փոխակերպումների ազդեցությունը Թուրքիայի քաղաքականության վրա: Նպատակին հասնելու համար առանձնացրել ենք երկու հարցադրում՝ ա) ինչ ազդեցություն է ունեցել պանթյուրքիզմի գաղափարախոսությունը Թուրքիայի հարավկովկասյան քաղաքականության ձևավորման վրա բ) ինչպիսի փոխակերպումների է ենթարկվել պանթյուրքիզմի գաղափարախոսությունը և դրան զուգահեռ՝ Թուրքիայի հարավկովկասյան քաղաքականությունը:

Բանալի բառեր՝ պանթյուրքիզմ, Թուրքիա, Հարավային Կովկաս, թյուրքախոս պետություններ, թյուրքական ինտեգրացիա:

Պանթյուրքիզմի գաղափարախոսությունը ձևավորվել է 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին նախ Ցարական Ռուսաստանում, ապա՝ Օսմանյան կայսրությունում: Գաղափարախոսության երկու հեղինակները՝ Յուսուֆ Աքսուրան և Հիյա Գյոքալիլը, ներկայացրին երկու ծրագիր, որոնք 20-րդ դարի առաջին տասնամյակներին փոխլրացրին միմյանց և դարձան պանթյուրքիզմի վարդապետության հիմքը: Յ. Աքսուրան իր «Քաղաքականության երեք ձև» հոդվածով առաջ քաշեց պանթյուրքիզմի քաղաքական ծրագիրը¹: Նա քննադատում էր օսմանիզմի և պանիսլամիզմի

¹ Akçura 1976.

քաղաքականությունը և Օսմանյան կայսրության համար իրատեսական էր համարում պանթյուրքիզմի քաղաքականությունը¹: Ջիյա Գյոքալփը պանթյուրքիզմի մշակութային ծրագրի հեղինակն է և իր «Թյուրքականության հիմունքներ» աշխատության մեջ քննարկում է Օսմանյան կայսրությունում ձևավորված ներքին խնդիրներն ու «օսմանյանի» ու «թուրքականի» ընկալումները²:

Պանթյուրքիզմի գաղափարները Օսմանյան կայսրությունում լայնորեն տարածվեցին երիտթուրքերի իշխանության գալուց հետո (1908-1909 թթ.): Ինչպես Աբդուլ Համիդ 2-րդի (1876-1909 թթ.), այնպես էլ երիտթուրքերի համար առաջնային քաղաքական ծրագիրը կայսրության տարածքային ամբողջականության պահպանման խնդիրն էր: Բալկանյան պատերազմներից հետո, երբ Օսմանյան կայսրությունը կորցրեց եվրոպական բոլոր տարածքները, բացի Ադրիանապոլսի շրջանից, երիտթուրքերը թեքվեցին դեպի թյուրքականացման ու ազգայնականացման ծրագրերը³: Այլ կերպ՝ նրանք իրենց հայացքն ուղղեցին դեպի արևելք՝ դեպի թյուրքախոս աշխարհ: Պանթյուրքիզմի գաղափարները պետական քաղաքականության մակարդակի բարձրացվեցին երիտթուրքերի իշխանության տարիներին և Առաջին համաշխարհային պատերազմի շրջանում կայսրության պաշտոնական գաղափարախոսության մասը կազմեցին: Նպատակն էր ձևավորել «Մեծ Թուրան» պետությունը՝ միավորելով Կովկասի և Կենտրոնական Ասիայի թյուրքախոս ժողովուրդներին⁴: Այդու՝ ձևավորվեց Հարավային Կովկասի նկատմամբ օսմանյան պետական քաղաքականությունը՝ այն դիտարկելով հիմնական կամուրջը կամ ճանապարհը դեպի Կենտրոնական Ասիա:

Երիտթուրքական կառավարությունը Հարավային Կովկասի նկատմամբ վերահսկողություն հաստատելու առաջին քայլերը ձեռնարկեց Առաջին համաշխարհային պատերազմի սկզբից, սակայն հաջողությունների չհասավ: Պատերազմի վերջին փուլում, երբ Ռուսաստանում տեղի էր ունեցել հոկտեմբերյան հեղաշրջումը, օսմանյան զորքերը 1918 թ. սեպտեմբերին կարողացան հասնել մինչև Բաքու, սակայն կարճ ժամանակ անց՝ հոկտեմբերի 30-ին, Օսմանյան կայսրությունը ստորագրեց Մուդրոսի զինադադարը, որով կապիտուլյացվեց և ստիպված եղավ հեռանալ Հարավային Կովկասից: Սա կարող ենք համարել առաջին փուլը, երբ Թուրքիան

¹ Minasyan 2022, 53-65.

² Gökalp 2019.

³ Ülker 2005, 622.

⁴ Հաբևանդ 1993.

պանթյուրքական ծրագրերով փորձում էր հաստատվել տարածաշրջանում, սակայն ձախողվեց:

1920-30-ական թթ. սկսվեց պանթյուրքիզմի գաղափարախոսության կերպափոխությունների շրջանը, որը շարունակվեց մինչև 1980-ական թթ.: Այս շրջանն աչքի է ընկնում մի շարք զարգացումներով, որոնք հիմնականում վերաբերվում են Թուրքիայի ներքաղաքական համակարգում պանթյուրքիզմի գաղափարախոսության ամրապնդմանը: Պանթյուրքիզմի հայտնի մասնագետ Զ. Լանդաուի բնորոշմամբ 1920-30-ական թթ. պանթյուրքիզմի գաղափարների զարգացման լատենտ շրջանն էր, «մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմի շրջանը, երբ նոր հույսեր առաջացան արտաքին թյուրքերի մոտ և Թուրքիայի ներսում պանթյուրքական շրջանակները վերականգնեցին լավատեսությունն ու գործողությունը»¹: Այս գաղափարների կենսունակության մասին է վկայում այն, որ դրանք վերելք ապրեցին Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին²: Այս շրջանում կրկին կարևորվեց Հարավային Կովկասի նշանակությունը, երբ Թուրքիայում սկսեցին բարձրաձայնել պանթյուրքական ծրագրերի մասին: 1950-ական թթ. նկատելի դարձավ Թուրքիայի քաղաքական համակարգում պանթյուրքիզմի գաղափարների ինստիտուցիոնալացման գործընթացը: Այս առումով, թերևս, կարևոր քայլ հանդիսացավ «Ազգայնական շարժում» կուսակցության ստեղծումը 1969 թ., որը պանթյուրքիզմի գաղափարների կրողն էր³: Սա կարող ենք համարել պանթյուրքիզմի գաղափարների կերպափոխության երկրորդ փուլը, որին բնորոշ էր պետության ներսում ինստիտուցիոնալացման գործընթացը: Ընդհանրապես այս գաղափարախոսության՝ արտաքին քաղաքականության՝ ներառյալ Հարավային Կովկասը, մաս չկազմելը պայմանավորված էր ԽՍՀՄ գոյությամբ:

Պանթյուրքիզմի գաղափարների կերպափոխության երրորդ փուլը սկսվեց ԽՍՀՄ փլուզմամբ, երբ դրանք կրկին սկսեցին վերելք ապրել: Նախորդ տասնամյակների հետ համեմատած՝ Թուրքիան առաջին անգամ իրատեսական հնարավորություն ստացավ հարաբերություններ հաստատելու թյուրքախոս պետությունների հետ: Թուրքիայի նախագահ Թ. Օզալը խոսում էր Ադրիատիկից մինչև Չինական մեծ պատ ձգվող թյուրքական աշխարհի մասին, իսկ վարչապետ Ս. Դեմիրելը նշում էր «իսկայական թյուրքական աշխարհի ծագման մասին» և «21-րդ դարն

¹ Landau 1981, 77.

² Lüdke 2023, 1-24.

³ Մինասյան 2018, 166-169:

անվանում էր թյուրքերի դար»¹: Այս շրջանից սկսած՝ թե՛ պանթյուրքիզմի ծրագրերի համատեքստում, թե՛ Թուրքիայի արտաքին քաղաքական ռազմավարություններում կարևորվեց Հարավային Կովկասում ազդեցության հասնելու քաղաքականությունը: Մյուս կողմից, առաջին զգացմունքային արձագանքներից հետո Թուրքիայի ղեկավարությունը նախաձեռնեց տարբեր կառույցների ու մեխանիզմների ձևավորումը, որոնց միջոցով փաստացի սկսվեց պանթյուրքական գաղափարների ինստիտուցիոնալացման գործընթացը, երբ պանթյուրքիզմը և դրա կերպափոխությունները կազմեցին պաշտոնական գաղափարախոսության մասը:

1990-ական թթ. սկզբին Թուրքիան հիմնականում քարոզում էր թյուրքախոս պետությունների հետ ունեցած պատմական, լեզվական, էթնիկական, մշակութային և կրոնական ընդհանրությունները: Այս հիմքերով Թուրքիան մի շարք կառույցներ հիմնադրեց և միջոցառումներ նախաձեռնեց, որոնցից կարևոր էին թյուրքախոս պետությունների գագաթնաժողովների կազմակերպումը, «Թյուրքական համագործակցության և զարգացման գործակալության» (Türk İşbirliği ve Koordinasyon Ajansı-TİKA) և «Թյուրքական մշակույթի միջազգային կազմակերպության» (Uluslararası Türk Kültürü Teşkilati- TÜRKSOY) հիմնադրումը: Թուրքիայի առաջնային նպատակներից է մշակութային և էթնոլեզվական ընդհանուր տարածության ստեղծումը, իսկ վերջնանպատակը՝ քաղաքական և ռազմաքաղաքական միավորի ձևավորումը: Նման ծրագրերի իրականացման համար, առաջին հերթին աշխարհագրական առումով, առանձնանում է Հարավային Կովկասը, որը կամուրջի դեր է կատարում Թուրքիայի և Կենտրոնական Ասիայի միջև:

Հարավային Կովկասում Թուրքիան առանձնահատուկ հարաբերություններ հաստատեց Ադրբեջանի հետ, ինչը պայմանավորված էր երկու հիմնական հանգամանքով՝ ա) Ադրբեջանը տարածաշրջանի միակ թյուրքախոս պետությունն է, հետևաբար թե՛ պանթյուրքական ծրագրերի համատեքստում և թե՛ ընդհանրապես թուրքական ազդեցության տարածման հիմնական հենարանն է, բ) համընկնում էին Թուրքիայի և Ադրբեջանի ռազմավարական շահերը, ընդ որում՝ ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական: Արդյունքում Թուրքիան բազմաողորտ համագործակցություն սկսեց Ադրբեջանի հետ²: Երկու երկրների հարաբերություններում կարևոր էր գաղափարական բաղադրիչը, որը Հեյդար Ալիևի առաջարկով ձևակերպվեց «մեկ ազգ, երկու պետություն» կարգախոսով: Ադրբեջանը

¹ Yükselen 2020, 186-189.

² Ibrahimov 2015, 83-100.

թյուրքախոս պետություններից ամենաակտիվ մասնակցությունն է ցուցաբերում Թուրքիայի բոլոր նախաձեռնություններին, որոնց շարքում առաջինը պետք է նշել թյուրքախոս պետությունների գազաթնաժողովները, որոնք այս ձևաչափով անցկացվեցին մինչև 2009 թ.: Այդ թվին Նախիջևանում տեղի ունեցած գազաթնաժողովի արդյունքում ստեղծվեց Թյուրքական խորհուրդը, որի նպատակն էր համաթյուրքական գաղափարների ու տեսլականների շուրջ սերտացնել թյուրքախոս պետությունների միջև համագործակցությունը: 44-օրյա պատերազմից հետո Թուրքիան ու Ադրբեջանը սկսեցին ակտիվորեն խոսել թյուրքական աշխարհի մասին: 2021 թ. Թյուրքական խորհուրդը վերանվանվեց «Թյուրքական պետությունների կազմակերպություն», որի գլխավորությամբ առաջ քաշվեց թյուրքական ինտեգրացիայի գաղափարը: «Տեսլական-2040» փաստաթղթում մատնանշված են ինտեգրացիայի ուղղությունները՝ կրթամշակութային, տեղեկատվական, տնտեսական, ինչպես նաև ձևակերպված են քաղաքական ու ռազմաքաղաքական ինտեգրացիայի հիմքերը¹:

1990-ական թթ. սկզբից Թուրքիան տարբեր ոլորտներում հարաբերություններ հաստատեց նաև Վրաստանի հետ: Նախորդ տասնամյակների ընթացքում թուրք-վրացական հարաբերությունները կայուն զարգացել են մի շարք ոլորտներում, ինչպիսիք են էներգետիկ, պաշտպանության, անվտանգության և առևտրի ոլորտները. դրանք հասել են ստրատեգիական համագործակցության մակարդակի²: Թուրքիայի և Ադրբեջանի միջև առկա ռազմավարական ծրագրերում, ինչպիսիք են Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղը, Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազամուղը և Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղին, Վրաստանն ունի կարևոր դերակատարում³: Այսինքն՝ Վրաստանի դերը Թուրքիայի համար կարևոր է դեպի Կասպից ծովի ավազան ելք ունենալու համար, որը կապված է տարածաշրջանում հարուստ էներգետիկ ռեսուրսների առկայության, Արևելք-Արևմուտք տրանսպորտային ծրագրի իրականացման և թյուրքախոս պետությունների՝ առաջին հերթին Ադրբեջանի հետ ցամաքային կապ հաստատելու հետ: Այս վերջինը Թուրքիայի հարավկովկասյան քաղաքականության կարևոր ուղղություններից է, հատկապես Հայաստանի հետ փակ սահմանների և Իրանով հաղորդակցության կազմակերպման սահմանափակ լինելու պայմաններում:

¹ Turkic World Vision-2024.

² Vindimian 2010, 3.

³ Yesevi, Tiftikcigil 2015, 39-41.

«Արդարություն և զարգացում» կուսակցության իշխանության գալուց հետո Թուրքիայի ղեկավարությունը սկսեց մեծ տեղ հատկացնել «մեղմ ուժի» քաղաքականությանը, որը լայնորեն կիրառվում է Վրաստանի նկատմամբ: «Մեղմ ուժի» քաղաքականության շրջանակներում ուշադրություն դարձվեց մշակույթին, կրթական ու տնտեսական հարաբերությունների զարգացմանը և թուրքերենի ուսուցմանն ու տարածմանը: Այս համատեքստում մի շարք կազմակերպություններ ու կառույցներ սկսեցին ակտիվ գործունեություն ծավալել Վրաստանում: Առաջին հերթին հարկ է առանձնացնել TIKA-ն, որը, 1994 թ. սկսած, մի շարք ծրագրեր է իրականացրել կրթության, մշակույթի, գյուղատնտեսության, առողջապահության, մարդասիրական օգնության և այլ ոլորտներում¹: TIKA-ն 2000 թ. նախաձեռնել է «Թուրքագիտություն» ծրագրի իրականացումը, որի շրջանակներում Վրաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում հիմնադրվել են թյուրքագիտական ուսումնասիրությունների բաժիններ: Այս նախաձեռնության նպատակն է Վրաստանում ավելացնել հետաքրքրությունը Թուրքիայի և նրա պատմության ու մշակույթի նկատմամբ: Իվանե Զավախիշվիլիի անվան Թբիլիսիի պետական համալսարանում 2012 թ. հիմնադրվեց Յունուս Էմրե ինստիտուտի մասնաճյուղը: Կենտրոնը հիմնականում կազմակերպում է թուրքերենի դասավանդման վերաբերյալ ծրագրեր, ինչպես նաև իրականացնում է թուրքական պատմությանը, մշակույթին ու արվեստին վերաբերող միջոցառումներ²:

Թուրքիան Վրաստանում օգտագործում է նաև իսլամի գործոնը՝ ձգտելով իր ազդեցությունը տարածել մուսուլման փոքրամասնության, մասնավորապես՝ Աջարիայի մուսուլմանների շրջանում³: «Կրոնական հարցերի տնօրինությունը» (Diyanet) աջակցում է մզկիթների կառուցմանն ու վերակառուցմանը, քարոզում է իսլամ և ընտրում է վրացի ուսանողների՝ Թուրքիայում աստվածաբանական կրթություն ստանալու համար:

Հարավային Կովկասում Թուրքիայի պանթյուրքական քաղաքականությանն ու ծրագրերին առավել զգայուն է վերաբերվում Հայաստանը: Հայաստանի անկախության հռչակումից հետո Թուրքիան թեև

¹ 1994 թ. սկսած մինչև օրս Վրաստանում TIKA-ի իրականացրած ծրագրերը և գործողությունները ներկայացված են ամենամյա հաշվետվություններում, ընդ որում հետխորհրդային տարածաշրջանում իրականացրած ծրագրերի ծավալով Վրաստանը երկրորդ տեղում է՝ զիջելով Ղրղզստանին: Ավելի մանրամասն տե՛ս <https://tika.gov.tr/en/press-room/publications/tika-annual-reports/> (Accessed: 15.06.2024).

² Aleksanyan 2017, 318.

³ Ivanov 2011, 80-83.

ճանաչեց, սակայն մինչ օրս դիվանագիտական հարաբերություններ չի հաստատել Հայաստանի հետ: Մյուս կողմից, այս շրջանից սկսած, հայկական հասարակական ու գիտական քննարկումներում պանթյուրքիզմի թեման միշտ առկա է: Եթե դիտարկենք, որ Թուրքիայի նպատակն է ազդեցության հասնել Հարավային Կովկասում, ապա դա ենթադրում է նաև որոշակի մեխանիզմների ձևավորում Հայաստանի նկատմամբ: Թուրքիան փակ է պահում Հայաստանի հետ սահմանը և առաջադրել է նախապայմաններ¹ ըստ էության Հայաստանի նկատմամբ կիրառելով ճնշումների քաղաքականությունը: Բացի այդ՝ «մեղմ ուժի» քաղաքականության մեխանիզմները Հայաստանի նկատմամբ չեն կիրառվում: Գ. Ասատրյանի բնորոշմամբ՝ «էթնոմշակութային ընդհանուր հատկանիշների բացակայության պատճառով Անկարան Երևանի համար մշակութային որևէ ծրագիր չունի»²: Մյուս կողմից Հայաստանը միշտ դիտվել է Թուրքիան և Ադրբեջանը (իրականում՝ թյուրքախոս պետությունները) միմյանց կապող ցամաքային ամենակարճ ճանապարհը, ուստի այս տեսանկյունից Թուրքիայի քաղաքական ծրագրերն անփոփոխ են: Այս մասին է վկայում նաև 44-օրյա պատերազմից հետո «Մեղրիի ճանապարհի» (այսպես կոչված «Ջանգեզուրի միջանցքի») թուրք-ադրբեջանական խոսույթը:

Այսպիսով՝ պանթյուրքիզմի գաղափարներն ինստիտուցիոնալացվեցին Թուրքիայի քաղաքական համակարգում և կազմեցին արտաքին քաղաքական դոկտրինների մասը: Պանթյուրքիզմի գաղափարների ազդեցությունը մեծ է Թուրքիայի հարավկովկասյան քաղաքականության ձևավորման վրա, որն առաջին հերթին պայմանավորված է գաղափարական հիմքերի ստեղծմամբ: ԽՍՀՄ փլուզմամբ սկսվեց պանթյուրքիզմի գաղափարների նորովի ներկայացումը: Այս համատեքստում առաջ քաշվեցին «թյուրքական միասնության» և «թյուրքական աշխարհի» տեսլականները, որոնք ներկայումս ներկայացվում են «թյուրքական ինտեգրացիայի» գաղափարներով: Որքան էլ ձևակերպումները տարբեր լինեն, նպատակը մեկն է. Թուրքիայի հովանու ներքո միավորել թյուրքախոս պետություններին ու ժողովուրդներին: Այս ծրագրերի համատեքստում Հարավային Կովկասը նախևառաջ հանդիսանում է ցամաքային ուղի և կամուրջ դեպի Կենտրոնական Ասիա:

¹ Cheterian 2017, 83.

² Asatryan 2002, 24.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Զարևանդ, Միացյալ, անկախ Թուրանիա, Երևան, 1993, Հայաստան: Մինասյան Ն., Նոր համաթյուրքականության գաղափարները Թուրքիայի քաղաքական համակարգում (կուսակցությունների ծրագրային դրույթները), Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XXXI, Երևան, «Գիտություն» հրատ., 2018, 159-170:
- Aleksanyan L. M., Turkish-Georgian relations in the context of Turkey's regional policy at the current stage, *Post-Soviet Issues*, 4 (4), 2017, 307-320. <https://doi.org/10.24975/2313-8920-2017-4-4-307-320>
- Asatryan G., Armenia and Security Issues in the South Caucasus, *Connection*, No. 3, September 02, 2002, 21-30.
- Cheterian V., The Last Closed Border of the Cold War: Turkey-Armenia, *Journal of Borderlands Studies*, 32 (1), 2017, 71-90. <https://doi.org/10.1080/08865655.2016.1226927>
- Ibrahimov R., Turkish-Azerbaijani Energy Relations: Significant Leverage in the Implementation of the Foreign Policy Interests of Both Countries, *Insight Turkey*, 17 (2), 2015, 83-100.
- Ivanov V., Religious Dimension of Turkey's Policy in Ajaria and the Georgian Orthodox Church, *Central Asia and the Caucasus*, 12 (3), 2011, 79-90.
- Landau M. Jacob, *Pan-Turkism in Turkey: A Study of Irredentism*, London, C. Hurts & Company, 1981.
- Lüdke T., Pan-Turkism in Action? Turkic Nationalists, Nazi Germany and Turkey During World War II, *Turkish Historical Review*, 15, 2023, 1-24. <https://doi.org/10.1163/18775462-bja10050>
- Minasyan N., Some Observations on Yusuf Akçura and his Article "Three Ways of Policy", *Bulletin of the Institute of Oriental Studies*, 1 (2), 2022, 53-65. <https://doi.org/10.52837/27382702-2022.1-53>
- Turkic World Vision-2024, <https://turkicstates.org/assets/pdf/haberler/turkic-world-vision-2040-2396-97.pdf> (Accessed: 15.06.2024).
- Ülker E., Contextualising "Turkification": nation-building in the late Ottoman Empire, 1908-18, *Nation and Nationalism*, 11 (4), 2005, 613-636.
- Vindimian M., Evolution of Turkish Foreign Policy towards Georgia, ISPI – Policy Brief, N 196- September 2010.
- Yesevi C. G., Tiftikcigil B. Y., Turkey-Azerbaijan Energy Relations: A Political and Economic Analysis, *International Journal of Energy Economics and Policy*, 5 (1), 2015, 27-44.

Yükselen H., *Strategy and Strategic Discourse in Turkish Foreign Policy*, Switzerland, Palgrave Macmillan, 2020. https://doi.org/10.1007/978-3-030-39037-2_7 Akçura Y., *Üç Tarz-i Siyaset*, Ankara, 1976.
Gökalp Z., *Türkçülüğün Esasları*, Eskişehir, 2019, T.C. Anadolu Üniversitesi Yayını.

Nelli Minasyan (Armenia, Yerevan)

THE SOUTH CAUCASUS IN TURKEY'S PANTURKIC AGENDAS

Keywords: Pan-Turkism, Turkey, South Caucasus, Turkic-speaking states, Turkic integration.

The South Caucasus appeared in Turkey's pan-Turkic plans after the Young Turks came to power, when they planned to create the "Great Turan". However, during the WWI, they were defeated and those plans failed, which we can consider the first stage. The second stage of the development of pan-Turkism ideas is characterized by their institutionalization in the political system of Turkey. After the collapse of the USSR, the third stage of the development of pan-Turkism begins, when Turkey had the opportunity to activate its policy in the South Caucasus. It established closer relations with Azerbaijan, considering the latter the main support for strengthening its position in the region. Turkey has also established good relations with Georgia, in particular, it uses the mechanisms of "soft power" policy. It has not established relations with Armenia and continues the policy of preconditions.

Thus, the ideas of pan-Turkism were institutionalized in the political system of Turkey and became part of the foreign policy doctrines. The influence of the ideas of pan-Turkism is great on the Turkey's South Caucasus policy, which is primarily due to the formation of ideological foundations. With the collapse of the USSR, a new interpretation of the ideas of Pan-Turkism began. In this context, the visions of "Turkic unity" and "Turkic world" were put forward, which are currently represented by the ideas of "Turkic integration". However different the wording may be, the goal is the same: to

unite Turkic-speaking states and peoples under the auspices of Turkey. In the context of these programs, the South Caucasus is primarily a land route and a bridge to Central Asia.

Нелли Минасян (Армения, Ереван)

ЮЖНЫЙ КАВКАЗ В ПАНТЮРКСКИХ ПРОГРАМАХ ТУРЦИИ

Ключевые слова: пантюркизм, Турция, Южный Кавказ, тюркоязычные государства, тюркская интеграция.

Южный Кавказ появился в пантюрских планах Турции после прихода к власти младотурок, когда они планировали создать «Великий Туран». Однако в ходе Первой мировой войны они потерпели поражение, и эти планы провалились, что можно считать первым этапом. Второй этап развития идей пантюркизма характеризуется их институционализацией в политической системе Турции. После распада СССР наступает третий этап развития пантюркизма, когда Турция получает возможность активизировать свою политику на Южном Кавказе. Она установила более тесные отношения с Азербайджаном, считая его главной опорой для укрепления своих позиций в регионе. Турция также установила хорошие отношения с Грузией, в частности, использует механизмы политики «мягкой силы». Она не наладила отношения с Арменией и продолжает политику предусловий.

Таким образом, идеи пантюркизма институционализировались в политической системе Турции и стали частью внешнеполитических доктрин. Велико влияние идей пантюркизма на политику Турции на Южном Кавказе, что связано, прежде всего, с формированием идеологических основ. С распадом СССР началось новое изложение идей пантюркизма. В этом контексте были выдвинуты концепции «тюркского единства» и «тюркского мира», которые в настоящее время представлены идеями «тюркской интеграции». Какими бы разными не были формулировки, цель одна: объединить тюркоязычные государства и народы под эгидой Турции. В контексте этих программ Южный Кавказ – это, прежде всего, сухопутный путь и мост в Центральную Азию.

ՀԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԱԿՆԱՐԿՆԵՐՆ ԻՐԱՆԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹՈՒՄ

Սույն ուսումնասիրության նպատակն է ներկայացնել հայության մասին իրանական խոսույթում առկա ակնարկները, որոնք վերաբերում են իրանական հասարակական կյանքում հայերի ունեցած դերին, ինչպես նաև՝ հայ ժողովրդի պատմության առանձին դրվագներին:

Ըստ այդմ, հոդվածի մեջ քննարկվում է հայ և իրանցի ժողովուրդների խաղաղ գոյակցության փորձը, որը ներկայումս ստեղծել է նպաստավոր նախադրյալներ տարածաշրջանում տարբեր քաղաքակրթությունների բաժնուկ խաչմերուկ դառնալու համար:

Հարկ է նշել, որ որպես ուսումնասիրության արդյունք՝ Իրանում հայ մշակույթը ներկայացնելու և այն ճանաչելի դարձնելու գործում որոշակի դեր են ստանձնել հայ համայնքային կազմակերպությունները:

Բանալի բառեր՝ Իրան, իրանական մամուլ, հայ մշակութային ժառանգություն, իրանցի մտավորականներ, իրանահայ գործիչներ:

Իրանցի պատմաբան Խոսրով Չաքերիի խոսքով՝ հայերն Իրանում՝ մահմեդական բնակչության ծովում, կազմում էին փոքրամասնություն, սակայն, չնայած դրան, անչափ մեծ ավանդ են ունեցել Իրանի հասարակական զարգացման մեջ¹:

Հարկ է անդրադառնալ, ինչպես իրանցի հեղինակն է ասում, այդ «չնչին փոքրամասնության» ժողովրդագրական գործընթացների հարցին: Այսպես, եթե 1851 թ. իրանահայերի թիվը կազմել է մոտ 20 հազար, 1890 թ.² 80 հազար², մինչև Հայոց ցեղասպանությունը՝ մոտ 200 հազար³, 1979 թ.⁴ շուրջ 200 հազար⁴, 2003 թ.⁵ 80 հազար⁵, ապա ներկայումս մինչև 50 հազար է⁶: Հիրավի, սոցիալական խնդիրներն ազդել են համայնքի ժողովրդագ-

¹ Բայբուրդյան 2013, 9:

² Բադալյան 2011, 397:

³ Եղիազարյան 2017, 121:

⁴ Դավաթյան 2004, 194:

⁵ Փահլևանյան 2003, 240:

⁶ Իրանի 60 հազարանոց հայկական համայնքը, 2014:

րական պատկերի վրա: Եթե 1997 թ. Թեհրանի հայոց թեմում գրանցվել է 565 մկրտություն, ապա 2005 թ. այդ թիվը կազմել է 302¹:

Հայ մշակույթն իրանցի ընթերցողին ներկայացնելու գործում աջակցում է իրանական պետությունը: Այդ մասին են վկայում Անդրանիկ Հովյանի «Իրանահայերը», Ժանետ Լազարյանի «Իրանահայոց հանրագիտարան», «Իրանի տարածքում ցրված եկեղեցիների քարտեզը», ինչպես նաև Արդուբարիմ Մաշայեխի «Քրիստոնյաները Բուշեիրում» գրքերի հրատարակումները²:

Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում նաև պատմաքաղաքական տարբեր հարցերի շուրջ իրանցի հեղինակների տեսակետները: Ըստ Րաֆֆու «Խամսայի մեկիբությունները» պարսկերենով գրքի խմբագիր Քավե Բայաթի՝ *««Խամսայի մեկիբությունները» կարևորվում է Իրանի պատմության որոշ շերտերի և Կովկասում Իրանի ազդեցության վերացման բացատրությամբ»*³: Դոկտոր Հերմիդաս Բավանդին էլ վերահաստատել է այն փաստը, որ Սեֆյանների օրոք հայերը զգալի դեր են ունեցել Իրան-Հնդկաստան առևտրական խաչմերուկի զարգացման գործում⁴: Փաստորեն, կարևորվել է հայության դերը ժամանակաշրջանի միջազգային հարաբերություններում:

Արժե նշել, որ Հարություն Տեր-Հովհանյանի «Պատմություն Նոր Զուղայի» պարսկերենով գրքի վերաբերյալ գրախոսության մեջ դոկտոր Արդուխոսեին Ֆարզադին գրում է. *«Իրանցիների մեջ տարածված է այն համոզմունքը, որ հայը չի ստում...»*⁵: Ակնհայտ է, որ այդպիսի եզրակացությունը հիմնված է իրանահայության բարի համբավի վրա:

Հայազետ Ահմադ Նուրիզադեի դիպարկմամբ՝ *«Հայության ամենաարժանավոր հատկությունն այն է, որ եթե որևէ բան փոխ են առել որևէ ազգից, դա հենց այդպես, տարրական կերպով չեն հանձնել ազգային հիշողության, այլ ջանացել են այն նյութափոխել իրենց ազգային մշակույթի մեջ և իրենց յուրահատուկ ինքնությունը հաղորդել փոխառնված ավանդույթին»*⁶: Ի դեպ, 2003 թ. «Էթեթլաթ» օրաթերթն իր ընթերցողին է

¹ «Լույս», N 123, 2006, 4: «Ալիք», 30.01.2002, թիւ 23 (18524), 22.01.2003, թիւ 16 (18799), 08.02.2004, թիւ 30 (19092), 23.01.2005, թիւ 18 (19361):

² «Ալիք», 28.01.2002, թիւ 21 (18522), 18.06.2003, թիւ 119 (18902), 18.02.2007, թիւ 35 (19935), 30.06.2003, թիւ 129 (18912):

³ «Ալիք», 03.03.2007, թիւ 46 (19946):

⁴ «Ալիք», 26.06.2007, թիւ 123 (20023):

⁵ «Ալիք», 10.12.2002, թիւ 265 (18766):

⁶ «Հայ ազգի պարսկախոս գավակը», 2023:

⁷ «Ալիք», 23.01.2005, թիւ 18 (19361):

ներկայացրել Նուրիզադեին՝ որպես հայերենով ստեղծագործած առաջին՝ ոչ հայ բանաստեղծն աշխարհում, «Էլթեմադ» օրաթերթը տպագրել է նրա՝ հայ գրականության, իսկ 2007 թ. «Սահեբդալամ» օրաթերթը՝ նրա՝ 7 հայ պատմիչների գիտական ժառանգության հարցի վերաբերյալ ուսումնասիրությունները²:

Իրանում հայ մշակույթը ճանաչելի դարձնելու գործում որոշակի դեր են ստանձնել հայ համայնքային կազմակերպությունները: 2002 թ.-ին Թեհրանի «Անահիտ» միության նախաձեռնությամբ պարսկերեն հրատարակվող «Պայման» եռամսյա հանդեսն արժանացել է ԻԻՀ Մշակութի և Իսլամական առաջնորդության նախարարության գնահատանքին³:

Իրանական խոսույթում հայության մասին ակնարկների մեջ կարևոր տեղ ունի անվանի գործիչներին մեծարելը: Հայկական հարցերի ուսումնասիրության կենտրոնը 2002 թ. կազմակերպել է գեղանկարիչ Քլարա Աբգարի, բարեգործ Արսեն Մինասյանի, ճարտարապետներ Գաբրիել Գևրեկյանի, Փոլ Աբգարի և Վարդան Հովհաննիսյանի հանրահռչակումը⁴: Իրանի ճարտարապետների միության անդամ Բեհռուզ Փաքդամանի խոսքով՝ «Թեհրան քաղաքի ճարտարապետական տեսքը խոշոր տոկոսով պարտական է հայ ճարտարապետներին...»⁵: Ի դեպ, Փաքդամանը Վ. Հովհաննիսյանին նվիրված գիրք է հրատարակել, իսկ Մանդանա Յազդանշենաս Հաշեմին ուսումնասիրել է Գ. Գևրեկյանի գործունեությունը⁶: 2007 թ. «Համշահրի» օրաթերթի հոդվածագիր Ռամթին Ֆարզադը գրում է. «...Թավրիզի կենտրոնական պողոտան, որն այսօր կոչվում է Էմամ Խոմեյնիի անունով, նախագծել է Ավետիս Ահարոնյանը՝ մի երևանցի ճարտարապետի զավակ, որը Իրան եկավ Հայաստանի խորհրդայնացումից հետո»⁷: Այսպիսով, իրանական խոսույթում որոշակի տեղ ունի հայության մասին տարբեր ակնարկներ, որոնցից մի քանիսին փորձեցինք անդրադառնալ սույն հոդվածի մեջ:

¹ رد هدازيرون دمح پيسراف - BBC News - ديارسيم ر عش ينمرا هب هك ينمرا ريغ ر عاش كزير هك هاگتيااسا رد هدازيرون دمحا , ۲۹ دادرخ - ۱۳۹۴ نوژ ۱۹ - ۱۶ ديمحم ديمح , ديارسيم ر عش ينمرا هب هك ينمرا ريغ ر عاش كزير هك هاگتيااسا 16.05.2024:

² «Ալիք», 22.06.2003, թիւ 122 (18905), 23.07.2003, թիւ 149 (18932), 27.02.2007, թիւ 43 (19943):

³ «Ալիք», 16.11.2002, թիւ 245 (18746), 21.11.2002, թիւ 250 (18751):

⁴ Իրանահայոց հանրագիտարան, 2012, 234, 239, 240:

⁵ «Ալիք», 16.11.2002, թիւ 245 (18746):

⁶ «Ալիք», 14.11.2002, թիւ 244 (18745):

⁷ «Ալիք», 07.11.2007, թիւ 230 (20130):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Բայրուրդյան Վ., Իրանի հայ համայնքը. արդի հիմնախնդիրներ, Երևան, 2013, էջ 9:

Բադալյան Գ., Իրան. Հանրագիտարան, Երևան, 2011, էջ 397:

Եղիազարյան Ա., Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները 1918 թվականից մինչև մեր օրերը, Երևան, 2017, էջ 121:

Դալլաքյան Կ., Հայ Սփյուռքի պատմություն, Երևան, 2004, էջ 194:

Իրանահայոց հանրագիտարան, Կազմող Ժանետ Տ. Լազարյան, Երևան, «ՎՄՎ-Պրինտ», 2012, էջ 234, 239, 240:

Փաիկանյան Հ., Իրան, Հայ Սփյուռք հանրագիտարան, խմբ.՝ Հովհ. Այվազյան, Ա. Սարգսյան և ուրիշ., Երևան, «Հայկական հանրագիտարան», 2003, էջ 240:

Իրանի 60 հազարանոց հայկական համայնքը իր կնիքն ունի Իրանի կյանքում, 25 սեպտեմբերի, 2014, <https://armenpress.am/arm/news/777670/irani-60-hazaranoc-haykakan-hamaynqy-ir-kniqn-uni-irani.html> դիտումը՝ 29.05.2024:

«Լույս», N 123, 2006, էջ 4:

Հաղորդագրություն Դիւան Ազգային առաջնորդարանի Թեհրանի Հայոց թեմի, «Ալիք», 30.01.2002, թիւ 23 (18524), 22.01.2003, թիւ 16 (18799), 08.02.2004, թիւ 30 (19092), 23.01.2005, թիւ 18 (19361), 28.01.2002, թիւ 21 (18522), 18.06.2003, թիւ 119 (18902), 30.06.2003, թիւ 129 (18912), 18.02.2007, թիւ 35 (19935), 03.03.2007, թիւ 46 (19946), 26.06.2007, թիւ 123 (20023), 10.12.2002, թիւ 265 (18766), 23.01.2005, թիւ 18 (19361), 22.06.2003, թիւ 122 (18905), 23.07.2003, թիւ 149 (18932), 27.02.2007, թիւ 43 (19943), 16.11.2002, թիւ 245 (18746), 21.11.2002, թիւ 250 (18751), 16.11.2002, թիւ 245 (18746), 14.11.2002, թիւ 244 (18745), 07.11.2007, թիւ 230 (20130):

«Հայ ազգի պարսկախոս զավակը», <http://norkhosq.net/2023/08/%D5%A2%D5%A1%D6%80%D6%87-%D5%B1%D5%A5%D5%A6-%D5%B0%D5%A1%D5%B5%D5%A5%D6%80/> դիտումը՝ 09.05.2024:

BBC - دیارسیم رعش ینمرا هب هک ینمرایغ رعاش؛ کزیرهک هاگشیاسآ رد هدازیرون دمحا ,
News - دیارسیم رعش ینمرا هب هک ینمرایغ رعاش؛ کزیرهک هاگشیاسآ رد هدازیرون دمحا یسراف
دیحم دیمح ۲۹ دادرخ ۱۳۹۴ - ۱۹ نئوژ ۲۰۱۵ դիտումը 16.05.2024:

THE OVERVIEWS OF THE ARMENIANS IN IRANIAN SPEECH

Keywords: Iran, Iranian press, Armenian cultural heritage, Iranian intellectuals, Iranian-Armenian figures.

This study aims to explore the representation of Armenians in Iranian discourse, focusing on their contributions to public life and key historical moments. It emphasizes the long-standing peaceful coexistence of Armenian and Iranian communities, which has shaped the region into a dynamic intersection of diverse civilizations. This enduring relationship between the two peoples has not only contributed to mutual cultural exchange but also established a unique context for collaboration.

The research also examines the role of Armenian community organizations in Iran, particularly their efforts to promote Armenian culture and make it recognizable in the Iranian social and cultural landscape. These organizations have played a significant part in preserving and presenting Armenian heritage, contributing to the broader cultural diversity of Iran. Through various initiatives and public activities, they have fostered understanding and appreciation of Armenian traditions among Iranians.

Furthermore, the study reflects on the historical episodes that have influenced Armenian-Iranian relations and contributed to shaping the Armenian community's identity within Iran. By delving into these cultural interactions, the research aims to offer a deeper understanding of how Armenians have contributed to the cultural fabric of Iran while maintaining their own heritage and distinct identity within the larger societal framework.

ОЧЕРКИ ОБ АРМЯНАХ В ИРАНСКОМ ДИСКУРСЕ

Ключевые слова: Иран, иранская пресса, армянское культурное наследие, иранские интеллектуалы, ирано-армянские деятели.

Цель данного исследования - представить рассказы об армянах в иранском дискурсе, касающиеся роли армян в иранской общественной жизни, а также отдельные эпизоды истории армянского народа.

Соответственно, в статье рассматривается опыт мирного сосуществования армянского и иранского народов, благодаря чему в настоящее время созданы благоприятные условия для того, чтобы регион стал оживленным перекрестком разных цивилизаций.

Эти прочные отношения между двумя народами не только способствовали взаимному культурному обмену, но и создали уникальный контекст для сотрудничества.

В исследовании также рассматривается роль армянских общинных организаций в Иране, в частности их усилия по продвижению армянской культуры и ее узнаваемости в иранском социальном и культурном ландшафте. Эти организации сыграли значительную роль в сохранении и популяризации армянского наследия, способствуя более широкому культурному разнообразию Ирана. Благодаря различным инициативам и общественным мероприятиям они способствовали пониманию и признанию армянских традиций среди иранцев.

Кроме того, в исследовании рассматриваются исторические эпизоды, которые повлияли на армяно-иранские отношения и способствовали формированию идентичности армянской общины в Иране. Углубляясь в эти культурные взаимодействия, исследование стремится предложить более глубокое понимание того, какой вклад армяне внесли в культурную структуру Ирана, сохранив при этом свое собственное наследие и особую идентичность в более широких общественных рамках.

Հայկուհի Մուրադյան (Հայաստան, Երևան)

ՄՇԱԿՈՒՅԹԻ ԳՈՐԾՈՆԸ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Մշակույթը յուրաքանչյուր պետության «փափուկ» ուժն է, որի միջոցով կառուցվում է արտաքին քաղաքականությունը, համագործակցությունը այլ երկրների հետ՝ մշակույթի միջոցով ստեղծելով իր կերպարը: Մշակույթի և մշակութային փոխառնչությունների միջոցով պետությունները քաղաքական բազմաթիվ հարցեր են լուծում: Ադրբեջանի պարագայում ևս մշակույթը արտաքին քաղաքականության մեջ երկրի կերպարի կառուցման հիմնական գործիքներից մեկն է: Սույն հոդվածում քննարկվում է Ադրբեջանի Հանրապետության արտաքին քաղաքականության ուղղությունները և գործիքները, որի միջոցով կերպվում է ադրբեջանի «հանդուրժողական», «դեմոկրատ» և «բազմամշակութային» կերպարը:

Հետազոտությունը հիմնված է քաղաքագիտության և մշակութային մարդաբանության համալիր մեթոդների կիրառման վրա: Դիտարկվել են մեդիա դաշտում ադրբեջանական պետական մարմինների հայտարարությունները, ուսումնասիրվել է երկրի արտաքին քաղաքականությունը՝ օրենքների, համագործակցության և միջազգային համաձայնագրերի միջոցով, ինչպես նաև քննության համար նյութ է հանդիսացել Ադրբեջանի ներքին քաղաքականության մեջ ընթացող դիսկուրսները:

Բանալի բառեր՝ «փափուկ ուժ», մշակութային քաղաքականություն, բազմամշակութային կերպար, մշակութային վանդալիզմ, Ադրբեջանի Հանրապետություն, Արցախի ժառանգություն:

Ներածություն

Հայկական մշակութային ժառանգության յուրացման քաղաքականությունը, որը սկսվել էր դեռևս խորհրդային տարիներին, ակտիվորեն շարունակվեց Ադրբեջանի անկախության տարիներին և ստացավ նոր ձևակերպումներ ու ուղենիշներ, հատկապես, երբ իշխանության եկավ Հեյդար Ալիևի որդին՝ Իլհամ Ալիևը: Նա ոչ միայն չվերանայեց նախորդ նախագահության տարիներին վարած քաղաքականությունը, այլև սկսեց ավելի

ինտենսիվ ու համակողմանիորեն իրականացնել հայ մշակութային ժառանգության յուրացման ադրբեջանական քաղաքականությունը:

Ընդհանրապես, պետական մակարդակով մշակութային քաղաքականության մոդելի ձևավորման գործում էական դեր են խաղում քաղաքական առաջնորդի տեսակետներն ու պատկերացումները մշակույթի և, մասնավորապես, մշակութային ժառանգության մասին¹: Երբ խոսքը վերաբերում է Ադրբեջանին, ապա պետք է հասկանալ, որ մշակութային քաղաքականության մոդելը 2000-ական թթ. ձևավորվել է այս երկրի ղեկավարի գաղափարներին և պատկերացումներին համապատասխան: Այդ է վկայում նաև Ադրբեջանի մշակութային կառավարման համակարգի կառուցվածքը, որը հրապարակվել է 2021 թ. (Compendium, cultural policies and trends, Azerbaijan): Ելնելով աղյուսակի տեսքով ներկայացված այդ կառուցվածքից՝ կարելի է եզրակացնել, որ Ադրբեջանի մշակութային քաղաքականությունը կենտրոնացված է և «էկլեկտիկ»²: 2000-ականներին Ադրբեջանը սկսեց ակտիվորեն մասնակցել միջազգային մշակութային միջոցառումներին և ինտեգրվել միջազգային կազմակերպությունների գործունեությանը. մշակույթը դարձավ Ադրբեջանի արտաքին քաղաքականության «փափուկ ուժը», որի միջոցով նա փորձում է Արևմուտքին ներկայանալ որպես բազմամշակութայնությունը խրախուսող ժողովրդավարական պետություն:

2000 թվականին Ադրբեջանի մշակույթի նախարարությունը մասնակցել է «Մշակութային քաղաքականությունը Եվրոպայում» նախագծին և դարձել մի շարք միջազգային կոնվենցիաների և հռչակագրերի անդամ³: Միջազգային կոնվենցիաներին և հռչակագրերին միանալը նաև հիմք է դարձել Ադրբեջանի համար տեղական օրենսդրությունը կարգավորելու և մշակույթի ոլորտում նոր օրենքներ մշակելու համար: Միայն 2006 թվականից մինչև 2008 թվականը մշակութային կառավարման ոլորտում ստորագրվել են ավելի քան 100 օրենքներ և հրամանագրեր, այդ թվում «Մշակույթի մասին» օրենքը, որը հստակ սահմանում էր մշակութային ժառանգության հայեցակարգը, դրա պահպանման սկզբունքները, մշակութային բազմազանության խթանումը և այլն: Ադրբեջանի մշակութային քաղաքականության հիմքում ընկած է 2012 թվականին ընդունված «Մշակույթի մասին» օրենքը, որն ընդգծում է հիմնական սկզբունքներն ու ուղղությունները⁴.

¹ Вебер 2017.

² Моль 2008.

³ Member states, Azerbaijan, <https://en.unesco.org/countries/azerbaijan>, 12.03.2022.

⁴ Закон Азербайджанской Республики от 21 декабря 2012 года № 506-IVQ. О культуре.

Պետական քաղաքականությունն այս ոլորտում նոր «բարեփոխումներ» կոչվեցին «Երեք դե հայեցակարգ»՝ ապակենտրոնացում, ապամոնոպոլիզացիա և ժողովրդավարացում: 2014 թվականին հաստատվել է «Ադրբեջանի մշակույթի հայեցակարգը», որը ներառում է որոշումներ ազգային ավանդույթների պահպանման և խրախուսման, մշակույթի ոլորտում նյութատեխնիկական բազայի բարելավման, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների միջոցով դրա հանրահռչակման վերաբերյալ:

Այսպիսով, 2000-ականներից սկսած, Ադրբեջանի արտաքին քաղաքականությունը, օգտագործելով օրենսդրական գործիքներ և ակտիվորեն համագործակցելով միջազգային կառույցների հետ, ձգտում է ստեղծել Ադրբեջանի «ժողովրդավարական» և «հանդուրժողական» կերպարը:

Ադրբեջանի այս կերպարը, որը ստեղծվել է նրա կիրառած արտաքին քաղաքականության միջոցով, լիովին հակասում է իրական իրադարձություններին ու փաստերին:

Դրա ամենավառ օրինակը Ջուլա քաղաքի մերձակայքում գտնվող միջնադարյան հայկական խաչքարերի հնագույն գերեզմանոցի ավերումն էր: 2005 թվականին Ջուլայի խաչքարային դաշտն ամբողջությամբ ավերվել է. ադրբեջանցի զինվորականները ոչնչացրել են բոլոր խաչքարերը¹:

Ադրբեջանի վարած քաղաքականությունը հայկական ժառանգության ուղղությամբ կարելի է դասակարգել մի քանի խմբերի, որոնց մենք պայմանական անվանումներ ենք տվել՝ ներկայացնելու բռնայության քաղաքականությունը:

«Ժխտում»

Ալիևի քաղաքականության հայտնի մեթոդներից մեկը ժխտողականությունն է, երբ հերքվում է նույնիսկ ակնհայտ, հիմնավոր և վաղուց բացահայտվածը: Ջուլայում խաչքարերի ոչնչացումը նույնպես ակտիվորեն հերքվում էր պետական մակարդակով: 2006 թվականին Իլիամ Ալիևն ասել է. «...հայկական լոբբիստական շրջանակների հորինած սուտն ու զրպարտությունը»: Սակայն Ադրբեջանի իշխանությունները կտրականապես արգելել են միջազգային դիտորդներին այցելել գերեզմանատուն: Այսպես, 2011 թվականին, երբ Ադրբեջանում ԱՄՆ դեսպան Մեթյու Բրայզան այցելեց Նախիջևան և ցանկություն հայտնեց այցելել Ջուլա՝ հետաքննելու հայկական խաչքարերի ենթադրյալ ոչնչացումը, նրան թույլ չեն տվել մուտք

¹ Julfa: The annihilation of the Armenian Cemetery by Nakhijevan's Azerbaijani authorities.

գործել քաղաք: Նույն սցենարը նկատեցինք Արցախյան 44-օրյա պատերազմից հետո, երբ Ադրբեջանի իշխանությունները թույլ չտվեցին ՅՈՒՆԵՍԿՕ-ի պատվիրակությանը այցելել Ադրբեջանի կողմից օկուպացված տարածքներ:

«Օկուպացիոն ժառանգություն»

Օկուպացված տարածքներում ադրբեջանցիներն առանձնահատուկ վանդալիզմ են ցուցաբերում Ազատամարտին և նրա հերոսներին նվիրված հուշարձանների, կոթողների և հուշահամալիրների նկատմամբ: Արցախյան առաջին ազատամարտի զոհերին նվիրված հուշարձանները հաճախ կառուցակցվել են ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշարձանին՝ դառնալով մեկ հուշահամալիր: Օրինակ՝ Շուշիում ոչնչացվել է Հայոց ցեղասպանության զոհերի հուշարձանը: Այն տեղադրվել է Արցախյան առաջին պատերազմից հետո և նվիրված է եղել նաև Հայրենական մեծ պատերազմի զոհերին: Հադրութի շրջանի Ազոխ գյուղում ադրբեջանցիները ավերել են Հայրենական մեծ պատերազմի, Արցախյան առաջին պատերազմի և Հայոց ցեղասպանության զոհերին նվիրված հուշարձաններ, Հադրութի հերոս ազատամարտիկների հիշատակը հավերժացնող հուշակոթող և բազում այլ հուշարձաններ:

Ադրբեջանի պաշտոնական մարմինները, ոչնչացնելով Արցախի Հանրապետությունում վերջին 30 տարիներին ստեղծված մշակութային ժառանգությունը, այն որակում են որպես «օկուպացիոն» ժառանգություն և պետական մակարդակով արդարացնում այդ վանդալիզմը: Մշակութային ժառանգության վերաբերյալ գոյություն ունեցող բազմաթիվ տեսությունների և հայեցակարգերի մեջ չկա մեկ սահմանում, որը կդասակարգեր մշակութային ժառանգությունը որպես «օկուպացիոն» և կտա դրա ոչնչացման իրավունք: Ադրբեջանական քարոզչությամբ հորինված կեղծ գիտական թեզերն ուղղված են միայն Արցախի մշակութային ժառանգության դեմ սեփական հրեշավոր հանցագործությունների արդարացմանը և իրականության հետ կապ չունեն:

Մշակութային ժառանգության ինքնության վերափոխում

Հայկական մշակութային ժառանգության «աղվանացման» և «ուղղափառացման» մեխանիզմն այսօր էլ կիրառվում է: Դրա վառ օրինակները կարելի է համարել Ծակուռիի, Դադիվանքի, Ամարասի, Գոչավանքի, Գանձասարի վանքերի և այլ նշանային հուշարձանների հռչակումը աղվանական, հայերեն արձանագրությունների և խաչքարերի կեղծ հռչակումը, Շուշիի Սուրբ Ամենափրկիչ (Ղազանչեցոց) եկեղեցին ուղղափառ հռչակելը և դրա հիման վրա ապօրինի վերականգնողական աշխատանքների իրականացումը:

«Շինարարական աշխատանքներ»

«Ճանապարհների բարելավման շինարարական աշխատանքների» անվան տակ Ադրբեջանը նպատակաուղղված կերպով ոչնչացնում է ճանապարհների երկայնքով գտնվող հայկական պատմական բնակավայրերը, որոնք վկայում են Արցախում հայության ավելի քան հազարամյա բնակության մասին: Արբանյակային պատկերների շնորհիվ հնարավոր է եղել արձանագրել Շուշիի պատմական գերեզմանատան ավերածությունը, Հադրութի շրջանի Մեծ Թաղեր և Ասկերանի շրջանի Շոշ համայնքի Սղնախ գյուղերի գերեզմանոցների ավերումը: Մշակութային ժառանգության օբյեկտների աղավաղման, ոչնչացման և յուրացման բազմաթիվ դեպքերը վկայում են, որ ադրբեջանական կողմը ամեն կերպ խախտում է 1954 թվականի «Զինված ընդհարման դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին» Հաագայի կոնվենցիայով և վավերացված երկու արձանագրություններով նախատեսված իր պարտավորությունները:

Պատերազմի դեպքում մշակութային ժառանգության պաշտպանությանը վերաբերող դրույթներ կան նաև Ժնևի կոնվենցիայում և դրա արձանագրություններում: Նվաճված տարածքներում մշակութային ժառանգության օբյեկտների պաշտպանությունն ամրագրվում է նաև ՅՈՒՆԵՍԿՕ-ի մի շարք կոնվենցիաներով՝ «Մշակութային արժեքների նկատմամբ սեփականության իրավունքի ապօրինի ներմուծումը, արտահանումն ու անօրինական փոխանցումը» արգելող կոնվենցիան (1970 թ.) և այլն: Այս կոնվենցիաների հիմնական գաղափարն այն է, որ միջազգային իրավունքը արգելում է թիրախավորել և միտումնավոր ոչնչացնել մշակութային ժառանգության օբյեկտները:

Սա պետք է դիտարկել որպես համաշխարհային մշակութային ժառանգության դեմ ուղղված և համաշխարհային հանրության կողմից դատապարտված գործողություններ: Վերոհիշյալ և նմանատիպ կոնվենցիաների հիմնական թերությունն այն է, որ դրանք նախատեսված են և ուղղված են միջազգայնորեն ճանաչված պետություններին:

Եզրակացություն

Արցախի մշակութային ժառանգության ապօրինի յուրացումը Ադրբեջանի իշխանությունների կողմից երկար տարիներ մշակված քաղաքականություն է: Կարելի է հստակ ուրվագծել ադրբեջանական քաղաքականության երկու ուղղություն, որոնք տեսականորեն հակասում են միմյանց, բայց իրականում համալրում են. հայկական մշակութային ժառանգության յուրացման և ոչնչացման քաղաքականությունը միջազգային մակարդակով «արդարացվում» է Ադրբեջանի արտաքին քաղաքականության ջանքերով, որոնք ներառում են մասնագիտական և ֆինանսական լուրջ ռեսուրսների օգտագործում: Հայկական կողմից հստակ քաղաքական հայեցակարգը, մշակութային ժառանգության պահպանության հարցերի հստակեցումը, միջազգային գիտափրավական հարթակների ու մեխանիզմների ոլորտում ակտիվ աշխատանքը, մասնագիտական ներուժի համախմբումն այսօր առաջնահերթ ռազմավարական խնդիրներ են:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Вебер М., Власть и политика, Москва, «Рипол Классик», 2017.

Моль А., Социодинамика культуры, Москва, «ЛКИ», 2008.

Էլեկտրոնային հղումներ

Azerbaijan Claims that Dadivank Monastery Belongs to Udi Cultural Heritage,

<https://monumentwatch.org/en/alerts/azerbaijan-claims-that-dadivank-monastery-belongs-to-udi-cultural-heritage/> (15.05.2021)

Compendium, cultural policies and trends, Azerbaijan, <https://www.culturalpolicies.net/database/search-by-country/country-profile/category/?id=4&gl=1>,

profile updated in October, 2021.

Destruction of the cemetery of Syghnakh, <https://monumentwatch.org/en/alerts/>

[destruction-of-the-cemetery-of-syghnakh/](https://monumentwatch.org/en/alerts/destruction-of-the-cemetery-of-syghnakh/), 9.06.2021.

Destruction of the memorial complex in Azokh village of Hadrut, [https://monumentwatch.](https://monumentwatch.org/en/alerts/destruction-of-the-memorial-complex-in-azokh-village-of-hadrut/)

[org/en/alerts/destruction-of-the-memorial-complex-in-azokh-village-of-hadrut/](https://monumentwatch.org/en/alerts/destruction-of-the-memorial-complex-in-azokh-village-of-hadrut/), 28.08.2021.

Destruction of the memorial devoted to the genocide victims in Shushi, <https://monumentwatch.org/en/alerts/destruction-of-the-memorial-devoted-to-the-genocide-victims-in-shushi/>. 16. 05.2021.

Destruction of the memorial in Vorotan town (Kubatli), <https://monumentwatch.org/en/alerts/destruction-of-the-memorial-in-vorotan-town-kubatli/>, 22.10.2021.

<https://monumentwatch.org/en/alerts/new-facts-about-mets-tagher-village-the-destruction-of-the-cemetery-school-and-the-church-of-surb-astvatsatsin-by-the-bbc-world-news/>. 4.12.2022.

ПОЛИТИКА АЗЕРБАЙДЖАНА ПО ОТНОШЕНИЮ К КУЛЬТУРНОМУ НАСЛЕДИЮ АРЦАХА ПОСЛЕ 44-ДНЕВНОЙ ВОЙНЫ

Illegal reconstruction of the Surb Ghazanchetsots church in Shushi, [https://monumentwatch.](https://monumentwatch.org/en/alerts/illegal-reconstruction-of-the-surb-ghazanchetsots-church-in-shushi/)

[org/en/alerts/illegal-reconstruction-of-the-surb-ghazanchetsots-church-in-shushi/](https://monumentwatch.org/en/alerts/illegal-reconstruction-of-the-surb-ghazanchetsots-church-in-shushi/), 15.05.2021.

Julfa: The annihilation of the Armenian Cemetery by Nakhijevan's Azerbaijani authorities // <https://raa-am.org/wp-content/uploads/2021/11/Julfa-The-Annihilation-of-the-Armenian-Cemetery-by-Nakhijevans-Azerbaijani-Authorities.pdf>

Member states, Azerbaijan, <https://en.unesco.org/countries/azerbaijan>, 12.03.2022.

Memorial dedicated to the victims of World War II and the First Artsakh War was desecrated in Azokh village, <https://monumentwatch.org/en/alerts/memorial-dedicated-to-the-victims-of-world-war-ii-and-the-first-artsakh-war-was-desecrated-in-azokh-village/>, 11. 05. 2022.

New facts by the BBC World News about the destruction of the cemetery, school and the church of Surb Astvatsatsin in Mets Tagher village, The Statement of the President of Azerbaijan on the Church of Tsakuri, <https://monumentwatch.org/en/alerts/>

the-statement-of-the-president-of-azerbaijan-on-the-church-of-tsakuri/, 04.05.2021.

Брайзе запретили посетить армянское кладбище Джуги // <https://rus.azatutyun.am/a/9501535.html>.

Конвенция о защите культурных ценностей в случае вооруженного конфликта. Гаага, 14 мая 1954 года.

Коротко о культурной стратегии Азербайджана // [https://www.culturepartnership.](https://www.culturepartnership.eu/article/korotko-o-kuljturnoy-strategii-azerbaydjana)

[eu/article/korotko-o-kuljturnoy-strategii-azerbaydjana](https://www.culturepartnership.eu/article/korotko-o-kuljturnoy-strategii-azerbaydjana).

Конвенция о защите культурных ценностей в случае вооруженного конфликта. Гаага, 14 мая 1954 года, [https://www.icrc.org/ru/doc/resources/documents/ misc/treaties-cultural-properties-140554.htm](https://www.icrc.org/ru/doc/resources/documents/misc/treaties-cultural-properties-140554.htm)

Закон Азербайджанской Республики от 21 декабря 2012 года № 506-IVQ. О культуре, https://online.zakon.kz/Document/?doc_id=31498071&pos=5;-106#pos=5;-106]

THE FACTOR OF CULTURE IN THE CONTEXT OF AZERBAIJAN'S FOREIGN POLICY

Keywords: Cultural heritage of Artsakh, cultural policy of Azerbaijan, multiculturalism, cultural identity, cultural image, “occupational heritage”, modification of heritage identity.

The purpose of the article is to review the main directions of Azerbaijan's cultural policy towards the cultural heritage of Artsakh. We will consider the cultural policy of Azerbaijan in its two main directions. The first direction is aimed at the foreign/international audience to present the “multicultural” and “tolerant” nature of Azerbaijan. We will present the main mechanisms and methods used by the Azerbaijani authorities to create their own cultural image in foreign policy (laws, cooperation, financial investments, etc). The second direction is focused on the internal audience. As a result of the search, we can state that the political system of Azerbaijan is aimed at the destruction, transformation and privatization of other (mainly Armenian) cultural elements. Since the ceasefire of the 44-day Artsakh war, all the levers of Azerbaijan's foreign policy are seeking to change the cultural image of the country for an international audience, moving from an “aggressor” to a “peacemaker” or “protector of culture”, while at the same time continuing to appropriate and destroy the Armenian heritage. In the article we will consider the ways and means of Azerbaijan's policy, which are becoming fundamental for changing the cultural image of Azerbaijan.

ФАКТОР КУЛЬТУРЫ В КОНТЕКСТЕ ВНЕШНЕЙ ПОЛИТИКИ АЗЕРБАЙДЖАНА

Ключевые слова: Культурное наследие Арцаха, культурная политика Азербайджана, мультикультурализм, культурная идентичность, культурный имидж, «оккупационное наследие», модификация идентичности наследия.

Целью статьи является анализ основных направлений государственной политики Азербайджана по отношению к культурному наследию Арцаха. Здесь мы рассмотрим политику Азербайджана в двух ее основных направлениях. Первое направление нацелено на международную аудиторию для представления «мультикультурного» и «толерантного» характера своей страны. Основные механизмы и методы, используемые властями Азербайджана для создания своего культурного имиджа во внешней политике, – это видимость соблюдения законов, международное сотрудничество, финансовые инвестиции и т. д. Второе направление – это реальная политика Азербайджана, проводимая внутри страны. В результате поиска собственной культурной идентичности идеология Азербайджана направлена на уничтожение, преобразование и приватизацию чужих (в основном армянских) культурных элементов и культурного наследия. После прекращения огня 44-дневной Арцахской войны все рычаги внешней политики Азербайджана направлены на то, чтобы изменить культурный образ своей страны в глазах международной аудитории, перейдя от «агрессора» к «миротворцу» и «защитнику культуры». В то же время Азербайджан методично продолжает присваивать и уничтожать армянское культурное наследие. В статье мы рассмотрим пути и средства этой двуликой политики Азербайджана, которая стала основополагающей для изменения культурного имиджа этой страны.

**ՊԱՆԹՅՈՒՐՔԻԶՄԻ ԵՎ ՊԱՆԻՍԼԱՄԻԶՄԻ
ԽՈՍՈՒՅԹԸ 1988–1989 ԹԹ. ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՄՈՒԼՈՒՄ
ԵՎ ՏՊԱԳԻՐ ՈՉ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆՆԵՐՈՒՄ**

1988 թ. Արցախյան շարժման սկզբնավորմանը զուգընթաց հայկական մամուլում և հանրային խոսույթում սկսում են շրջանառվել պանթյուրքիզմի և պանիսլամիզմի վերաբերյալ քննարկումները: Խորհրդային Հայաստանի մամուլը, չհաշված առանձին բացառությունները, պանթյուրքիզմի և պանիսլամիզմի խնդիրներին չէր անդրադառնում, թեև այդ հարցի վերաբերյալ գիտական բազմաթիվ ուսումնասիրություններ և գրքեր, այնուամենայնիվ, տպագրվում էին: Ի տարբերություն պաշտոնական մամուլի՝ խնդիրը լայնորեն քննարկվում էր այնպիսի ինքնահրապարակումներում, ինչպիսիք էին, օրինակ, «Անկախություն»-ը և «Հայ դատ»-ը:

Հայկական հասարակական-քաղաքական միտքը պանթյուրքիզմը դիտարկում էր տարբեր տեսանկյուններից: Ոմանք այն համարում էին հին և 19-րդ դարի վերջի, 20-րդ դարի սկզբի գաղափարախոսություն, որը 1988 թ. դրությամբ չունեւ էական նշանակություն Հայաստանի համար: Մյուսները, պանթյուրքիզմը համարելով սպառնալիք, գտնում էին, որ Հայաստանը դրան կարող է դիմակայել միայն Ռուսաստանի օգնությամբ:

Պանթյուրքիզմի և պանիսլամիզմի խնդիրը, պաշտոնական մամուլի լուսաբանությանը չարժանանալով, քննարկվում էր նաև բազմափառ հանրահավաքներում: Դեռևս 1988 թ. մարտին, երբ Ղարաբաղ կոմիտեն ձևավորման ընթացքում էր, խնդրին անդրադառնում է կոմիտեի անդամ Վազգեն Մանուկյանը: Հեղափոխություն պանթյուրքիզմի հարցը բարձրացնում է Ղարաբաղյան շարժման հայաստանյան կոմիտեն:

Հայկական պաշտոնական մամուլը պանթյուրքիզմի վրանգին սկսում է անդրադառնալ 1989 թ. երկրորդ կեսից: Այդ պահից սկսած այն աստիճանաբար դառնում է մեղիա քննարկման առարկա և շարունակում է մնալ հայկական հասարակական-քաղաքական միտքի շրջանակներում մինչև Հայաստանի անկախության հռչակումը՝ հեղափոխություն վերածվելով հայ-թուրքական հարաբերությունների ներկայի ու ապագայի վերաբերյալ քննարկման:

Բանալի բառեր: Արցախյան շարժում, պանթյուրքիզմ, հայկական մամուլ, ինքնահրատ մամուլ, հայկական անկախ պետականություն:

Ղարաբաղյան շարժման սկիզբը, ավանդաբար, համարվում է 1988 թ. փետրվարը, երբ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի ժողպատգամավորների խորհուրդը դիմում է Խորհրդային Հայաստանի, Խորհրդային Ադրբեջանի և ԽՍՀՄ Գերագույն խորհուրդներին՝ խնդրելով մարզը միավորել Հայաստանի հետ: Որոշումից անմիջապես հետո Հայաստանի տարբեր շրջաններում սկսվում են բազմամարդ հանրահավաքները, «Ղարաբաղ» կոմիտեի ձևավորումը և ընդհանրապես՝ Շարժումը: Պետք է նշել, սակայն, որ Լեռնային Ղարաբաղի խնդիրը ավելի վաղ ժամանակներից էր հայ հանրության ուշադրության կենտրոնում: Նույն ժամանակաշրջանում ակտիվորեն քննարկվում էր նաև Հայոց Ցեղասպանության ճանաչման, թուրքական սպառնալիքի, պանթյուրքիզմի և այլ հարակից հարցեր:

Հայկական պաշտոնական մամուլը՝ «Սովետական Հայաստան», «Ավանգարդ», «Երեկոյան Երևան» և այլ թերթերը, հասկանալի պատճառներով, պանթյուրքիզմի մասին գրեթե չէին գրում: Այս խնդրին գլխավորապես անդրադառնում էին գիտական-ակադեմիական շրջանակները: 1983 թ. Երևանում լույս է տեսնում պատմաբան Զոն Կիրակոսյանի «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ» գրքի երկրորդ հատորը¹, որտեղ, բացի 20-րդ դարի սկզբի իրադարձություններից, անդրադարձ կար նաև ժամանակակից պանթյուրքիզմին և թուրքական սպառնալիքին: Գրքի 6-րդ գլխում, որը վերնագրված էր «Թուրքիզմն այսօր», հեղինակն անդրադառնում էր 20-րդ դարի 70-80-ական թվականներին Թուրքիայի Հանրապետության ներքին ու արտաքին քաղաքականությանը: Մեջբերելով Թուրքիա Օզալի հարցազրույցներից մեկը՝ Զոն Կիրակոսյանը նրան համարում էր «նեոպանթյուրքիզմի գաղափարախոս»²: Թուրքական ազգայնականությունն ու պանթյուրքիզմը գիտնականը դիտարկում էր որպես կոմունիզմի դեմ ուղղված սպառնալիք, որի ակունքներում կանգնած էր Հյուսիս-Ատլանտյան դաշինքն ու ԱՄՆ-ն: Պանթյուրքիզմի ջատագովներից էր նաև Արփասլան Թյուրքեշը, որը «պանթյուրքիստական գաղափարախոսությունը հռչակեց որպես միջոց հակակոմունիստական մարտաշունչ հայացքներ քարոզելու համար»³:

¹ Կիրակոսյան 1983:

² Նույն տեղում, 411:

³ Նույն տեղում, 413-414:

20-րդ դարի 80-90-ական թվականներին թուրքական վտանգի և պանթյուրքիզմի մասին ծավալուն անդրադարձ կար նաև Հրաչիկ Սիմոնյանի «Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից» մենագրությունում¹: Թեև գիրքը լույս է տեսել 1991 թ.-ին, սակայն գրքում անդրադարձ կար 80-ականների երկրորդ կեսին պանթյուրքիստական սպառնալիքներին:

Ղարաբաղյան և ազգային-ազատագրական շարժմանն անմիջապես նախորդած շրջանում պանթյուրքիզմի վերաբերյալ հոդվածներ հայկական մամուլում գրեթե չկային: Փոխարենը գրում էին Հայոց Ցեղասպանության ճանաչման մասին, զոհերի հարազատների և վերապրածների պատմություններ, հուշեր, գիտական հետազոտություններ: 1987 թ. նման բովանդակությամբ հոդվածներ տպագրվում էին «Գարուն» ամսագրում: 1987 թ.-ի փետրվարի համարում լույս է տեսնում սփյուռքահայ գրող, հրապարակախոս Թորոս Թորանյանի «Անապատը տակավին կհուզվի» հուշագրությունը, որտեղ խոսվում է նաև ցեղասպանության ցավը, կորուստը մոռանալու անհնարինության մասին²:

Պատմական արդարության վերականգնման, վնասի փոխհատուցման գաղափարն արտահայտվում էր նաև գեղարվեստական ստեղծագործություններում: «Գարուն»-ի 1987 թ. 7-րդ համարում վերոնշյալ խնդիրը թեև հպանցիկ, սակայն, մեր կարծիքով՝ ազդեցիկ, արծարծվում է Գևորգ Հակոբյանի «Մարեին էլ մահ չկա» պատմվածքում, որը գաղթից ու ցեղասպանությունից փրկված մի կնոջ մասին է, ում որդին Երևանում ուսումնական տարիները հետո մորը տանում է քաղաք: Երևանում մայր և որդի մտնում են հանրախանութ, որի մեծադիր հայելու առջև հերոսուհին՝ Մարեն, տեսնում է իրեն, սակայն կարծում է, թե իր հին՝ կորցրած հայրենիքի ծանոթներից է: Ու թևերը բացելով մոտենում է ողջագուրվելու, սակայն բախվում է հայելուն ու կոտրում: Որդին խանութի տնօրենին առաջարկում է կրկնակի փոխհատուցել վնասը:

«– Վնասը... դու ինչո՞ւ հատուցես...»,– ասաց դիրեկտորը,– այդ վնասը անհատուցելի է, երիտասարդ: Իսկ հայելին հենց վաղը իր տեղում կլինի»³:

1987 թ. հունիսի 18-ին Եվրախորհրդարանն ընդունում է հատուկ բանաձև, որը ճանաչում էր 1915-17 թթ. Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած «ողբերգական իրադարձությունները» որպես ցեղասպանություն⁴:

¹ Սիմոնյան 1991:

² «Գարուն», թիվ 2, 1987, էջ 55:

³ «Գարուն», թիվ 7, 1987, էջ 42-45:

⁴ European Parliament Resolution, https://www.armenian-genocide.org/Affirmation.152/current_category.7/affirmation_detail.html: Դիտվել է՝ 23.03.2024թ.:

Միակ թերթը, որն անդրադառնում է Ստրասբուրգի որոշմանը, Սփյուռքահայության հետ կապի կոմիտեի պաշտոնաթերթ «Հայրենիքի ծայն»-ն էր, որի հունիսի 24-ի թիվ 26 համարում տպագրված էր ՏԱՍՍ գործակալության համառոտ հաղորդագրությունը¹: Եվրախորհրդարանի որոշման մյուս անդրադարձը գեղարվեստական էր. «Գարուն» ամսագրի 1987 թ. նոյեմբերի համարում տպագրվում է Էդվարդ Միլիտոնյանի «Ստրասբուրգ-87» բանաստեղծությունը²:

Ի տարբերություն մյուս թերթերի՝ «Հայրենիքի ծայն»-ն առավել շատ էր անդրադառնում Հայոց Ցեղասպանությանը, պանթյուրքիզմի սպառնալիքին, ցեղասպանությունը ժխտելու Թուրքիայի քաղաքականությանը և հարակից այլ հարցերին:

1987 թ. օգոստոսի 5-ի համարում «Հայրենիքի ծայն» թերթում տպագրվում է հարցազրույց պատմաբան Ռուբեն Սահակյանի հետ, ով նշել էր, որ «մեր օրերում անգամ Թուրքիան օգտագործում է այնպիսի տեսություններ, ինչպիսիք են պանիսլամիզմը, պանթյուրքիզմը, բուրժուական նացիոնալիզմը, ծավալապաշտությունը և այլն»: Նա նաև նշում էր, որ թուրքական պատմագրության «հակագիտական, հակառուսական պնդումները լայն աջակցություն են գտնում Թուրքիայի կառավարող շրջանների կողմից»³:

Բովանդակային նույն գիծն ունեւ պատմական գիտությունների թեկնածուներ Արման Կիրակոսյանի և Ռուբեն Սաֆրաստյանի ծավալուն հոդվածը «Հայրենիքի ծայն» թերթի հոկտեմբերի 7-ի համարում: Հոդվածում անդրադարձ կա նաև պանթյուրքիզմին, իսկ որպես ժամանակակից Թուրքիայի ծավալապաշտական քաղաքականության օրինակ՝ բերվում էր 1974 թ. Կիպրոսի տարածքի մի մասի զավթումը⁴:

Բովանդակային առումով հայկական մամուլի կերպափոխումը սկսվեց 1987 թ. աշնանը, երբ աստիճանաբար ձևավորվում էր նոր ինքնահրատ մամուլը (самиздат): Այն պաշտոնական չէր, տպագրվում էր կիսագաղտնի, հիմնականում՝ գրամեքենայով և բազմացվում: Հաշվի առնելով, սակայն, ինքնահրատի տարածման ծավալները, բովանդակային կառուցվածքը՝ կարծում ենք, որ դրանք կարելի է համարել մամուլի օրգան: Առաջին ինքնահրատ թերթը, որը լույս է տեսնում Խորհրդային Հայաստանում վերակառուցման շրջանում, Ազգային ինքնորոշում միավորման «Անկախություն» թերթն էր:

¹ Եվրապառլամենտը հայերի ցեղասպանության մասին, «Հայրենիքի ծայն», 24 հունիսի, 1987 թ., թիվ 26:

² Միլիտոնյան, Ստրասբուրգ-87, «Գարուն», նոյեմբեր, թիվ 11, 1987, էջ 38:

³ «Հայրենիքի ծայն», 5 օգոստոսի, 1987, թիվ 32:

⁴ «Հայրենիքի ծայն», 7 հոկտեմբերի, 1987, թիվ 41:

1988 թ. հունվարի 30-ին, 5-րդ համարում «Անկախություն» թերթն անդրադառնում է Թուրքիայի հետ հարաբերությունների խնդրին: Ոչ մեծ խմբագրականում պանթյուրքիզմի մասին ուղիղ հիշատակություն չկար, սակայն անդրադարձ կար թուրքական սպառնալիքին, որը Հայաստանի հանրության որոշ շրջանակներ դիտում էին որպես անկախությունից հրաժարվելու պատճառ:

«Անկախությունից վախեցող սակավաթիվ մարդկանց հիմնական կռվանը ռուսական 150-ամյա հետևյալ շուտասելուկն է. «Հենց որ Ռուսաստանից անջատվեցիք, մուսուլմանները մեզ կուտեն»: ...Նախ՝ ոչ թե մենք ենք Թուրքիայից հողեր գրավել, այլ հակառակը: Այսինքն՝ պահանջատերը մենք ենք, ոչ թե նրանք: Երկրորդ՝ 1918 թ. մայիսի 28-ին, երբ Հայաստանն անկախացավ, երբ դեռ թարմ էին Եղեռնի հետքերը, երբ թվում էր, թե մեր և Թուրքիայի մեջ անհնար է որևէ կապ հաստատել, Թուրքիան մեր անկախությունը ճանաչող առաջին պետություններից էր և մեզ հետ դիվանագիտական հարաբերություններ ուներ: Դա այդպես էր, քանզի Արևելահայաստանի անկախացումը Թուրքիայի շահերին բացարձակապես չի դիպել և չի դիպելու: Ընդհակառակը, Թուրքիային ավելի շատ ձեռնտու է (նույնիսկ Արևմտահայաստանը զիջելու գնով) հարևանություն անել չեզոք, անկախ Հայաստանի, քան անընդհատ տաք ջրերը ձգտող Ռուսաստանի հետ: ...Այսօրվա պայմաններում, երբ կա Հայկական հարցն ընդունած Եվրոխորհրդարան, երբ կա ՄԱԿ, երբ ունենք բավական ուժեղ ու ազդեցիկ Սփյուռք, ԳՈՆԵ Թուրքիայի կողմից մեր անկախության դեմ որևէ ոտնձգություն ԲԱՅԱՌՎՈՒՄ է»¹:

Թուրքիայի հետ հարաբերություններին ու պանթյուրքիզմին անդրադառնում էր նաև «Հայ դատի պաշտպանության ընկերություն» կազմակերպության «Հայ դատ» պաշտոնաթերթը: Կազմակերպությունը ստեղծվել էր 1987 թ. վերջին, որի ղեկավար Հովիկ Վասիլյանը նույնպես 1960-ականների քաղաքական այլախոհներից էր, հակախորհրդային գործունեության մեղադրանքով ձերբակալվել էր և աքսորվել: «Հայ դատ» թերթի և կազմակերպության դիրքորոշումը Թուրքիայի հանդեպ էապես տարբերվում էր ԱԻՄ-ի «Անկախություն»-ից: Թերթը պանթյուրքիզմը սպառնալիք էր համարում, սակայն գտնում էր, որ այդ սպառնալիքին դիմակայելու համար անհրաժեշտ է «խորհրդային ժողովուրդների համակեցությունը»:

«Պատմական ներկա ժամանակաշրջանում հայերիս ձեռնտու է ապրել ու պաշտպանվել սլավոնական և այլ սովետական ժողովուրդների

¹ «Անկախություն», 5 (15), 30 հունվարի, 1988, էջ 100-101:

համակեցության մեջ, բայց ապրել ու պահպանվել, ոչ թե աստիճանաբար կուլ գնալ թուրք-թաթարական հին ջարդարարների նոր՝ դիմակավորված ժառանգների հորձանքին: ...Իրականություն է, որ Անդրկովկասում գուցե ամենաշատը հայերն են շահագրգռված, որ պահպանվի ու ամրանա սովետական համակեցությունը՝ որպես պանթյուրքիստական նկրտումների հակակշիռ», - գրված էր թերթում¹:

Պանթյուրքիզմի խնդիրը, որը 1988 թ. սկսված ժողովրդական շարժման համատեքստում դիտարկվում էր որպես ուղիղ սպառնալիք Հայաստանի և հայ ժողովրդի գոյությանը, ուներ այնպիսի հանրային նշանակություն, որ քննարկվում էր նաև բազմահազարանոց հանրահավաքներում: 1988 թ. մարտի 22-ին «Ղարաբաղյան» շարժման կազմկոմիտեի անունից տարածվում է թռուցիկ, որը կոչվում էր «Ի՞նչ է պանիսլամիզմը և ի՞նչ է պանթյուրքիզմը»: Թռուցիկի հեղինակը Վազգեն Մանուկյանն էր և ստորև ներկայացվող հատվածները մեջբերվում են Վազգեն Մանուկյանի «Հայկական երազանքը գոյատևման փակուղում» գրքից: Թռուցիկում նշված էր, որ ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունները ցանկանում են հայերի և ադրբեջանցիների բախումներ հրահրել, որի համար հաճախ օգտագործում են պանիսլամիզմ և պանթյուրքիզմ հասկացությունները: Թռուցիկում գրված էր, որ պանիսլամիզմն ու պանթյուրքիզմը ներկայում «ուղղված չեն ոչ մահմեդական որևէ ժողովրդի դեմ»:

«Պանթյուրքիզմի նպատակն է եղել մի պետության մեջ միավորել բոլոր թյուրքալեզու ժողովուրդներին՝ Խաղաղ օվկիանոսից մինչև Բալկաններ: Դա չհաջողվեց ինչպես XIX դարի վերջին, այնպես էլ XX դարի սկզբին: Այժմ այդ խնդիրն առավել ևս անլուծելի է: Պանթյուրքիզմը, ունենալով փոքր քաղաքական կշիռ, պահպանվել է որպես մշակութային, պատմագիտական, լեզվական, կրոնական, էթնիկական ընդհանրության գաղափար: ...Մեր ժողովուրդը պետք է իմանա, որ թե՛ պանիսլամիզմը և թե՛ պանթյուրքիզմն իրենց այսօրվա վիճակով սկզբունքորեն բնավ ուղղված չեն հայության դեմ»²:

Հանրահավաքներում պանթյուրքիզմի սպառնալիքին անդրադառնում են նաև ավելի ուշ՝ 1988 թ. օգոստոսին: Ազգային ինքնորոշում միավորման «Հայրենիք» ամսագիրը, որի խմբագիրը Մովսես Գորգիսյանն էր, օգոստոսի թողարկման մեջ հրապարակում է «Ղարաբաղ» կոմիտեի անդամ Վազգեն Մանուկյանի ելույթը Անկախության հրապարակում: Ելույթի հիմնական ուղերձը դիմակայությունն էր «Եթե մենք մենակ լինենք, թուրքերը

¹ «Հայ դատ», թիվ 2, 1988, էջ 6-7:

² Մանուկյան 2002, 5:

մեզ կոչնչացնեն» թեզին: Հեղինակը նշում էր, որ «ով ասում է՝ եթե մենակ լինենք, թուրքերը մեզ կոչնչացնեն, նա փաստորեն ասում է՝ Ղարաբաղը մեզ պետք չէ»:

«Ասում են, որ եթե նորից առանձին հանրապետություններ լինեն, Թուրքիան, միանալով Ադրբեջանին, կստեղծեն մի հզոր պետություն, իսկ Հայաստանը կանգնած է նրանց ճանապարհին, և նրանք ստիպված կլինեն ոչնչացնել Հայաստանը: ...20-րդ դարում այդ կրոնական, էթնիկական շարժումները համարյա վերացել են: ...պանթյուրքիզմի, պանիսլամիզմի ծրագրերը ինչ-որ տեղ մնացել են, բայց արդեն ուժ չունեն»¹:

1989 թ. առաջին կեսին ՀԼԿԵՄ Կենտկոմի պաշտոնաթերթ «Ավանգարդ»-ում քննարկվող թեմաների վերաբերյալ հոդվածներ չկան: Սակայն նկատվում է, որ նույն ժամանակամիջոցում թերթն աստիճանաբար ավելի ու ավելի շատ էր անդրադառնում ազգային հարցերին:

Ժամանակակից պանթյուրքիզմի վերաբերյալ առաջին արձագանքը թերթի հոկտեմբերի 6-ի համարում էր, որտեղ տպագրված էր Զորի Բալայանի և Վաչագան Գրիգորյանի «Ապրելու ստրատեգիան»² ծավալուն հոդվածը: Հոդվածի երկու հեղինակն էլ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզից ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ընտրված պատգամավորներ էին: Հոդվածի առանձնահատկությունն այն էր, որ պատգամավորները կարճ ժամանակ առաջ մասնակցել էին ԽՍՀՄ Գլխավոր շտաբի նիստին, որտեղ ներկայացրել էին իրենց ռազմավարական տեսակետները, որն էլ տպագրվել էր թերթում: Հոդվածի հիմնական միտքը Խորհրդային Միության հարավային շրջաններում տարեց տարի ավելացող թուրքական բնակչությունն էր: Ըստ հեղինակների՝ Թուրքիայում տպագրված քարտեզներից մեկում նշված էր, թե ԽՍՀՄ որ հանրապետություններում են մահմեդականներ ապրում, և որոնց Թուրքիան մտադիր է ներառել իր պանթյուրքիստական նպատակներում: Հեղինակները նաև անդրադառնում էին Լեռնային Ղարաբաղի խնդրին՝ նշելով, որ այն «ազգային պատվախնդրության հարց չէ»: «Դա ավելի շուտ մի հայելի է, որի մեջ արտացոլվում է մեր ողջ երկրի, և ամենից առաջ Ռուսաստանի, տակավին ոչ մեկի կողմից չնկատված ծանր դրությունը: Ադրբեջանի և ընդհանրապես պանթյուրքիստների համար Ղարաբաղը դեպի Թուրքիա տանող ճանապարհին ընկած քար չէ սոսկ: Դա կրակակետ է: Կրկնում ենք՝ ոչ թե կրակների կետ, այլ կրակակետ, ինչպես ԵԿԿ-ն (երկարաժամկետ կրակակետ)», - գրում էին հեղինակները:

¹ «Հայրենիք», 1988, օգոստոս, թիվ 4, էջ 10-11:

² Բալայան, Գրիգորյան 1989, թիվ 116:

Մի քանի օր անց դարձյալ «Ավանգարդ» թերթում տպագրվում է «Խաչվածին մահ չկա» հոդվածի հերթական մասը¹, որտեղ մեջքերված էր Զորի Բալայանի ելույթներից մեկը: Հոդվածը շարունակաբար տպագրվում էր թերթում, որտեղ պատմվում էր ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավորական հանձնաժողովի՝ Լեոնային Ղարաբաղի ինքնավար մարզ սեպտեմբերի վերջին կատարած այցելության մասին: Հանձնաժողովի հետ ԼՂԻՄ էր գնացել նաև Զորի Բալայանը և իր ելույթներից մեկում կրկին անդրադարձել պանթյուրքիզմի ժամանակակից սպառնալիքներին և Ղարաբաղի՝ որպես պանթյուրքիզմի դեմ պատվար լինելու խնդրին:

Հայաստանի՝ որպես պանթյուրքիզմի պատնեշի հարցը 1989 թ. ամռան սկզբին էլ ավելի էր թեժացել: Թերևս դա է պատճառը, որ խնդրին կրկին անդրադառնում է «Ղարաբաղ» կոմիտեն: 1989 թ. հունիսի 24-ին Գերագույն խորհրդում ելույթ է ունենում Լևոն Տեր-Պետրոսյանը՝ նշելով, որ «պանթյուրքիզմի ծրագրի իրականացումը խափանող և դրանում Ռուսաստանի շահերին ծառայող գործոնի ըմբռնումը Հայկական հարցը կրկին ներքաշում է միջազգային քաղաքական հարաբերությունների բարդ ոլորտը, որ հղի է մեր ժողովրդի ճակատագրի համար վտանգավոր հետևանքներով»²:

«Պանթյուրքիզմի վտանգի, Թուրքիայի կողմից նվաճված հայկական տարածքների խնդրի արծարծումն այս պահին հետապնդում է միայն ու միայն մեկ նպատակ. հայ ժողովրդին ներկայացնել որպես ռեանշիստներ, վարկաբեկել արցախյան արդարացի պահանջատիրությունը և դրանով գրկել նրան վերոհիշյալ դաշնակիցների համակրանքից»³:

Նշենք նաև, որ Լևոն Տեր-Պետրոսյանի այս ելույթը տպագրվել է «Դրօշակ» թերթում, որի վերնագիրն էր «Լևոն Տեր-Պետրոսյանի մտահոգիչ ելույթը»⁴: Նույն համարում կար նաև Զորի Բալայանի «Լինել, թե չլինել» հոդվածը⁵, որը Լևոն Տեր-Պետրոսյանի թեզերի տրամագծորեն հակառակ ուղեգծին էր հետևում:

1988-89 թթ.-ից հետո հայկական մամուլում պանթյուրքիզմի քննարկումը չի ավարտվում: Աստիճանաբար ստանալով նոր բովանդակություն՝ այն վերածվում է Թուրքիայի հետ հարաբերություններ հաստատել-չհաստատելու և ընդհանրապես՝ հայ-թուրքական հարաբերությունների ներկայի ու ապագայի քննարման:

¹ «Ավանգարդ», 18 հոկտեմբերի, 1989թ., թիվ 120:

² Տեր-Պետրոսյան 2006, 43-45:

³ Նույն տեղում:

⁴ «Դրօշակ», (Աթենք) 5 յուլիս, 1989 թ., էջ 18:

⁵ Նույն տեղում, 14-17:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Բալայան Զ., Գրիգորյան Վ., Ապրելյու ստրատեգիան, «Ավանգարդ», 6 հոկտեմբերի, 1989, թիվ 116:

Կիրակոսյան Զ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, գիրք երկրորդ, (1915-ից մինչև մեր օրերը), Երևան, 1983, «Հայաստան» հրատ.:

Մանուկյան Վ., Հայկական երազանքը գոյատևման փակուղում, Երևան 2002:

Միլիտոնյան Էդ., Ստրասբուրգ-87, «Գարուն», նոյեմբեր, թիվ 11, 1987: Սիմոնյան Հր., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1991թ., «Հայաստան» հրատ.:

Տեր-Պետրոսյան Լ., Ընտրանի: Ելույթներ, հոդվածներ, հարցազրույցներ, Երևան, 2006:

«Անկախություն», թիվ 5 (15), 30 հունվարի, 1988թ.

«Ավանգարդ», թիվ 120, 18 հոկտեմբերի, 1989թ.

«Գարուն», թիվ 2, 1987թ.

«Գարուն», թիվ 7, 1987թ.

«Դրօշակ», (Աթենք) 5 յուլիս, 1989թ.

«Հայ դատ», թիվ 2, 1988թ.

«Հայրենիք», թիվ 4, օգոստոս, 1988թ.

«Հայրենիքի ծայն», թիվ 26, 24 հունիսի, 1987թ.

«Հայրենիքի ծայն», թիվ 32, 5 օգոստոսի, 1987թ.

«Հայրենիքի ծայն», թիվ 41, 7 հոկտեմբերի, 1987թ.

European Parliament Resolution, https://www.armenian-genocide.org/Affirmation.152/current_category.7/affirmation_detail.html: Դիտվել է՝ 23.03.2024թ.

DISCOURSE ON PAN-TURKISM AND PAN-ISLAMISM IN THE ARMENIAN PRESS AND NONE OFFICIAL PUBLICATIONS (1988-1989)

Keywords: Artsakh movement, Pan-Turkism, Armenian press, independent press, independent Armenian statehood.

In 1988, alongside the beginning of the Artsakh movement, discussions about Pan-Turkism and Pan-Islamism started to emerge in the Armenian press and society. Although the newspapers of Soviet Armenia, with a few exceptions, did not cover this issue, academic studies and books on the topic were still being published. Unlike the official press, not official newspapers such as “Independence” and “Hay Dat” widely discussed the topic.

Armenian socio-political thought examined Pan-Turkism from various perspectives. Some viewed it as an outdated ideology of the late 19th and early 20th centuries, which by 1988 had lost its relevance for Armenia. Others saw Pan-Turkism as a threat that could only be countered by unifying Armenia with Russia.

The issues of Pan-Turkism and Pan-Islamism were also discussed at large rallies. As early as March 1988, during the formation of the «Karabakh» committee, this issue was raised by committee member Vazgen Manukyan. Later, the Armenian Committee of the Karabakh Movement also addressed the ideology of Pan-Turkism.

In the second half of 1989, the issue gradually began to be discussed in the official media of Soviet Armenia and continued to be relevant in Armenian socio-political thought up until the proclamation of Armenia’s independence. Subsequently, it evolved into a discussion about the present and future of Armenian-Turkish relations.

ДИСКУРС О ПАНТЮРКИЗМЕ И ПАНИСЛАМИЗМЕ В 1988-1989ГГ. В АРМЯНСКОЙ ПРЕССЕ И В ПЕЧАТНЫХ НЕОФИЦИАЛЬНЫХ ОРГАНАХ

Ключевые слова: Арцахское движение, пантюркизм, армянская пресса, независимая пресса, независимая армянская государственность.

В 1988 году, параллельно с началом Арцахского движения, в армянской прессе и обществе начали циркулировать дискуссии о пантюркизме и панисламизме. Несмотря на то, что газеты Советской Армении, за редким исключением, не освещали эту проблему, научные исследования и книги по данной теме всё же выходили в свет. В отличие от официальной прессы, вопрос широко обсуждался в таких неофициальных газетах, как «Независимость» и «Ай Дат».

Армянская общественно-политическая мысль рассматривала пантюркизм с разных точек зрения. Одни считали его старой идеологией конца XIX - начала XX веков, которая к 1988 году утратила своё значение для Армении. Другие видели в пантюркизме угрозу, которой можно противостоять только через единение Армении с Россией.

Проблемы пантюркизма и панисламизма также обсуждались на многотысячных митингах. Уже в марте 1988 года при формировании комитета «Карабах» эту тему поднимал его член Вазген Манукян. Позже к идеологии пантюркизма обращался и Армянский комитет Карабахского движения.

Во второй половине 1989 года вопрос постепенно становился предметом обсуждения в официальных СМИ Армении и продолжал оставаться актуальным в армянской общественно-политической мысли вплоть до провозглашения независимости Армении. В дальнейшем эти обсуждения переросли в дискуссию о настоящем и будущем армяно-турецких отношений.

**ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ
ԱՐՑԱԽՈՒՄ 44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ
(2021 - 2023 ԹԹ.)**

2020 թվականի 44-օրյա պատերազմից հետո մեծ թվով հուշարձաններ մնացին ադրբեջանական վերահսկողության տակ: Արցախի Հանրապետության հսկողության տակ մնացած հալածված 2021 -2022 թթ. շարունակվել են հնագիտական ուսումնասիրություններ:

Սույն աշխատանքի նպատակն է ներկայացնել 44-օրյա պատերազմից հետո Արցախի տարածքում իրականացված հնագիտական հետազոտությունները:

Նշված ժամանակահատվածում պեղման-մաքրման աշխատանքներ են իրականացվել Արցախի Հանրապետության Մարտունու, Մարտակերտի և Ասկերանի շրջաններում՝ Ծովափնյա գյուղի «Կարմիր Եկեղեցու» տարածքում և Քոլատակ գյուղի Մեծառանից Սբ. Հակոբավանքի վանական համալիրում:

Հետախուզական աշխատանքներ են իրականացվել Ասկերանի շրջանի Պատարա գյուղի Հավքախաղաց լեռնաճյուղի փեշին «Շինարեղ» տեղամասում, Մարտակերտի շրջանի Վաղուհաս գյուղի արևելյան հատվածում գտնվող «Քինչի հող» տեղամասում:

Բանալի բառեր՝ Արցախ, «Կարմիր եկեղեցի», Մեծառանից վանք, Ծովափնյա, Քոլատակ:

2020 թվականի 44-օրյա պատերազմից հետո Արցախի տարածքում իրականացվել են հնագիտական հետազոտություններ այն ժամանակ դեռևս հայկական վերահսկողության տակ գտնվող Մարտունու, Մարտակերտի և Ասկերանի շրջաններում:

Ծովատեղ գյուղի Կարմիր եկեղեցու հնագիտական հետազոտությունը

Կարմիր եկեղեցի համալիրը, որը հայտնի է նաև Մելիք Փաշայանների դամբարան անունով, գտնվում է Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի Ծովատեղ գյուղի արևելյան կողմում՝ հին գերեզմանոցի տարածքում գտնվող մի բլրի վրա (աղ.1,1)/: Հուշարձանի մասին տեղեկություններ են պահպանվել Սարգիս Զալալյանցի, Մակար Բարխուդարյանցի, Երվանդ Լալայանի աշխատություններում¹: Նշված հեղինակների վկայությունները հուշարձանի մասին տարբերվում են իրարից: Այսպես, եթե Սարգիս Զալալյանցը խոսում է մեկ քառախորան եկեղեցու մասին, որի միայն մեկ խորանը «կիսով չափ բարձր է հողի մակերևույթից», իսկ «երեքը հողի տակ են»², ապա Մակար Բարխուդարյանցը նշում է. «Դամբարանս ստորերկրեայ է և բաղկացած չորս պատկից մատուռներից, որոնց Ա-ն մեծ. Բ-ն միջակ մատուռներ են: Գ-ն եկեղեցի է՝ Դ-ն փոքր մատուռ է»³:

Եկեղեցու կառուցման արձանագրությունը տեղում չի պահպանվել: Ժամանակին այն տեսել են Սարգիս Զալալյանցն ու Մակար Բարխուդարյանցը: Ըստ Սարգիս Զալալյանցի բերած արձանագրության՝ եկեղեցին կառուցվել է ԶԾԵ (1506) թվականին, և այն կառուցել է Պետրոս եպիսկոպոսը⁴: Մակար եպիսկոպոս Բարխուդարյանցը նշում է. «Թվ. ՌՀ. (1621) Դավիթ եպիսկոպոս. յիշատակ է եկեղեցի վանքս որ լինի սա դամբարան և շիրիմ մերոց նախնեաց»⁵: Մ. Բարխուդարյանցին կրկնում է Երվանդ Լալայանը և բառացիորեն մեջ է բերում Մ. Բարխուդարյանցի ընթերցածը⁶: Այսպիսով, Մակար Բարխուդարյանցն ու Երվանդ Լալայանը եկեղեցու կառուցման թիվ են նշում 1621 թվականը:

Հարկ է նշել, որ եկեղեցու տարածքում պահպանված խաչքարերը թվագրվում են 12–13–րդ դդ. և 14–րդ դարով: Բոլոր արձանագիր խաչքարերը, որոնց մասին խոսում են Ս. Զալալյանցը, Մ. Բարխուդարյանցը, Ե. Լալայանը, կրում են միայն 16–րդ դարի թվականներ: Այսպես՝ Ս. Զալալյանցը ներկայացնում է 4 արձանագրություն, որոնցից երեքն ունեն հետևյալ թվականները՝ 1506, 1566, 1576: Մակար Բարխուդարյանցի ներկայացված 11 արձանագրությունից չորսը կրում են 1576, 1586, 1566, 1621

¹ Զալալեանց 1858, 333-334: Բարխուդարեանց 1895, 106 -108: Լալայան 1897, 49-50:

² Զալալեանց 1858, 333:

³ Բարխուդարեանց 1895, 107:

⁴ Զալալեանց 1858, 333:

⁵ Բարխուդարեանց 1895, 108:

⁶ Լալայան 1897, 49:

թվագրությունները (վերջի երկուսն այժմ տեղում չեն): Երվանդ Լալայանը նշում է 9 արձանագրություն, որոնցից չորսը 1566, 1576, 1586, 1621 թվականներով են թվագրվում: Բոլոր այս թվակիր խաչքարերից տեղում մնում են երկուսը՝ խորանի հյուսիսային ու հարավային կողմերում տեղադրված խաչքարերը՝ 1576 և 1586 թվականներով (աղ. I, 2, 3):

Կարմիր եկեղեցին բուսականությամբ պատված և ավերված վիճակում էր: Եկեղեցու ուրվագծվող դահլիճը ծածկված էր քարի ու հողի 0.50-0.80 մ հաստությամբ կույտով, այս շերտի տակ սկսվում է մաքուր կավահողի շերտ:

2022 թվականին այստեղ իրականացվել են պեղման և մաքրման աշխատանքներ (հնագիտական արշավախմբի ղեկավար՝ Վարդգես Սաֆարյան, ճարտարապետ՝ Մանվել Սարգսյան): Հնագիտական պեղումների հիմնական նպատակն էր գտնել մելիք Փաշայաններին պատկանող դամբարանը, սակայն համապատասխան թաղումներ այդպես էլ չեն հայտնաբերվել: Փոխարենն ի հայտ են եկել տարբեր ժամանակներին պատկանող խաչքարերի բեկորներ, արձանագիր քարեր, խեցանոթների բեկորներ, որոնց թվում՝ կավե քամիչի բեկորներ, տանիքի ծածկի սալիկների մասեր, խաչքարերի երկու բեկոր (աղ. I, 4, 5, 6):

Մասնավորապես հետաքրքիր է 12-13-րդ դարերին վերաբերող խաչքարի ներքնամասը, որը, որպես շինաքար, տեղադրվել է եկեղեցու ավագ խորանի հյուսիս-արևելյան անկյունում: Այն ներկայացնում է Արցախի՝ այդ ժամանակի խաչքարերում բավականին տարածված, «ընտանեկան դիմանկարի» թեման, ուր հարազատների միջավայրում ներկայացված է հանգուցյալը: Արձանագրությունը թեև վնասված է, բայց տեքստը հիմնականում հնարավոր է վերականգնել. «[Ես Գ]որգ/ [կա]նգեցի [խ]աչս ի վ[եր]ա տապանակ/[ի ո]րդո իմ/ [Թ՞]եանի: Որ կարդ/[աք՝ յաղաթս յիշեցեք]»: Արձանագրությունը հրապարակվում է առաջին անգամ (աղ. II, 1):

Եկեղեցու հարավային պատի մեջ, հորիզոնական դիրքում ագուցված են 12-13-րդ դարերի այլ խաչքարեր ևս, իսկ հյուսիսային և արևմտյան պատերում, որպես շինաքար, օգտագործվել են տապանաքարեր (աղ. II, 2):

Դիվան հայ վիմագրության 5-րդ հատորում Սեդրակ Բարխուդարյանը, խոսելով Կարմիր եկեղեցու մասին, նշում է, որ խորանի հյուսիսային խաչքարի քիվը ջարդոտված է, և այդ արձանագրությունը ներկայացնում է առանց մի հատվածի¹: Պեղման հենց առաջին օրը մենք գտել ենք այդ ջարդված կտորը չորս տառերով հանդերձ: Այսինքն կարելի է եզրահանգել, որ եկեղեցու դահլիճը առնվազն 80 տարի ծածկված էր հողավազի

¹ ԴՀՎ 1982, 160:

զանգվածով: Նույն Ս. Բարխուդարյանը իր կազմած ժողովածուում նշում է, որ հյուսիսային կողմի խաչքարի արձանագրության այն հատվածը, որտեղ նշվում է. «...ՀԱՆՈՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՍ ՍԱՀԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԿԱՆԳՆԵՑԻ ԶԽԱԶՍ Ի ՓՐԿՈՒԹԻՒՆ ԵՂԲԱՅՐ ԻՄՈՅ ՂԱԶԱՐԻՆ. ԱՂԱԻԹՍ ՅԻՇԵՑԷՔ» հրատարակիչների մոտ չի նշված ստույգ տեղադրությունը¹:

Պեղումները ցույց տվեցին, որ այդ արձանագրությունը ամբողջովին պահպանված վիճակում գտնվում է խորանի հյուսիսային հատվածում գտնվող խաչքարի ներքնամասում:

Խորանի հարավային ու հյուսիսային հատվածներում տեղադրված խաչքարերը ամրացված են կրաշաղախով, ընդ որում, խաչքարերի ստորին զարդանախշ մասերը մնացել են շաղախի տակ:

Նկատի ունենալով, որ Մ. Բարխուդարյանցի նշած դամբարան-մատուռը կարող է լինել հարավային ավանդատան տակ, հետախուզական հորատում ենք արել հարավային խաչքարի առջևի հատվածում: Դամբարան-մատուռի հետքեր չեն գրանցվել, բայց բացվել է մի հիմնահողային թաղում՝ առանց դագաղի: Հանգուցյալի ուղղվածությունը՝ արևմուտք արևելք, ձեռքերը փորին ծալած:

Մաքրելով դահլիճը՝ բացել ենք հյուսիսային պատի հատվածը, որտեղ տեղադրված է մի տապանաքար: Այդ պատին կից դրսից բացվել է ևս մեկ թաղում՝ հարավայինին զուգահեռ, ինչը թույլ է տալիս եզրակացնել, որ եկեղեցի-մատուռը կառուցվել է հին գերեզմատան վրա, որի տապանաքարերը առատորեն օգտագործվել են նոր կառույցում:

Պեղումների շնորհիվ հուշարձանը մաքրվել է, և դա հնարավորություն է տվել նաև չափագրելու եկեղեցին (աղ. II, 3):

Այսպիսով, պեղումները ցույց տվեցին, որ Կարմիր եկեղեցին միանալ թաղածածկ կիսաշրջանաձև խորանով կառույց է՝ կառուցված կոպտատաշ քարով: Եկեղեցու միակ մուտքը բացվում է հարավից: Խորանի արևելյան հատվածում պահպանվել է փոքր, դեպի ներս լայնացող լուսամուտը:

Մարտակերտի շրջանի Մեծառանից սբ. Հակոբավանքի 2023 թ. հետազոտությունը

Դեռևս 2013 թվականին սբ. Հակոբավանքում իրականացվել են պեղման և մաքրման աշխատանքներ (հնագիտական արշավախմբի ղեկավար՝ Գագիկ Սարգսյան, ճարտարապետ՝ Սամվել Այվազյան), որոնց շնորհիվ հուշարձանախումբն ազատվել է փարթամ աճած և շինությունները

¹ Նույն տեղում:

վտանգող բուսականությունից: Պաշտամունքային և արևելյան կողմի բնակելի շինություններն ու մուտքի շրջակայքի կառույցները մաքրվել են փլատակներից և կուտակված հողից:

Սբ. Հակոբավանքում պեղման և մաքրման աշխատանքները վերսկսվել են 2023 թվականի օգոստոսին (հնագիտական արշավախմբի ղեկավար՝ Վ. Սաֆարյան, ճարտարապետ՝ Սերգեյ Գալստյան)¹: Դրանք իրականացվել են վանքի հարավ-արևելյան, հյուսիս-արևմտյան և հարավային հատվածներում:

Պեղումների արդյունքում բացվել է կիսագետնափոր անկանոն ուղղանկյուն հատակագծով մի կառույց, որի արևմտյան ու հարավային պատերը համալիրի պարսպապատի մասն են կազմում (հյուսիսային պատի երկարությունը 6.32 մ է, իսկ հարավայինը՝ 5.56 մ, արևմտյան պատի երկարությունը՝ 3.00 մ, արևելյանը՝ 3.15 մ (աղ.III, 1): Կառույցը չունի ոչ մի լուսամուտ, պատուհան, իսկ հատակը լավ հարթեցված ժայռ է: Հարավ-արևմտյան անկյունում դեպի դուրս տանող մուտք կա: Հավանաբար նորաբաց կառույցը ծառայել է որպես պահեստ-սառնարան կամ մառան՝ միաբանների սննունդը թարմ պահելու համար:

Արդեն իսկ ճիմահողում գտնվել են երեք տառերով խաչքարի բեկոր և մեկ ուրիշը, որի արձանագրությունը ավարտվում է «[Ա]ՂԱԹՍ ՀԻՇ [ԵՑԵՔ]» բառերով (աղ.III,2): Մեկ այլ խաչքարի երեք բեկոր գտնվել է կառույցի հարավ-արևմտյան հատվածում՝ դուրս տանող մուտքի լիցքում: 1,30 մ խորության վրա գտնվել է խաչքարի բեկոր մի տող պահպանված արձանագրությամբ՝ «[ԳՐ]ԻԳՈՐ ԿԱՆԳՆԵՑԻ...» (աղ.III,3): Կառույցի հյուսիս-արևելյան հատվածում՝ 1,20 մ խորության վրա, գտնվել է XIII դ. խաչքարի մի մեծ բեկոր (պահպանված մասի չափերն են՝ 1,22 x 0,30 մ), իսկ 1.60 մ խորության վրա՝ խաչքարի վերնամաս, որի հակառակ կողմում պահպանվել է արձանագրություն (5 տող), և 1 մ երկարություն ունեցող պարզ խաչի հորինվածքով քարե սյուն:

Մուտքի լիցքում գտնվել են պղնձե մոմակալի վերին և հատակի մասերը, երկաթե հալոց, գամեր և շղթա: Հարավ-արևելյան անկյունում կառույցի հատակին, գտնվել է երկաթե մեծ խուփ, դռան ծխնի, քարե երկանքի կես, աստղաձև անցքերով պղնձե բուրվառի մաս (աղ.IV) :

¹ 2023 թ. պեղումները իրականացվել են «Մենք ենք, մեր սարերը» Տարածքային զարգացման գործակալության նախաձեռնությամբ և ֆինանսավորմամբ կազմված արշավախմբի կողմից: Պեղման-մաքրման աշխատանքները համաձայնեցվել են ԱՀ կառավարությանն առընթեր գրոսաշրջության և պատմական միջավայրի պահպանության վարչության «Պատմական միջավայրի պահպանության պետական ծառայություն» ՊՈԱԿ-ի հետ:

Խեցեղենը ներկայացված է մի քանի քրեղանների և սափորների իրանի, հատակի բեկորներով, բռնակներով, կղմինդրների տարբեր բեկորներով:

Համալիրի հյուսիս-արևմտյան հատվածի շինությունները պայմանական անվանվել են կառույցներ թիվ 2 և 3: Պեղումներով պարզվել է, որ երկու կառույցներն էլ անասնագուներ են՝ խոշոր քարերով պատրաստված ախոռ-մսուրքներով (աղ. V, 1): Այդ մասին են վկայում նաև 2-րդ և 3-րդ կառույցների ընդհանուր միջանկյալ պատի առջև գտնված կենդանիներին ջուր տալու քարե գուռը (աղ. V, 2) ու եզան պայտերը: Համար 2 կառույցի լիցքում գտնվել են բազմազան թափված քարեր, գամեր, կղմինդրի բեկորներ, սափորի կանթ: Հարավային պատի տակ գտնվել է քարի մի բեկոր՝ մելանագիր արձանագրությամբ (5 տող) (աղ. V, 3): Կառույցի հյուսիսային պատից 0,60 սմ հարավ՝ 1,10 սմ խորությամբ, գտնվել է խաչքարի բեկոր, որի հակառակ կողմում կա արձանագրություն (6 տող):

2-րդ և 3-րդ կառույցների առջև՝ ընդհանուր միջանկյալ պատից 0,75 սմ. հարավ, ճիմահողում գտնվել է արձանագիր խաչքարի բեկոր, որի վրա պահպանվել է չորս տող՝

ԵՍ ԶԱՔԱՐԷ ՈՐԴ [Ի]...

...ՎԱԽՏԱՆԳԱ ՏՐ

..ԽԱԶԵՆՈ..

...Ն... (աղ. V, 4)

Նույն հատվածում գտնվել են խաչքարի երեք բեկորներ՝ առանց արձանագրության: Խաչքարի մեկ բեկոր օգտագործված է որպես անկյունաքար երրորդ շինության մուտքի աջակողմյան շարվածքում: Երրորդ շինության հատակին գտնվել է խաչքարի մեծ բեկոր՝ թվագրված ՈԼ (1181 թ.) (աղ. V, 5): Այս խաչքարն իր հնությամբ երկրորդն է համալիրի տարածքում (853 թ. թվագրված խաչքարի պատվանդանից հետո): Երկրորդ գոմի հյուսիսային պատին՝ 1,95 սմ խորությամբ գտնվել է արձանագիր մի քար՝ 5 տող: Նույն գոմի հյուսիսային պատին՝ կից մսուրքի մակարդակին, բացվել է փոքր խորշ՝ հավանաբար աղ պահելու համար:

Հարավային պատի մոտ՝ դրսում, գտնվել է հավանաբար 10-րդ դարի խաչքարի մի բեկոր և մելանագիր ևս մի արձանագիր քար, որը երկրորդ կառույցում գտնված խաչքարի մասն է: Գտնվել են նաև ուրիշ խաչքարերի բեկորներ: Երկու գոմերի հարավային պատերի արևմտյան մասում գտնվել է արձանագրությամբ ևս մի քար: Երկու գոմերն էլ ունեցել են մեկական լուսամուտ:

Համալիրի հյուսիսային գավիթից 5 մետր արևմուտք բացվել է մի շարվածք, որը ձգվում է դեպի հարավ և միանում թիվ 2 կառույցի հարավային

պատին: Շարվածքի լայնությունն ընդամենը 0,38 -0,40 սմ է, ինչը ենթադրում է, որ այն հենապատի հատված է, որը կառուցվել է եկեղեցու և արևմտյան կառույցների արանքում հրապարակ ստեղծելու համար:

Հյուսիս-հարավ ձգվող այս պատի կենտրոնում (առաջին գոմի (կառուց թիվ 2) հարավային անկյունից 4,50 սմ հարավ) բացվել է դեպի եկեղեցի տանող չորս աստիճանով մուտք (լայնությունը 1,40 սմ) (աղ. V, 6): Աստիճանների մոտ՝ հողի մեջ, գտնվել է կալիպտերի բեկոր «էսայ» արձանագրությամբ: Նորաբաց մուտքի հարավային եզրաքարից 1,60 սմ հարավ գտնվել է մեծ խաչքարի 2 բեկոր (պահպանված մասերի չափերն են 0,54 x 0,54 սմ): Հետաքրքիր է, որ նույն քարի մեկ այլ բեկոր գտնվել է համալիրի արևելյան հատվածում 2013 թ. պեղումների ժամանակ, ինչը ևս մեկ անգամ վկայում է դրանց երկրորդական օգտագործման մասին:

Այսպիսով, կարելի է ենթադրել, որ համալիրը ունեցել է դեպի եկեղեցի տանող երկու աստիճանամուտք՝ արևմտյան (նորաբաց) և արևելյան՝ վեհարանի կողմից, որի աստիճանների քարերը վաղուց տեղում չեն: Արևմտյան հատվածում հոգևոր և տնտեսական մասերը տարանջատված են եղել պատով, որը ունեցել է, ինչպես նշեցինք, 4 աստիճաններով մուտք դեպի եկեղեցական կառույցները:

Մաքրման և պեղման աշխատանքները ցուցում են, որ հոգևոր կառույցներից հարավ եղել է մի հարթակ, որտեղ թաղումներ են կատարվել, իսկ նրա ներքևի մասում պահպանվել են պատուհանը և ջրամբարը: Մաքրելով այդ հատվածը՝ ճշտել ենք, որ պահպանված պատը շարունակվում է դեպի արևմուտք և ունեցել է երեք որմնահեծ:

Մաքրման և պեղման աշխատանքների իրականացումը պետք է հնարավոր դարձներ Սբ. Հակոբավանքի վերականգնման ծրագրի իրականացումն ու շինությունների ամրացումը, քանի որ վանքը գտնվում է վթարային վիճակում, սակայն 2023 թվականի սեպտեմբերի 19-ից հետո վանքն անցել է Ադրբեջանի վերահսկողության տակ:

Մարտակերտի շրջանի Վաղուհաս գյուղի դամբարանը

Վաղուհաս գյուղի արևելյան հատվածում՝ «Կինչի հող» տեղամասում, 2023 թվականի փետրվարին տեղի բնակիչը, գոմի հիմք փորելիս, խախտել է հնագույն թաղումը: Նրա հավաքած նյութը բաղկացած է բրոնզե զարդերի հավաքածուից (աղ. VI):

Պահպանված մետաղական զարդերի շարքում անհրաժեշտ է առանձնացնել բրոնզե մանյակը (տրամագիծը՝ 23 սմ)՝ բրոնզե մետաղալարից,

կլոր կտրվածքով, կոնաձև, չմիացվող ծայրերով: Նմանատիպ մանյակներ գրանցված են Հայաստանի հուշարձաններում, որոնք թվագրվում են մ.թ.ա. 4-3-րդ դարերով: Նմանատիպ ապարանջաններ հայտնի են նաև Հայաստանի հելլենիստական շրջանի դամբարաններում:

Մնացած իրերը, այդ թվում՝ հարթ բրոնզե մետաղալարից միացված ծայրերով երկու քունքօղը, միացված ծայրերով փոքրիկ ապարանջանը, մեջտեղում գոգավորություն ունեցող բրոնզե ապարանջանի բեկորը հայտնի են Հայաստանում սկսած մ.թ.ա. 6-4-րդ դդ.:

Առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում վեց ծուլածո բրոնզե օղակները՝ երկու կողմից և եզրից եղևնաձև զարդանախշով: Մի կողմից փոքր ելուստ կա, որը, հավանաբար, մնացել է կաղապարի անցքից: Պահպանվել են նաև նույն օղակների 5 բեկորներ և բրոնզե օղակի մի փոքրիկ բեկոր՝ պատրաստված հաստ բրոնզե մետաղալարից:

Իրերի հաջորդ խումբը ներկայացված է 8 աստղաձև ճարմանդների և 10 քառակուսի թիթեղների տեսքով: Ճարմանդները պատրաստված են բարակ բրոնզե թիթեղներից՝ չորս տեղից թեքված ու ձգված: Դրանք հայտնի են Այսրկովկասի ուշ բրոնզի և վաղ երկաթի հուշարձաններից: Մեկ օրինակ հայտնաբերվել է Արցախում՝ Քարաբլուրի մ.թ.ա. 11-9-րդ դդ. թաղումներից մեկում, բայց երկաթից:

Կարելի է ենթադրել, որ դրանք կաշվե գոտու մասեր են: Նկատենք, որ կաշվե կամ դրոշմավորված զարդանախշով կարված թիթեղներով գոտիները հայտնի են եղել դեռևս Ուրարտու պետության ժամանակներից և «պաշտամունքային որոշակի նշանակություն են ունեցել և ծառայել են որպես ամուլետներ»:

Գտնվել են նաև ապակուց պատրաստված ուլունքներ, մեկ կլորացված ռումբաձև ուլունք, այսպես կոչված, եգիպտական ֆայանսից, որը հայտնի է մ.թ.ա. 6-1-ին դդ., երկու ուլունք բրոնզից, երկուսը՝ մածուկից և մեկը՝ թրծած կավից:

Տեղում կատարված հետազոտությունը ցույց է տվել, որ Վաղուհաս գյուղի արևելյան մասում կա մ.թ.ա. 7-4-րդ դդ. դամբարանադաշտ: Այս վայրից փոքր ինչ ներքև արձանագրեցինք նաև ճանապարհի կառուցման ժամանակ ավերված կարասային թաղում: Ցավոք սրտի, տարածքի սեփականատերը այս թաղումից որևէ իր չի պահպանել:

2023 թ. սեպտեմբերին Ադրբեջանի կողմից սկսված հերթական պատերազմը հնարավորություն չտվեց շարունակելու սկսված աշխատանքները: Կարելի է միայն կռահել, թե Ադրբեջանի վերահսկողության տակ անցած այդ հուշարձանները ինչ վիճակում են այժմ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Բարխուտարեանց Մ., Արցախ, տպարան «Արոր», Բաքու, 1895:
ԴՀՎ 1982 – Դիվան հայ վիմագրության, պ. 5 Արցախ, Երևան, 1982:
Լալայան Ե. Վարանդա, «Ազգագրական հանդես», գիրք Բ, Թիֆլիս, 1897:
Զալալեանց Ս. Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տփղիս, 1858:

Vardges Safaryan (Armenia, Yerevan)

ARCHAEOLOGICAL RESEARCHES IN ARTSAKH AFTER 44 DAYS WAR (2021-2023)

Keywords: Artsakh, “Red Church”, Tsovateh, Kolatak, Metsaranits Monastery.

After the 44-day war, a significant number of cultural monuments in the Republic of Artsakh fell under Azerbaijani control. Despite this, archaeological research continued in the territories that remained under Armenian control during 2021-2022. This article presents the findings of those excavations, focusing on key archaeological sites explored post-war.

Excavations were conducted in the regions of Martuni, Martakert, and Askeran within the Republic of Artsakh. Notably, archaeological work took place at the “Karmir” (red) church and the nearby monastery in the village of Tsovatekh. Additional investigations were carried out at the monastery complex of St. Hakob in the village of Kolatak. Beyond these excavations, reconnaissance surveys were conducted in the village of Patara, located in the Askeran district, as well as in the village of Vaghuh, within the Martakert district.

The research revealed valuable information about the cultural and historical significance of these sites, contributing to the preservation and understanding of Artsakh’s archaeological heritage. The findings highlight both the ongoing challenges and the resilience in preserving Artsakh’s cultural assets, even amidst post-conflict uncertainties.

АРХЕОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ В АРЦАХЕ ПОСЛЕ 44 ДНЕВНОЙ ВОЙНЫ (2021-2023 ГГ.)

Ключевые слова: Арцах, «Красная церковь», Цоватех, Колатак, монастырь Мецараниц.

После 44-дневной войны огромное число памятников Республики Арцах остались под контролем азербайджанцев. На оставшейся под армянским контролем территории в 2021-2022 гг. продолжались археологические исследования.

В данной статье представлены итоги археологических исследований, осуществленных в Арцахе после 44-дневной войны. В указанный период археологические раскопки проводились в Мартунинском, Мартакертском и Аскеранском районах Республики Арцах: на территории церкви «Кармир екехеци» с. Цоватех и в монастырском комплексе Св. Акоба с. Колатак. Разведывательные работы проводились на территории с. Патара Аскеранского района и с. Вагуас Мартакертского района.

Исследование выявило ценную информацию о культурном и историческом значении этих объектов, способствуя сохранению и пониманию археологического наследия Арцаха. Результаты исследований подчеркивают как наличие текущих проблем, так и убежденность в необходимости сохранения культурных ценностей Арцаха даже в условиях постконфликтной неопределенности.

Աղյուսակ I



1




2



3




Աղյուսակ II




1



2



3



1



2



3




Աղյուսակ IV



Աղյուսակ V

ՀՅՈՒՄԻՍ ԱՐԵՎԱՏՅԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ



1



2



3



4



5



6



ՀԱՅ-ԷԼԱՄԱԿԱՆ ՓՈԽԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲՐՈՆԶԻ ԴԱՐՈՒՄ՝ ՎԵՐԻՆ ՆԱՎԵՐԻ ԱՐՔԱՅԱԿԱՆ ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ

Շուրջ 150 հա տարածք զբաղեցնող, հարյուրավոր դամբանաբլուրներ-
րից բաղկացած Վերին Նավերի հնավայրը ՀՀ Արագածոտնի մարզում
է՝ Երևանից 25-30 կմ դեպի արևմուտք, ծ.մ. 1100 մ բարձրությամբ սա-
րավանդի վրա: 1976 թ. մինչ այսօր պեղվել են մեկ և կես հազարամյակ
հարավաև դամբարանադաշտի տարբեր շրջափուլերի հուշարձաններ,
որոնցից առանձնանում են Ք.ծ.ա. 2-րդ հազարամյակի կեսի վերնախա-
վի կոթողային դամբարանները¹: Առյուծների և հովազների մորթիներով
պատված քարակերտ, ընդարձակ դամբանասարահներում հայտնաբերվել
են իշխանության խորհրդանիշ կնիքներ և հեղինակության խորհրդանիշ
մարտակառքերի բրոնզե մանրամասներ, ներմուծված և տեղական պե-
րճանքի առարկաներ, զենքեր, զարդեր, գործիքներ: Առանձնահատուկ են
վաղ երկաթի լայն կիրառումից շուրջ 500 տարի առաջ պատրաստված եր-
կաթե զենքերը և զարդերը, ոսկուց, գունաքարերից և հնագույն ապակուց
պատրաստված ուլունքները, Միջագետքից կենաց ծառերի և արխարների
պատկերներով թագի կամ գլխազարդի ոսկեպատ մեդալյոնները, ինչպես
նաև ուսագոյու ճարմանդները: Սրանք հատուկ են միջին Էլամական մշա-
կույթին և մինչ այժ հայտնի չէին Բաբելոնից հյուսիս գտնվող տարածքնե-
րում: Հեղինակության և իշխանության խորհրդանիշները, երկաթի զեն-
քերը, պաշտամունքային կավանդների հավաքածուները, ինչպես նաև
հեռավոր երկրներից ներկրված իրերը վկայում են Ք.ծ.ա. 1610-1500 թթ.
Արագածոտնում առկա պեղականության և արքայական թաղման ծեսի
մասին: Իրանի հին արվեստին բնորոշ արքայական ընծաները հավանա-
բար մեզ անհայտ Արարադյան թագավորին է ուղարկել Էլամի տիրակալը:
Այս գտածոները մատնանշում են հին Հայաստանի կարևորությունը վաղ
քաղաքակրթությունների քաղաքական կյանքում: Վերին Նավերի՝ Էլամա-
կան մշակույթին հատուկ գտածոները Հայաստանի և Իրանի փոխառնչու-
թյունների հնագույն վկայություններն են:

¹ Սիմոնյան 2006, 7-10:

Քանալի բառեր՝ Հայաստան, Էլամ, արքայական դամբարաններ, բիտումից կերտված դիմաքանդակներ, մարտակառք, երկաթե սուր, հնագույն միջազգային փոխառնչություններ:

Վերին Նավերի դամբարանադաշտի հարավ-արևելյան հատվածում կենտրոնացված են 5 հսկա դամբարաններ, որոնք 2011-2014 թթ. պեղել է ՀՀ մշակույթի նախարարության պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի արշավախումբը (ղեկ.՝ Հակոբ Սիմոնյան): Վերին Նավերի I դամբանաբլուրը (Ք.ճ.ա. 1610-1450 թթ.) ունեցել է 50 մ տրամագիծ և 2 մ բարձրություն: Քարահողային դամբանաթմբի ներքո բացվել են կրոմլեխներով եզերված երկու համաժամանակյա դամբանասրահներ՝ նախատեսված վերնախավի նշանավոր անձանց՝ թերևս արքայի և նրա մերձակա զինակցի թաղման համար¹: Այն պատկանում է միջին բրոնզի դարի եզրափակիչ փուլին: Հուղարկավորվածների սոցիալական բարձր աստիճանի մասին են վկայում քարակերտ կոթողային դամբանասրահները, թաղման արքայական ծեսը, պաշտամունքային կավանդների հավաքածուները, թանկարժեք, այդ թվում՝ ոսկուց զարդերը, Ք.ճ.ա. 2-րդ հազարամյակի կեսի համար բացառիկ երկաթե զենքերը, հեռավոր երկրներից ներմուծված առարկաները, չափազանց ինքնատիպ հեղինակության իրերը և իշխանության խորհրդանիշները²:

Երկու դամբանասրահներն էլ ունեցել են դամբանամուտքեր, որոնք թաղման ավարտից հետո միջնապատերով զատվել էին դամբանասրահներից և լցվել-փակվել տուֆե մեծ սալաքարերով: Դեպի եզր դամբանամուտքերի պատերը լայնանում են: Երևույթ, որը մատնանշում է աճյունները կրող մարտակառքերի շրջադարձման և դամբարան իջեցնելու համար պայմաններ ստեղծելու մասին: Դամբանասրահների հատակները նարնջագույն տուֆի ժայռի հարդարված մակերեսն է, պատերը շարել են օրոտոստատ դրված հսկա սալաքարերով՝ I:A և տուֆի մշակված սալիկներով՝ I:B: Ծածկերը չէին պահպանվել: I:A դամբանասրահի արևմտյան լայնական պատի վերին քարի ճակատային՝ դեպի դամբանասրահն ուղղված նիստի վրա, քանդակված է զույգ փոսիկ: Դրանք կարծես աչքեր են, որոնք հսկում են դամբարանի տիրոջ անդորրը³:

Դամբարանից հայտնաբերված խեցեղենի հավաքածուն բաղկացած է գնդաձև կամ փքված իրանով կճուճներից, քրեղաններից, բաժակներից,

¹ Simonyan 2012, 110-113; Սիմոնյան 2014, 222:

² Simonyan 2021, 96-114.

³ Սիմոնյան 2014, 222:

սափորներից և գավաթից: Սև փայլեցված կավից գավաթի մակերեսին փորագրված են 4 շարք նետասլաքներ: Այս անոթը եզակի է Հայաստանի հնագիտական համալիրում և վկայում է նետ ու աղեղի պաշտամունքի մասին:

Գնդաձև իրանով և երկար վզիկով սափորի վրա հետապնդման տեսարան է. լեռնային տեղանքում գայլերը հալածում են ազնվացեղ եղջերուներին: Տեսարանը եզրափակում է համաշխարհային վիշապ-օձի քանդակը: Գնդաձև սափորի զարդագոտու սյուժեն գրեթե նույնական է Գետաշենի գունագարդ հիդրիայի թեմային, որը, ըստ Գրիգոր Արեշյանի, ներկայացնում է կյանք-մահ-վերածնունդ հնդեվրոպական առասպելը¹: Վերին Նավերի սափորի զարդարանքում առկա լրացուցիչ տարրերը՝ լեռնաշղթան և համաշխարհային վիշապօձը, ավելի են շեշտում պատկերի դիցաբանական բնույթը: Որոշակի է Գետաշենի (միջին բրոնզի դար) և Վերին Նավերի (միջին բրոնզից ուշ բրոնզի անցման փուլ) կավանոթների վրայի եղջերուների պատկերագրության ոճի և թեմաների խորհրդապաշտության ընդհանրությունը:

Բրոնզե դաշույնի դաստակի վրա քանդակված է վեցաթև աստղ, որն, այսպես կոչված, «Դավթի աստղի» հնագույն փաստն է հին Արևելքում: Որպես մոգական խորհրդանիշ՝ այն Հայաստանում կիրառվել է շատ ավելի վաղ, քան Իսրայելում²: Դամբարանում հայտնաբերվել են նաև պերճանքի շքեղ առարկաներ՝ ոսկուց պատրաստված սկավառակաձև տափօղակներ, հնգազալար լարից խողովակաձև և տակառաձև ուլունքներ, թիթեռնիկաձև գլխագարդ՝ արծաթե միջուկով և ոսկե գալարաձև թևերով: Սրանց ձևը չափազանց արխայիկ է: Դրանք աղերսվում են Մայկոպի մեծ դամբանաբլրի³ և Տրոյա 2-ի զարդերի հետ⁴: Խողովակաձև իրանով և ոսկյա մետաղալից պատրաստված գալարաձև թևերով այս ծամկալները հիշեցնում են թիթեռնիկի քանդակ: Համանման զարդեր հայտնի են Տրոյա 2-ից, Բիբլոսից, Ուրի արքայական դամբարաններից ու Սիրիա-պաղեստինյան աշխարհի այլ հուշարձաններից, Շումերից⁵: Սրանք բարձրագույն իշխանության ինքնատիպ զարդեր են, որոնք առավել տարածված են եղել Հայկական լեռնաշխարհում՝ Լճաշեն, Քարաշամբ, Լոռի բերդ, Վերին Նավեր:

¹ Арешян 1988, 84-102.

² Սիմոնյան 2014, 223:

³ Кореневский 2004, 47-48; Кореневский 2011.

⁴ Авилова 2008.

⁵ Անդ.:

Բազմաթիվ են ներմուծված իրերը: Դիցուք կանաչ վանակատից սլաքը ներկրվել է Վանա լճի մերձակա Նեմրուֆ լեռան հանքերից: Հայտնաբերվել են կարմիր, դեղին, սև քարերից 64 մանրաքանդակ նետասալքներ, որոնք լցված են եղել մարտակառքի թափքին ամրացված կապարճների մեջ: Դատելով նետասալքների կշռից և աէրոդինամիկայի օրենքներից՝ դրանք նախատեսված են եղել մերձամարտի համար: Կարելի է ենթադրել, որ մարտակառքի թափքին կանգնած հերոսը, թշնամու շարքերը ներխուժելով, կարկտի պես նետահարել է թշնամուն՝ հակառակորդին պատճառելով զգալի կորուստներ: Ուշագրավ է, որ, ըստ հին առասպելի, հայոց նահապետ Հայկը Միջագետքի բռնակալ Բելին հաղթել է նետ ու աղեղով, խոցել տիտանին մոտ տարածքից՝ ընդհուպ մոտենալով նրան:

Երկաթի կիրառումը, ըստ հնագիտական տվյալների, սկիզբ է առնում Ք.ժ.ա. XII դարում: Սակայն հնագիտական նորագույն հայտնագործությունները վկայում են, որ երկաթը՝ որպես բացառիկ արժեքավոր հումք, կիրառվում էր դեռևս Ք.ժ.ա. III հազարամյակի երկրորդ կեսից: Այսպես՝ երկաթե դաշույններ հայտնաբերվել են Դորակի և Ալաջա Հույուկի Ք.ժ.ա. III հազարամյակի II կեսով թվագրվող դամբարաններից¹: Երկաթե սանձ է հայտնաբերվել Ներքին Նավերի Ք.ժ.ա. XXIII դ. թվագրվող N 1 դամբարանից² և այլն:

Դամբարանի անաղարտ հատվածներից և կավանոթների ներսից վերցված հողերի փոշեհատիկային՝ պալիոնոլոգիական տարրալուծումները վկայում են բրոնզի դարի Արագածոտնում վուշե և բրդե հագուստների, ինչպես նաև գինու մշակույթի լայն տարածման մասին³:

I:B դամբանասրահի հյուսիսային մասում հատակը թեքությամբ բարձրանում էր: Այն ծածկված էր հողի հետ խառնված կավանոթների փշրանքներով և մոխրաշերտով, որոնք բերվել էին դիակիզման խարույկից: Սրանց տակ բացվեցին մարտակառքի լուծը զարդարող բրոնզե խողովակաձև երկու ամրագոտի, սանձափոկերի երկու ուղղորդիչ, երկու ձիասանձ՝ ռոմբաձև երեսակալներով, խարսխաձև պատվանդանի վրա կանգնած թռչնի արձանիկ, որոնք զարդարել են մարտակառքի լուծը և առեղը, ինչպես նաև զոհաբերված ձիերի ոսկորներ: Կարևորագույնը հատակի վրա դրված բիտումից մեղալիոններն էին և ուսագոտու ճարմանդները՝ իրենց բրոնզե պնդողակներով, փականներով և երեսպատման ոսկյա թիթեղներով:

¹ Массон 2000, 135-166.

² Սիմոնյան 2021, 9-84:

³ Атоянц и др. 2015, 57-70.

Մեդալիոնները բացվեցին in situ՝ մարդու գլխի տրամագծին համապատասխան շրջանաձև դիրքով:

Դրանք երեսպատված են եղել ոսկյա նրբաթիթեղներով և եզերվել են պղնձե ամրագոտիներով: Մեդալիոնները երկու տեսակի են: Դրանցից չորսն ունեն 50 մմ տրամագիծ և 12 մմ հաստություն: Մեջքի մասը հարթ է, դիմայինը՝ ռելիեֆ: Ճակատային մասում քանդակված են հաստ, կամարածև հոնքերով, նշածև աչքերով, ուղիղ քթով, փքուն, գեղեցիկ շուրթերով և փոքր բերանով կանոնիկ դեմքեր: Ունեն փարթամ, զիգզագաձև իջնող մազերով ուղղանկյունաձև մորուքներ, երկար, հորիզոնական բեղեր: Մազերը գլխի կենտրոնում երկու մասի են բաժանված և դեպի եզրերը ուղիղ սանրած: Քունքերից դեպի ցած են իջնում ծանր, եռագալար հյուսքերը: Տպավորությունն այնպիսին է, որ կարծես մազերը և մորուքը հարդարել են յուրով, դրանք օձյալների դիմաքանդակներ են: Մեդալիոնները եզերում են հասկազարդ, ռելիեֆ գոտիները: 80 մմ տրամագծով և 15 մմ հաստությամբ մեծ մեդալիոնի ստորին հատվածն ունի ուղիղ կտրած հիմք: Կենտրոնական մասում պատկերված դիմաքանդակը եզերված է կրկնակի, հասկազարդ ռելիեֆ գոտիով, ապա՝ կենաց ծառերի երկու կողմերում նստած արխարների և ութաթերթ ռելիեֆ վարդակների բարձրաքանդակներով: Սրանք նույնպես օղակված են կրկնակի, հասկազարդ ռելիեֆ գոտիով: Չնայած կանոնիկ հարդարանքին՝ դիմաքանդակներն ունեն անհատականությունը շեշտող առանձնահատկություններ, ինչը հիմք է եզրակացնելու, թե դրանք պատկերում են ոչ թե հերոսականացված ինչ-որ կերպարների, այլ կոնկրետ, պատմական անձանց¹: Եթե փոքր մեդալիոնների դիմաքանդակները պատկերված են ուղիղ, և նրանց հայացքները սևեռված են դիտողին, ապա մեծ մեդալիոնի դեմքը քանդակված է փոքր-ինչ թեք և ունի դեպի հեռուն նայող խոհուն հայացք:

Մարդկային դիմաքանդակներով մեդալիոնների, ինչպես նաև կենաց ծառերի ու արխարների պատկերներով ճարմանդների գյուտը ոչ միայն հնագիտական, այլև հին արվեստի կարևոր հայտնագործություններ են: Մինչ այս բխումից կերտված քանդակներ, զարդեր և մեդալիոններ հայտնի էին միայն Իրանի հարավ-արևելքում՝ հին Էլամում:

Վերին Նավերի հայտնագործումները բացառիկ են: Մինչ այս դժվար էր նույնիսկ ենթադրել, որ միջինէլամական արվեստին բնորոշ դիմաքանդակներ կարող էին հայտնաբերվել Բաբելոնից հյուսիս ընկած տարածքներում: Հայկական լեռնաշխարհի հյուսիսում բխումից կերտված դիմաքանդակների գյուտը բազմաթիվ հարցեր է բարձրացնում, որոնց լուծումը հետագա

¹ Սիմոնյան 2015, 219-227:

բազմաբնույթ հետազոտությունների խնդիր է: Դրանցից առավել կարևոր է դրանց տեղական կամ ներմուծված լինելու հարցի բացահայտումը է: Ինչպես նշեցինք, մեդալիոնները և գոտու ճարմանդները հայտնաբերվել են մոխրաշերտով ծածկված դամբարանի հատակի վրայից, *in situ* վիճակում: Այսինքն՝ ակնհայտ է, որ դրանք դամբարան են դրվել թաղման ժամանակ և ժամանակակից են դամբարանում դրված թաղման ընձաներին: Դրանց պատմահամեմատական վերլուծությունը վկայում է, որ դամբարանը բնորոշ է Հայաստանի միջին բրոնզի եզրափակիչ փուլին, ժամանակակից է Լճաշենի ու Գանձակի (Գարաջամիրլի) արքայական դամբարաններին, որոնք թվագրվում են Ք.ճ.ա. 1600-1400 թթ.¹: Թվագրման համար կարևոր նշանակություն ունեն միջին բրոնզի դարին բնորոշ բջջազարդ կավանդաները, երկաթից պատրաստված մանգաղաձև սուրը, որի պատկերագիր օրինակները մեզ հայտնի են Ալալախի կնիքի պատկերից և բաբելական գտածոներից (Ք.ճ.ա. 1700-1500 թթ.), ինչպես նաև կապտականաչավուն ապակուց պատրաստված գնդաձև, կանեյլորներով պատված մակերեսով ուլունքը, որի օրինակները լայնորեն տարածված էին Գիյան II-ում (Ք.ճ.ա. 1600-1400 թթ.): Ռադիածխածնային տարրալուծումների և պատմահամեմատական մեթոդի համաձայն՝ Վերին Նավերի I:B դամբարանի տարիքը Ք.ճ.ա. 1610-1450 թթ. է:

Մյուս կարևորագույն հարցը դիմաքանդակների ծագման խնդիրն է: Դիմաքանդակների վրա պատկերված արխարների և կենաց ծառերի պատկերագրությունը բնորոշ է Հարավային Միջագետքի մշակույթին: Դրանք լայնորեն տարածված են եղել նաև Աքեմենյան Պարսկաստանի արվեստում: Փարթամ մորուքներով դիմաքանդակները աղերսվում են շումերական առասպելի՝ Գիլգամեշի և Էնկիդուի էպոսի հերոսների պատկերագրությանը, որոնք լայնորեն արտացոլված են աքքադական շրջանի արվեստում: Սակայն Վերին Նավերի գտածոների և միջագետքյան քանդակների մանրամասն քննությունը բացահայտում է որոշակի տարբերություններ: Հայկական գտածոները, պահպանելով միջագետքյան արվեստի սկզբունքները, միաժամանակ իրենց ոճով, մասնավորապես՝ մորուքների զիգզագաձև հարդարանքով էապես տարբերվում են ուղիղ իջնող բաբելական և ասսուրական մորուքների պատկերներից: Բացի այդ, բիտումից կերտված դիմաքանդակների ավանդույթը բնորոշ չէ Միջագետքին: Ավելին, մինչ այժմ ասսուրաբաբելական տարածաշրջանում հայտնի չեն նման քանդակներ:

¹ Мнацаканян 1960, 139-152; Гусейнова, Алиев 2007, 117-128.

Բիտումից կերտված մանր պլաստիկան լայնորեն տարածված է եղել միջինէլամական (Ք.ծ.ա. XIV-XII դդ.) ժամանակաշրջանում: Համանման բազմաթիվ գտածոներ հայտնաբերվել են Էլամի մայրաքաղաք Սուզայում և այլ կենտրոններում (Հավթ թեփե)¹: Էլամական գտածոների մեծ մասն աշխարհի կարևորագույն թանգարանները ձեռք են բերել հնասերների նվիրատվությունների կամ գնման միջոցներով: Հետևաբար, դրանց թվագրման խնդիրը՝ հիմնված լոկ արվեստաբանական վերլուծության վրա, հիմնավոր չէ: Մի բան որոշակի է, որ նավթահանքերով հարուստ Էլամում լայն տարածում է ունեցել բիտումից զանազան իրերի պատրաստման մշակույթը²: Ի տարբերություն դրանց՝ Վերին Նավերի գտածոները հայտնաբերվել են հնագիտական վստահելի համատեքստում, այսպես կոչված, փակ համալիրում՝ անխախտ դիրքով: Եզակի է նաև մի վայրում դրանց կենտրոնացումը՝ 7 օրինակ:

Եզրակացություններ:

Վերին Նավերի պեղումները բացահայտում են հին Հայաստանի և Էլամի միջև Ք.ծ.ա. II հազարամյակի կեսին եղած հնագույն պատմամշակութային փոխառնչությունները և վկայում Արարատյան դաշտում եղած հնագույն թագավորության մասին: Հայաստանում հայտնաբերված հնագույն դիմաքանդակները մինչ այժմ համարվել են հեղինիստական ժամանակաշրջանի տիրակալների, մասնավորապես՝ Տիգրան Մեծի դրամների վրա դրվագված պատկերները: Վերին Նավերի նորահայտ գտածոները հին Հայաստանի դիմաքանդակային արվեստի վերաբերյալ մեր պատկերացումները հետ են տանում առնվազն մեկ և կես հազարամյակ ու բացահայտում հնագույն քաղաքական և մշակութային կապերը Հայկական լեռնաշխարհի ու Էլամի միջև: Այս հայտնագործությունները եզակի են ոչ միայն հին Հայաստանի, այլև հարևան տարածաշրջանների՝ բրոնզի դարի հարուստ և բազմաբնույթ մշակութային համատեքստում:

Թերևս, ավելի հավանական է, որ Վերին Նավերի գտածոները Էլամից Հայաստան ներմուծման արդյունք են: Ո՞րն է եղել պատճառը, որ Էլամի հզոր արքան այսպիսի բացառիկ թանկարժեք ընծաներ է ուղարկել Արարատյան թագավորության տիրակալին: Թերևս դրա պատճառը Հայաստանի ռազմական զորությունն էր, որի կարիքն Էլամն ուներ Բաբելոնի հետ մղվող օրհասական պայքարում: Բազմաթիվ են հնագիտական փաստերը, որ հին Հայաստանն ունեցել է մարտակառքերով և նորագույն զենքերով զինված բանակներ, եղել է ռազմական հզոր տերություն:

¹ Connan and Deschesne, 1996.

² Хинц 1977; Negahban 1984, 3-10; Negahban 1991.

Ք.Ճ.ա. II հազարամյակի կեսին ձևավորվում են հինարևելյան հզոր պետությունները՝ Եգիպտոսի Նոր թագավորությունը, Խեթական տերությունը, Միտանին, Բաբելոնը, Ասորեստանը և Էլամը, որոնք պատերազմներ էին մղում միմյանց դեմ՝ հեգեմոն դիրք գրավելու, կենսական տարածքներ նվաճելու, հումքի նոր աղբյուրներ ու էժան աշխատուժ ձեռք բերելու համար: Պատերազմների ելքը կանխորոշում էին լավ կազմակերպված, արհեստավարժ բանակները, որոնք զինված էին նոր տեխնոլոգիաների կիրառմամբ պատրաստված զինատեսակներով ու մարտակառքերով: Ձիու՝ ռազմական նպատակով որպես հեծկան և մարտակառքերի լծկան օգտագործելու շնորհիվ Հին աշխարհի բանակները դարձան շատ ավելի մարտունակ և արագաշարժ: Այս կենաց, մահու պայքարում մասնակցել են նաև այլ՝ գրավոր աղբյուրների կողմից լռության մատնված կենտրոններ, որոնք իրենց դերակատարումն են ունեցել Հին աշխարհի քաղաքական քարտեզի ձևավորման գործում: Դրանցից մեկն է եղել Հայաստանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Սիմոնյան Հ., Վերին Նավեր, գիրք Ա (1976-1990 թթ. պեղումների արդյունքները), Երևան, 2006, 192 էջ, 120 էջ կավճ. ներդիր:

Սիմոնյան Հ., Բրոնզի դարի արքայական դամբարաններ Արագածոտնում, «Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները». Հայագիտական միջազգային երկրորդ համաժողովի զեկուցումների ժողովածո, Երևան, 2014, էջ 222-226, col. 9-12:

Սիմոնյան Հ., Հայաստանի հնագույն դիմաքանդակը, «Կանթեղ». գիտական հոդվածներ, Երևան, 2015, էջ 219-227:

Սիմոնյան Հ., Ներքին Նավերի N1 «արքայական» դամբարանը, «Հուշարձան» տարեգիրք (Երևան), հատոր ԺԶ (N 16), «Հուշարձան» հրատ., Երևան, 2021, էջ 9-84:

Авилова Л. И., Металл Ближнего Востока. Модели производства в энеолите, раннем и среднем бронзовом веке. Памятники исторической мысли, Москва, 2008.

Арешян Г. Е., Индоевропейский сюжет в мифологии населения междуречья Куры и Аракса II тысячелетия до н. э., ВДИ, 1988, № 4, с. 84-102.

Атоянц А., Арутюнян Р., Алешинская А. и Симонян А., Палинологические исследования содержания сосудов из гробницы IB некрополя Верин Навер, «Հուշարձան» տարեգիրք, հտ. Ժ, Երևան, 2015, էջ 57-70:

- Гусейнова М.А., Алиев И.Н., Среднебронзовые курганы с Гараджамирли Шамхирского района Азербайджана, Шамкир: археологическое наследие, история и архитектура, Баку, 2008, с. 129-154.
- Кореневский С. Н., Древнейшие земледельцы и скотоводы Предкавказья. Майкопско-новосвободненская общность. Проблемы внутренней типологии, Москва, 2004.
- Кореневский С. Н., Древнейший металл Предкавказья. Типология. Историко-культурный аспект, Москва, 2011.
- Массон В. М., Ранние комплексные общества Восточной Европы, В кн.: Древние общества Юга Восточной Европы в эпоху палеометалла (ранние комплексные общества и вопросы культурной трансформации), Санкт-Петербург, 2000, с. 135-166.
- Мнацаканян А. О., Древние повозки из курганов бронзового века на побережье оз. Севан, СА, 1960, № 2, с. 139-152.
- Хинц В., Государство Элам (ред. Ю. В. Юсифов), Москва, 1977.
- Connan J. and Deschesne O., Le bitume à Suse: Collection du Musée du Louvre, Paris, 1996.
- Negahban E., Haft Tepe Roundels: An Example of Middle Elamite art, AJA, 1984, Vol. 88, № 1, p. 3-10.
- Negahban E., Excavations at Haft Tepe, Iran, University Museum Monograph 70. Philadelphia, 1991. The University Museum of Archaeology and Anthropology, University of Pennsylvania.
- Simonyan H., New Discoveries at Verin Naver, Armenia, "Annual Review" of the Cotsen Institute of Archaeology at UCLA, Backdirt, 2012, p. 110-113.
- Simonyan H., Symbols of Power: Portraits of Hero-Kings and a Battle Chariot from the Royal Tomb of Verin Naver. Result of a conference "Archaeology of Armenian in Regional Context" dedicated to the 60th Anniversary of the Institute of Archaeology and Ethnography, NAS RA held in Yerevan during 2019. Publishing House of the IAE, 2021, pp. 96-114, ISBN 978-9939-886-04-6.

ARMENIAN-ELAMITE INTERACTIONS IN THE BRONZE AGE IN THE LIGHT OF THE EXCAVATIONS OF THE ROYAL TOMBS OF THE NECROPOLIS OF VERIN NAVER

Keywords: Armenia, Elam, royal tombs, bitumen portraits, chariot, iron sword, ancient international relations.

The ancient necropolis of Verin Naveri, consisting of hundreds of burial mounds, is located in the Aragatsotn region of Armenia, 25-30 km west of Yerevan, on a plateau 1100 meters above sea level. Here are excavated burials of different periods, which existed for one and a half thousand years, among which stand out the monumental tombs of the elite of the middle of II millennium BC. In the spacious tombs covered with skins of lions and leopards were found symbols of prestige and power - chariots, imported and local exquisite luxury goods, weapons, jewelry, tools. Iron weapons and jewelry made about 500 years before the widespread use of early iron, beads made of gold, colored stones and ancient glass have been discovered. Gold foil-covered medallions and buckles depicting hero-kings, the tree of life with ripe fruit and argali are characteristic of the Middle Elamite culture and have not been known so far in the territories north of Babylon. Symbols of power and prestige: iron weapons, complexes of cult vessels, as well as imported objects from distant countries testify that in 1610-1450 BC in Aragatsotn there was a royal funeral rite and statehood. The mighty king of Elam probably sent royal gifts, typical of the ancient art of Iran, to the king of Ararat unknown to us. These finds indicate the importance of ancient Armenia in the political life of early civilizations. The finds of Verin Naver, characteristic of the Middle Elamite culture, are ancient evidence of the relations between Armenia and Iran.

АРМЯНО-ЭЛАМСКИЕ ВЗАИМОДЕЙСТВИЯ В БРОНЗОВОМ ВЕКЕ В СВЕТЕ РАСКОПОК ЦАРСКИХ ГРОБНИЦ НЕКРОПОЛЯ ВЕРИН-НАВЕР

Ключевые слова: Армения, Элам, царские гробницы, портреты из битума, колесница, железный меч, древние международные отношения.

Древний некрополь Верин-Навер, состоящий из сотен курганов, расположен в марзе Арагацотн Республики Армения, в 25-30 км к западу от Еревана, на плато высотой 1100 метров над уровнем моря. Здесь раскопаны захоронения разных периодов, существовавшие на протяжении полутора тысяч лет, среди которых выделяются монументальные гробницы элиты середины II тысячелетия до н.э. В просторных гробницах, покрытых шкурами львов и леопардов, были найдены символы престижа и власти – колесницы, импортные и местные изысканные предметы роскоши, оружие, украшения, инструменты. Были обнаружены железное оружие и украшения, изготовленные примерно за 500 лет до широкого распространения раннего железа, бусы из золота, цветных камней и древнего стекла. Покрытые золотой фольгой медальоны и пряжки с изображением царей-героев, дерева жизни со спелыми плодами и архаров характерны для среднеэламской культуры и до сих пор не были известны на территориях к северу от Вавилона. Символы власти и престижа – железное оружие, комплексы культовых сосудов, а также привозные предметы из дальних стран, свидетельствуют о том, что в 1610-1450 гг. до н. э. в Арагацотне существовал царский погребальный обряд и государственность. Могущественный царь Элама, вероятно, посылал царские дары, характерные для древнего искусства Ирана, неизвестному нам царю Арарата. Эти находки свидетельствуют о важности древней Армении в политической жизни ранних цивилизаций. Находки Верин-Навера, характерные для среднеэламской культуры, являются древним свидетельством отношений между Арменией и Ираном.

**ՌՈՒԲԵՆ ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆԻ «ԿԻՒԿԻԱՆ, ԱՆՏԻՈՔԸ,
ԱՄԱՆՈՍԸ ՈՐՊԵՍ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ
ՀԱՆԳՈՒՅՑ» ՄԵԾԱՐԺԵՔ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ**

Հոդվածում անդրադառնում ենք հայ ականավոր գործիչ Ռուբեն Տեր-Մինասյանի «Կիլիկիան, Ամանոսը, Անտիոքը որպես միջազգային ճանապարհների հանգույց» մեծարժեք հեղափոխությանը, որը հեղինակի «Հայաստանը միջցամաքային ուղիների վրա» հատորի շարունակությունն է: Հեղինակի հիմնական նպատակը Կիլիկիայի և նրա հարակից շրջանների ռազմավարական դիրքի արժևորումն է:

Ռ. Տեր-Մինասյանը փայլուն պրամաբանությամբ, փաստարկման յուրահատուկ մոտեցմամբ, պատմահամեմատական դիպուկ օրինակներով կատարում է խիստ արդիական երկրառազմավարական վերլուծություններ: Աշխատանքի հեղինակը պարզաբանում է, որ Կիլիկիան և նրա հարակից շրջաններն իրենց նպաստավոր աշխարհագրական դիրքով հանդիսացել են փարաճաշրջանի պատմական գլխավոր իրադարձությունների առանցքը, քաղաքակրթական զարգացման շարժիչը:

Սրան զուգահեռ՝ Ռ. Տեր-Մինասյանն ափսոսանք է հայտնում, որ Ֆրանսիան, չնայած Կիլիկիայի ունեցած վերոնշյալ կարևորությանը, երկրորդ աշխարհամարտից առաջ երկրամասի հարավային հատվածը՝ Ադեքսանդրեթի սանջակը, զիջեց Թուրքիային՝ պատերազմի ժամանակ վերջինիս չեզոքությունն ապահովելու հույսով: Հեղինակը հաստատում է, որ, տիրելով ամբողջական Կիլիկիային, Թուրքիան ավելի է մեծացնելու սպառնալիքն արաբական աշխարհի, մասնավորապես՝ Սիրիայի նկատմամբ: Հեղինակը վերլուծում է նաև այս երկրամասի հանդեպ գերմանական, անգլիական, ամերիկյան, ռուսական, ֆրանսիական, արաբական, պարսկական, քրդական հավանական շահագրգռությունները:

Բանալի բառեր՝ Ռուբեն Տեր-Մինասյան, Հայաստան, Թուրքիա, Կիլիկիա, աշխարհաքաղաքականություն:

Ռուբեն Տեր-Մինասյանը հայտնի է որպես 20-րդ դարի առաջին երկու տասնամյակի հայոց պատմության ակնառու դեմքերից մեկը: Նա այս

ընթացքում պայքարի առաջին շարքում էր ինչպես ազատամարտում, այնպես էլ հայոց պետականության վերականգնման և կայացման գործում:

Սակայն պակաս արժեքավոր չէ Ռ. Տեր-Մինասյանի գործունեությունը տարագրության մեջ: Նոր կազմավորվող Սփյուռքում նա աչքի ընկավ ոչ միայն հայապահպանության, ինքնակազմակերպման ասպարեզում, այլև անկրկնելի հուշագրական և քաղաքագիտական-վերլուծական ժառանգություն թողեց:

Ռ. Տեր-Մինասյանի՝ յոթ հատորից բաղկացած հուշերի մասին բազմիցս է խոսվել¹: Դրանք ոչ միայն 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի հայ ազգային ազատագրական պայքարի, առաջին հանրապետության պատմության ուսումնասիրության անկրկնելի սկզբնաղբյուր են, այլև տասնամյակներ շարունակ բազում հայրենասեր սերունդների են կրթել:

Պակաս արժեքավոր չէ Ռ. Տեր-Մինասյանի քաղաքագիտական-վերլուծական ժառանգությունը: 1920-1930-ական թվականներին Բոստոնի «Հայրենիք» և Փարիզի «Դրոշակ» ամսագրերում, ինչպես նաև Կահիրեի «Հուսաբեր» և Փարիզի «Հառաջ» օրաթերթերում լույս են տեսնում նրա՝ շուրջ երեք տասնյակ հոդվածները²: Մինչ օրս իրենց արդիականությունը չկորցրած այս հոդվածներում հեղինակը մանրակրկիտ վերլուծություններով պարզաբանում է Հայաստանի ռազմավարական դիրքի նշանակությունը, Արևմտյան Հայաստանի կարևորությունը, դրա՝ Հայաստանի պետությանը միացնելու անհրաժեշտությունը ոչ միայն Հայաստանի անվտանգության, այլև տարածաշրջանային կայունության տեսանկյունից: Հետաքրքիր պարզաբանումներ կան նաև Հայաստանի և հարևան ժողովուրդների փոխհարաբերությունների վերաբերյալ:

Հայ երկրառազմավարական մտքի փայլուն նմուշ է Ռ. Տեր-Մինասյանի «Հայաստանը միջցամաքային ուղիներու վրայ» (Պէյրուզ, 1948 թ.) մեծարժեք ուսումնասիրությունը, որին նույնպես անդրադարձ եղել է մեր կողմից³:

Ռ. Տեր-Մինասյանի գրավոր (հատկապես քաղաքագիտական-վերլուծական) ժառանգության մի կարևոր մասը դեռևս անտիպ է և պահվում է Հայաստանի ազգային արխիվի թիվ 1048 ֆոնդում ու ՀՅԴ պատմության կենտրոնական արխիվի (ԱՄՆ, Մասաչուսեթս, Ուոթերթաուն) զանազան ֆոնդերում:

¹ Ռուբեն Տեր-Մինասյանի հուշագրության պատմագիտական արժեքի մասին տես Ստեփանյան 2012:

² Մեր կողմից այդ հոդվածների մեծ մասը հրատարակվել են առանձին ժողովածուով (տես Տեր-Մինասյան 2002): Ավելի ուշ առանձնաբար հրատարակել ենք Ռուբեն Տեր-Մինասյանի ևս երեք անտիպ հոդված (տես Ռուբեն 2013; Ստեփանյան 2014, Ստեփանյան 2016):

³ Ստեփանյան 2008, 154-158:

Սույն հոդվածում անդրադառնում ենք ականավոր քաղաքագետի անտիպ «Կիլիկիան, Ամանոսը, Անտիոքը որպես միջազգային ճամփաների հանգույց» մեծարժեք հետազոտությանը¹, որը հենց հեղինակի խոսքով՝ «Հայաստանը միջցամաքային ուղիների վրա» հատորի տրամաբանական շարունակությունն է (երկրորդ հատորը)²: Աշխատանքն ամենայն հավանականությամբ գրվել է 1948-1951 թվականների ընթացքում:

Աշխատանքում Ռ. Տեր-Մինասյանի հիմնական նպատակը Կիլիկիայի և նրա հարակից շրջանների ռազմավարական դիրքի արժևորումն է, որը նա իրականացրել է փայլուն տրամաբանությամբ, փաստարկման յուրահատուկ մոտեցմամբ, պատմահամեմատական դիպուկ վերլուծություններով: Հեղինակը նախ ներկայացնում է երկրամասի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև 20-րդ դարի կեսերը, ապա կատարում է խիստ արդիական երկրառազմավարական վերլուծություններ:

Աշխատանքը հիմնականում կառուցվում է այն հետաքրքիր գաղափարի շուրջ, որ հատկապես Կիլիկիան և նրա հարակից շրջաններն (Անտիոք, Ամանոս) են հադիսացել տարածաշրջանի պատմական գլխավոր իրադարձությունների առանցքը: Հեղինակը հմտորեն պարզաբանում է, որ, ունենալով աշխարհագրական նպաստավոր դիրք և շրջապատված լինելով բնական ամրություններով (անմատչելի լեռներ և դժվարանցանելի լեռնանցքներ), այս երկրամասը եղել է տարածաշրջանի քաղաքակրթական զարգացման շարժիչը, այստեղ են թելադրվել տարածաշրջանի ռազմաքաղաքական վերելքներն ու վայրէջքները, այստեղ է տեղի ունեցել տարածաշրջանի համար բախտորոշ ճակատամարտերի մեծ մասը:

Այս հատորի սկզբում Ռ. Տեր-Մինասյանն իր առջև խնդիր է դնում պարզել «Կիլիկիոյ եւ Անտիոքի շրջանների եւ անոնց առանցք Ամանոսի նշանակութիւնը ինչպէս անցեալի, նոյնպէս ներկայիս մէջ: Երբ մի դրամարկղ այնպէս է փակուած, որ բացուելիք չունի, անոր միջի գանձը անարժէք կը դառնայ: Երբ ան կողպանք ունի, իսկ կողպանքն ալ իւր բանալին ունի: Միջին Արեւելքը եթէ դրամարկղ է, անոր կողպանքը Կիլիկիան եւ Անտիոքն են, իսկ անոնց բանալին Ամանոսն է»³: Պետք է նշել, որ հեղինակը կարողացել է փայլուն և դիպուկ համեմատություններով, մեկնաբանություններով լուծել իր առաջադրած խնդիրը:

Արժեքավորելով Կիլիկիայի աշխարհաքաղաքական դերը՝ Ռ. Տեր-Մինասյանն ափսոսանք է հայտնում, որ Ֆրանսիան երկրորդ

¹ Հայաստանի ազգային արխիվ. ֆ. 1048, ց. 1, գ. 8:

² Նույն տեղում, թ. 1:

³ Նույն տեղում, թ. 3:

աշխարհամարտից առաջ Կիլիկիայի հարավային հատվածը՝ Ադեքսանդրեթի սանջակը զիջեց Թուրքիային՝ պատերազմի ժամանակ վերջինիս չեզոքությունն ապահովելու հույսով: Բուն Կիլիկիան ավելի շուտ՝ 1921 թվականին էր զիջել: Հայտնի է, թե ինչպիսի չեզոքություն պահեց Թուրքիան երկրորդ աշխարհամարտի տարիներին: Թուրքիան ոչ միայն չեզոքություն չպահեց, այլև պատերազմից հետո լուրջ ռազմավարական առավելություն ստացավ Մերձավոր Արևելքում:

Աշխատանքի սկզբում հեղինակը կատարում է հետևյալ կարևոր հաստատումը. «Ինչ որ ալ ըլլայ, ներկայիս Թուրքիան կ'օգտուի իր բարենպաստ կացութիւնէն եւ յենում Սեւրի դաշնագրով ազատագրուած եւ Լօզանի դաշնագրով քանդուած Էրզրումի վրայ, իւր սուրը կը ճոճէ դէպի Անդրկովկաս եւ Իրան, իսկ միւս կողմէ յենում Նոյն Սեւրի դաշնագրով ազատուած եւ Լօզանով քանդուած, Կիլիկիայի, Ամանոսի եւ Անտիոքի վրայ, իւր սուրը կը ճոճէ դէպի Սիրիայի հանրապետութիւնը, անոր հրաւիրելով հպատակութեան, իբր սատելիթը Թուրքիայի, հրաժարիլ իւր ապահովութեան գրաւականներէ եւ սպառնալով Բայէր, Բուճախ եւ Լաթաքիա, Հալէպ շրջանների գրաւումի, սպառնալիքներով, որ անոնք թուրք եղած են եւ թուրք պիտի դարձնել ըստ ազգերի «ինքնորոշման» սկզբունքներին: Այսօր Թուրքիոյ համար հերթական է Սուրիոյ անձնատուութիւնը եւ անոր հողերի այս կամ այն ձեւով իրան կցումը եւ Արաբական երկրների ու հնար եղածին չափ եւ Իրանի՝ իրան սաթէլիթ դարձնելու տենչը»¹: Ըստ էության, եթե «Հայաստանը միջցամաքային ուղիների վրա» հատորում Ռ. Տեր-Մինասյանը գնահատում է Էրզրումի ունեցած դերը Թուրքիայի՝ դէպի Անդրկովկաս և Իրան նկրտումների առումով, ապա այս հատորում խոսում է Թուրքիայի՝ դէպի Սիրիա և արաբական աշխարհի ունեցած հնարավոր ծրագրերի մասին, որոնց հաջողությունը մեծապես պայմանավորված է Կիլիկիայի ունեցած դիրքով:

Ուսումնասիրության մեջ հեղինակն առանձնաբար անդրադառնում է Կիլիկիայի և հարակից երկրամասերի հանդեպ գերմանական, անգլիական, ամերիկյան, ռուսական, ֆրանսիական, նաև՝ արաբական, պարսկական, քրդական շահագրգռություններին:

Միջնադարում գերմանացի խաչակիրների, Առաջին աշխարհամարտի տարիներին Վիլհելմ կայսեր, Երկրորդ աշխարհամարտի տարիների Ադոլֆ Հիտլերի նկրտումները հեղինակին հուշում են, որ գերմանական

¹ Երկն տեղում, թ. 8:

«դեպի արևելք» շարժումները կարող են շարունակություն ունենալ, որտեղ առանձնահատուկ տեղ ունի Կիլիկիան¹:

Ամերիկյան շահագրգռությունը հեղինակը կապում է Առաջին աշխարհամարտի ավարտից հետո ԱՄՆ-ի կողմից Հայաստանի և Փոքր Ասիայի մանդատը վերցնելու ցանկության դրսևորման փաստի հետ: Ճիշտ է՝ ԱՄՆ-ը Հայաստանի մանդատը չվերցրեց, սակայն հեղինակը կարծում է, աշխարհաքաղաքական հնարավոր փոփոխությունների դեպքում նույն փորձը կրկնելը չի բացառվում: Սա ինքնին նոր հետաքրքրություններ է բացելու Կիլիկիայի հանդեպ²:

Անգլիական շահագրգռության մասին խոսելիս հեղինակն առանձնացնում է այստեղ բրիտանացիների կատարած ֆինանսական ներդրումները (հատկապես Ալեքսանդրեթի նավահանգստի շինարարության մեջ): Դրանք վկայում են այն մասին, որ անգլիացիները երկրամասում երկարատև ծրագրեր ունեն³:

Ինչ վերաբերում է Ռուսաստանին, ապա հեղինակը հիշատակում է Ռուսաստանի անհագ ցանկությունները՝ հասնելու դեպի Միջերկրականի տաք ջրերը: Ճիշտ է՝ ռուսներն ավելի շատ դա փորձել են անել Կ.Պոլսի նեղուցների միջոցով, բայց Կիլիկիան ևս չի կարող բացառություն համարվել⁴:

Անդրադառնալով ֆրանսիական շահագրգռությանը՝ հեղինակը նորից է նշում, որ Ֆրանսիան անխոհեմ ձևով կորցրեց իր դիրքերը, բայց դրանք վերականգնելու փորձերը չի բացառում, որոնք կարող են պայմանավորվել իր տնտեսական շահերով, ռազմածովային հաշվարկներով⁵:

Ինչ վերաբերում է տարածաշրջանային շահագրգռություններին, ապա Իրանի պարագայում դա կարող է պայմանավորված լինել տնտեսական փաստարկներով և դեպի Միջերկրական դուրս գալու ճանապարհի ունենալու մղումով, արաբների դեպքում դա կարող է լինել թուրքական սպառնալիքին դիմակայելու մղումը: Իսկ ինչ վերաբերում է քրդերին, ապա նրանց մղած ազատագրական պայքարի տրամաբանության մեջ տեղավորվում է դեպի ծով ելքով պետություն ունենալը, հատկապես, որ Կիլիկիային հարակից երկրամասերը բավական թվով քրդերով են բնակեցված⁶:

¹ Նույն տեղում, թ. 147-153:

² Նույն տեղում, թ. 154:

³ Նույն տեղում, թ. 155-158:

⁴ Նույն տեղում, թ. 159-161:

⁵ Նույն տեղում, թ. 161-162:

⁶ Նույն տեղում, թ. 163-169:

Ահա այս աշխարաքաղաքական կարևոր հարցերին է անդրադառնում Ռ. Տեր-Մինասյանն իր «Կիլիկիան, Ամանոսը, Անտիոքը որպես միջազգային ճանապարհների հանգույց» հատորում, որը շուրջ 70 տարի անց անգամ չի կորցրել իր արդիականությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի ազգային արխիվ, ֆոնդ 1048, ցուցակ 1, գործ 8:

Ռուբեն, Ախալցխա-Ախալքալաքի հանրապետությունը (պատրաստեց Խաչատուր Ստեփանյանը), «ՎԷՄ» համահայկական հանդես, Երևան, 2013, Հուլիս-Սեպտեմբեր, թիվ 3 (43), էջ I(239)-XVI:

Ռուբեն, Հայաստան միջցամաքային ուղիներու վրայ, Պէյրութ, «Սեւան», 1948, 185 էջ:

Ստեփանյան Խ., Ռուբեն Տեր-Մինասյան (կյանքը և գործը), Երևան, «ՎՄՎ-ՊՐԻՆՏ», 2008, 184 էջ:

Ստեփանյան Խ., Ռուբեն Տեր-Մինասյանի անտիպ հոդվածը Ալեքսանդրեթի սանջակի մասին, «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 2014, N 122, էջ 278-289:

Ստեփանյան Խ., Ռուբենի հուշագրության պատմագիտական արժեքի շուրջ, «Արցախի պետական համալսարանի գիտական տեղեկագիր», Ստեփանակերտ, 2012, թիվ 2, էջ 91-103:

Ստեփանյան Խ., Վտարանդի հայ գործչի մտորումները Կովկասի դաշնային միության և «Պրոմեթևս» շարժման շուրջ, «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 2016, էջ 264-330:

Տեր-Մինասյան Ռ., Հոդվածների ժողովածու, կազմող՝ Խաչատուր Ստեփանյան, Երևան, «Ասողիկ», 2002, 424 էջ:

THE SIGNIFICANT WORK OF RUBEN TER-MINASYAN: “CILICIA, ANTIOCH, AND AMANUS AS A HUB OF INTERNA- TIONAL TRADE ROUTES”

Keywords: Ruben Ter-Minasyan, Armenia, Turkey, Cilicia, geopolitics.

The article refers to the prominent Armenian figure Ruben Ter-Minasyan's valuable research “Cilicia, Amanos, Antioch as a Node of International Roads”, which is the continuation of the author's volume “Armenia on Intercontinental Routes”. The author's main goal is to evaluate the strategic position of Cilicia and its neighboring regions.

R. Ter-Minasyan performs highly up-to-date geostrategic analyses with brilliant logic, a unique approach to argumentation, and accurate historical and comparative examples. The author of the work clarifies that Cilicia and its neighboring regions, due to their favorable geographical position, became the center of the main historical events of the region, the engine of civilizational development.

Parallel to this, R. Ter-Minasyan regrets that, despite the importance mentioned above of Cilicia, France, before the Second World War, ceded the southern part of the territory - Agheksandret Sanjak to Turkey, in the hope of ensuring the latter's neutrality during the war. The author confirms that, by taking over the entire Cilicia, Turkey will further increase the threat to the Arab world, particularly Syria. The author also analyzes the possible German, English, American, Russian, French, Arab, Persian, and Kurdish interests in this region.

Хачатур Степанян (Армения, Ереван)

ЦЕННЫЙ ТРУД РУБЕНА ТЕР-МИНАСЯНА «КИЛИКИЯ, АНТИОХИЯ, АМАНОС КАК УЗЕЛ МЕЖДУНАРОДНЫХ ДОРОГ»

Ключевые слова: Рубен Тер-Минасян, Армения, Турция, Киликия, геополитика.

В статье говорится о ценном исследовании выдающегося армянского деятеля Рубена Тер-Минасяна «Киликия, Аманос, Антиохия как узел международных дорог», которое является продолжением книги автора «Армения на межконтинентальных дорогах». Основная цель автора – оценить стратегическое положение Киликии и соседних с ней регионов.

Р. Тер-Минасян проводит современный геостратегический анализ, используя блестящую логику, уникальный подход к аргументации и точные исторические и сравнительные примеры. Автор работы уточняет, что Киликия и соседние с ней регионы с их выгодным географическим положением стали центром основных исторических событий региона, двигателем цивилизационного развития.

Параллельно с этим Р. Тер-Минасян сожалеет, что, несмотря на упомянутое выше значение Киликии, Франция перед Второй мировой войной уступила Турции южную часть этой территории – Александреттский Санджак, надеясь обеспечить нейтралитет последней во время войны. Автор подтверждает, что Турция, захватив всю Киликию, стала большей опасностью для арабского мира, в частности, для Сирии. Автор также анализирует возможные интересы Германии, Англии, Америки, России, Франции, Персии, арабов и курдов в этом регионе.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՆԿՈՒՄԸ. ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԶԱԽՈՂՈՒՄԸ¹**

Հայաստանի ղեկավարության չարդարացված մեծ հույսերը՝ կապված հաղթող պետություններից ակնկալվող օգնության հետ՝ սահմանների և ՀՀ ինքնիշխանության խնդիրները հոգուր Հայաստանի հանգուցալուծելու, խաբուսիկ դուրս եկան, ինչն էլ պայմանավորեց ՀՀ ծախողումները 1920 թ. վերջին: Ուշացումով ակնհայտ դարձավ, որ ՀՀ քաղաքական ղեկավարությունը սխալվել է իր հաշվարկներում, քանզի նույնիսկ չփորձեց ավելի արագ գործել խորհրդային աջակցությունը շահելու համար, և վերջին հաշվով Հայաստանի անկման գերակա գործոնը արտաքին քաղաքականն էր, որն էլ պայմանավորեց ինչպես ՀՀ անձնապրությունը 1920 թ. վերջի թուրք-հայկական պատերազմում, այնպես էլ պարտադրված խորհրդայնացումն ու Հայաստանի բաժանումը բոլշևիկյան Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի միջև:

Բանալի բառեր՝ Հայաստանի Հանրապետություն, քեմալական Թուրքիա, Խորհրդային Ռուսաստան, դաշնակիցներ, Ալեքսանդրապոլի պայմանագիր, Երևանի համաձայնագիր:

Ակնհայտ է, որ անկախ Հայաստանը անկարող եղավ ինքնուրույն գոյատևել քեմալական Թուրքիայի և վերակենդանացած բոլշևիկյան Ռուսաստանի մրցակից նպատակադրումների պայմաններում²: Տարածաշրջանային ուժերի այս համադրության պայմաններում հայության գործողություններն ու ցանկությունները մեծապես անէական դուրս եկան, իսկ բարերարների որոնումը՝ անարդյունավետ: Թուրք պատմաբան Բ. Գյոքայը այդ մեկնակետից եզրահանգել է. «Հետևաբար, դա թուրքական ազգային շարժման ոչ պատահական մերձեցումն էր ռուս բոլշևիկների հետ, որն առաջին անգամ նյութականացավ այդ տարածաշրջանում թուրք-բոլշևիկյան համագործակցության ձևով՝ Խորհրդային կոլմից Կովկասի

¹ The research was supported by the Higher Education and Science Committee of MESCS RA (Research project № 21T.6A102. "Armenia In The context of relations with European military-political representations in Transcaucasus (1917-1920)").

² Tsvetkova 2018, 77-114.

նկատմամբ հսկողության հաստատմամբ... Դա ավելին էր, քան եղել է երբևիցե դրանից առաջ: Համագործակցությունը նման էր գործնական ընկերակցության, իսկ այնուհետև այն հանգեց սկզբունքների ընդհանրության: Թուրքերը չէին ձգտում գնալ առաջ դեպի պատմականորեն ռուսների կողմից զավթված Հայաստանի մասը, և ռուսները ավելի առաջ չէին շարժվում դեպի թուրքական Հայաստանը»¹:

ՀՀ նպատակադրումներն անհամապատասխանեցին մարդկային-նյութական ռեսուրսների հետ, ակնհայտորեն չափազանց ծավալուն պահանջատիրությունը իշխեց սակավագոր հնարավորությունների վրա: Հայ քաղաքական էլիտան իր նպատակադրումները և արտաքին-քաղաքական ընտրանքը նույնականացնում էր Դաշնակիցների աշխարհաքաղաքական ձգտումների հետ, ինչը և՛ քեմալական Թուրքիայի, և՛ բոլշևիկյան Ռուսաստանի համար նշանակում էր, որ նրանք արևմտյան իմպերիալիստների կամակատար խաղաղինվորներն են: Հայաստանի Հանրապետությունը կառավարող Հ.Յ. Դաշնակցությունը Մոսկվայի և Անկարայի կողմից դիտվեց իբրև միջազգային սոցիալիստական հեղափոխության, թուրքական ազգայնականության հետամտած նպատակների թշնամի: Ի վերջո անկախ Հայաստանի նպատակադրման ծախողումը ո՛չ ՀՀ առաջնորդների մեղքն էր, ո՛չ էլ, վերջին հաշվով, ընդդիմադիր հայ քաղաքական ուժի, ո՛չ էլ՝ նրանց անձեռնհասության, այլ իրադարձությունների աշխարհաքաղաքական ընթացքը ծրագրող և դրան ընթացք տվող ուժերի, որի մի բևեռում արևմտյան երկրներն էին, մյուս բևեռում՝ Թուրքիան և բոլշևիկյան Ռուսաստանը:

1920 թ. սկզբներին ակնհայտ դարձավ, որ խորհրդային ուժերը հաղթող էին Անտանտի ֆինանսավորած և ռազմապես աջակցվող սպիտակ ուժերի դեմ քաղաքացիական առնակատումում՝ սրընթացորեն տեղաշարժվելով դեպի Կովկաս՝ այն վերանվաճելու հստակ մտադրությամբ: Արևմտյան մտասևեռումը ճակատագրական եղավ, քանզի ակնհայտ դարձավ, որ ՀՀ քաղաքական ղեկավարությունը սխալվել է իր հաշվարկներում՝ նույնիսկ չփորձելով ավելի արագ գործել՝ խորհրդային աջակցությունը շահելու կամ այդ գործոնը իրատեսորեն հաշվառելու համար²: Ռ. Հովհաննիսյանը գտնում է, որ հակառակ իրենց հաստատուն «արևմտյան արևելումին», Դաշնակցությունն ու հայկական կառավարությունը մնացին առանձին և լքված Արևմուտքի կողմից, որը Արևմտահայաստանը գծել էր թղթի վրա. «Դաշնակցութեան արեւմտեան արեւելումը բաւարար չէր օժանդակութիւն

¹ Gökay 1996, 61, 68.

² Suny 1983, 32-33.

ապահովելու համար: Միւս կողմէ՝ խորհրդաթրքական գործակցութիւնը հետզհետէ կընդլայնէր իւրաքանչիւր շաբթուան հետ: Խորհրդային ոսկի եւ զինամթերք Մուսթաֆա Քեմալի Ազգայնական ուժերուն հասան... Խորհրդային Ռուսաստանի եւ Ազգայնական Թուրքիոյ շահերուն կը համապատասխանէր իրենց միջեւ Կովկասեան անցքը բանալ /ասել է թե՛ այն Զանգեզուր-Սյունիքի միջանցքը, որն այսօր նրանց համար ռազմավարական գերնպատակ է դարձել- Վ.Վ./: Այս հաշարկներուն մէջ, Հայաստան պէտք է չեզոքացուէր, կամ նոյնիսկ վերցուէր¹»: Արդյունքում ռազմավարական առումով թանկարժեք ժամանակը կորցվեց չիմնավորված մանկրումների և սկրյան անորոշ ու երազային սպասումների վրա, և Ռ. Հովհաննիսյանի եզրահանգմամբ՝ երկիրը պարզապէս ուժասպառ եղավ, օժանդակություն չեղավ, և հավելյալ ուշացումը անհրաժեշտություն դարձրեց ոչ միայն բոլշևիկյան Ռուսաստանի և Թուրքիայի գործակցությունը, այլև առիթ տվեց թուրքերին Հայաստանը բնաջնջելու և ճնշող պայմաններ պարտադրելու²: Դա ուշացումով հասկացավ նաև վարչապետ Ալ. Խատիսյանը, որը ՀՀ պառլամենտի 1920 թ. ապրիլի 30-ի նիստում ունեցած ելույթում այդ մասին փաստեց. «Այնուամենայնիվ, չպետք է անտեսել, որ բոլշևիկներն են հանդիսանում Ռուսաստանի իրական ուժը, այդ փաստը մատնանշվում է մասնավորապես Եվրոպայում, ուր նկատվում է դեպի Ռուսաստան ունեցած քաղաքականության բեկում. ֆրանսիական պառլամենտը հանձնարարել է կառավարությանը՝ բանակցել Ռուսաստանի հետ: Նույն տեսակետին է Իտալիան, Ամերիկայի դիրքը հայտնի է ձեզ, այն ինչ հնարավոր չէր հունվարին, այն հնարավոր է դառնում, և մեծ տերությունները մտածում են կամ գուցե սկսել են բանակցություններ վարել Ռուսաստանի հետ թե՛ տնտեսական, և թե՛ քաղաքական հարցերի վերաբերյալ»³:

Այս հեղեղուկ վիճակում էլ Հայաստանի ճակատագիրը օրակարգային դարձավ 1920 թ. սեպտեմբերի սկզբին Բաքվում հրավիրված Արևելքի Ժողովուրդների առաջին համագումարում, որտեղ Հայաստանը ստորադասվեց մուսուլմանական աշխարհում հեղափոխության կեղծօրակարգային խնդրին, որի մասին զգուշացնում էր պարտված ՀՀ ղեկավարներին 1920 թ. Անդրկովկասում Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչ գնդապետ Քլ. Ստոքսը 1920 թ. հոկտեմբեր-նոյեմբերին⁴: Իսկ ամերիկահայ պատմաբան Ռ. Սյունին պնդում է, որ 1920 թ. փետրվար-դեկտեմբեր ամիսներին

¹ Suny 1983, 32-33.

² Յովհաննէսեան 1993, 32-33:

³ «Յառաջ», 1920, 15 մայիսի:

⁴ ՀԱԱ, ֆոնդ 200, ցուցակ 1, գործ 440, թերթ 47-48; Զոհրաբյան 1997, 227:

պարզորոշվեցին հայկական պետության հանդեպ արևմտյան հավատարմության սահմանները, և քեմալական Թուրքիայի ու Խորհրդային Ռուսաստանի մահաբեր դաշինքն¹ իր շրջապատույտի մեջ առավ հայկական հանրապետությանը: Փետրվարին՝ Լոնդոնի համաժողովից սկսած, Հայաստանը հետզհետե կորցրեց դաշնակիցների «արդյունավետ» և ցանկալի աջակցությունը, ապրիլին Սան-Ռեմոյում Բրիտանիան, Ֆրանսիան և Իտալիան հստակեցրին, որ, չնայած հայ ժողովրդի կորուստների ու հավատարմության հանդեպ կարեկցությանը, իրենք հայկական հանրապետության գոյությունը երաշխավորելու նպատակով ուժ չեն կիրառի, իսկ սին հույսերը, թե Միացյալ Նահանգները կվերցնի այդ բեռն իր վրա, զուր եղան. վերջինս աներկբա հրաժարվեց խնամակալությունից:

Այդ ընթացքում Ադրբեջանը, օգտվելով տերությունների թողտվությունից, տիրեց Ղարաբաղին այն պահին, երբ Մ. Քեմալի խորհրդով անարյուն խորհրդայնացվեց, և Կարմիր բանակը մտավ Բաքու, ինչն արմատապես փոխեց ուժերի հավասարակշռությունը և դասավորվածությունը Անդրկովկասում: Խորհրդային ուժերի՝ Կովկասում գտնվելը Հայաստանի և Վրաստանի տեղական բոլշևիկներին խրախուսեց հակապետական ապստամբություններ նախաձեռնել, սակայն իշխող մենշևիկներն ու դաշնակցականները, հստակ կատարելով Դաշնակիցների, և մասնավորապես՝ բրիտանական ու ֆրանսիական ռազմաքաղաքական առաքելությունների հրահանգները, ճնշեցին այդ շարժումները: ՀՀ կառավարությունն առանց վարանման խոստացավ մինչև վերջ շարունակել պայքարն անդրկովկասյան տարածաշրջանում արդեն լուրջ գործոն դարձած բոլշևիզմի դեմ, որի անհեռանկարայնությունը ներքուստ զգացել էին նաև դաշնակիցները: Մայիսյան ապստամբությունը հանգեցրեց անհամեմատ ավելի չափավորական կառավարության փոխարինմանը Դաշնակցության բյուրո-դիկտատուրայով:

Հայաստանի կառավարությունը ձախողվեց նաև բանակաշինությունում՝ չկարողանալով ստեղծել մարտունակ բանակ. հայդուկապետերը խորը տարակարծությունների և անհաշտ վիճակի մեջ էին կանոնավոր բանակի կողմնակից գեներալների հետ: Կառավարությունը, «հարկադրված լինելով» անգոր և անվստահելի բանակի միջոցով լուծել ուժից վեր խնդիրներ, անկարող գտնվեց զսպել հանրապետության Զանգիբասար-Վեդի-բասարի, Սոթք-Բասարգեչարի, Կարսի և այլ շրջանների մահմեդական սովար զանգվածների հակահայկական գործողությունները, որոնք հովանավորվում և ռազմական-նյութական զգալի աջակցություն էին ստանում

¹ Suny 1983, 32-33.

Թուրքիայից: Ավելին՝ մահմեդական շրջանների հնագնացման ընթացքում հայկական զորքը տկարացավ և ուժասպառվեց, որի մասին հստակ արտահայտվել է նաև Դրոն: Մինչև 1920 թ. հունիսի 1-ը հայկական զորքերում գտնվող օտարազգի և օտարալեզու 256 սպաներ և աստիճանավորներ հուլիսի 1-ից հայացման շրջաբերական հրամանի հիման վրա ազատ արձակվեցին ծառայությունից¹:

Հանրապետության գոյության վերջին արարը սկսվեց սեպտեմբերի սկզբին, երբ թուրքական զորքերը նախահարձակ եղան նախկին ռուս-թուրքական սահմանի ողջ երկայնքով: Այդ բարդ իրավիճակում Անտանտի երկրները «սթափվեցին», վերաձևումներ կատարեցին իրենց ռազմավարական հաշվարկներում՝ նկատելով, թե ինչպես են քաղաքացիական կոիվներից դժվարությամբ հաղթանակած բոլշևիկյան Ռուսաստանը և պատերազմում պարտված Թուրքիան փոխշահավետ համաձայնության գալիս: Ստեղծված խուճապային իրավիճակում դաշնակիցներից լքված Հայաստանին այլ ելք չմնաց, քան գնալ ուշացած, սակայն այլընտրանք չունեցող քաղաքական համաձայնության Խորհրդային Ռուսաստանի հետ՝ հայ ժողովրդի համար ձեռք բերելով գոյատևման տարբերակ: ՀՀ նախկին դաշնակիցները, իրենք ևս տագնապելով աշխարհաքաղաքական ուժերի այս նոր համադրությունից, սեփական կամքով ուղիներ որոնեցին եզրեր գտնելու թե՛ Խորհրդային Ռուսաստանի և թե՛ քեմալական Թուրքիայի հետ և արդեն 1920-1923 թթ. վերջնականապես հրաժարվեցին թե՛ Սևրի պայմանագրից և թե՛ հայկական հանրապետության գոյության երաշխավորի դերից՝ բացառելով ռազմուժի կիրառումը հայկական հարցի լուծման համար:

Արդյունքում ձախողվեց հայկական զորքերի՝ հոկտեմբերի 24-ին ձեռնարկած հարձակումը, ինչը կանխվեց հակառակորդի կողմից, որը ձեռնարկեց ակտիվ հակահարձակում: Արդեն հոկտեմբերի 29-ին թուրքերը հայտնվեցին Սարիղամիշում, հոկտեմբերի 30-ին՝ Կարսում, որը չպաշտպանվեց: Կարսում էր գտնվում ռուսական կայսերական բանակից մնացած մեծ ռազմապաշար, որը նշանակալի հաջողություն էր քեմալականների համար: Հայկական կողմից համարյա դիմադրություն չցուցաբերվեց: Հոկտեմբերի 30-ին Երևանը օգնության խնդրանքով դիմում է Անտանտի իր Դաշնակիցներին, նոյեմբերի 5-ին՝ ԱՄՆ-ին, իսկ այդ ընթացքում՝ նոյեմբերի 6-ին, թուրքերը գրավում են նաև Ալեքսանդրապոլը: Սակայն մեծ տերություններից և ոչ մեկը պատերազմին միջամտելու ոչ մի ցանկություն չի դրսևորում: Թուրքական հարձակումը ուղեկցվում է կոտորածով և

¹ ՀԱԱ, ֆոնդ 199, ցուցակ 1, գործ 119, թերթ 190; գործ 142, թերթ 189-190:

էթնիկ զտումներով: Ստորագրվում է Ալեքսանդրապոլի չարաբաստիկ կապիտուլացիոն հաշտությունը, ինչն արձանագրեց Թուրքիայի լիակատար հաղթանակը և ՀՀ փաստացի անձնատրությունը. «Նա,-հիշում է Ք. Աթաթյուրքը, - մեզ՝ այսինքն ազգային կառավարությանը հանձնեց այն տարածքները, որոնք «Օսմանյան» կառավարությունը կորցրել էր 1876-1877 թթ.»¹:

Թուրքական հաջողություններից անհանգստացած՝ Խորհրդային Ռուսաստանն առաջարկեց իր միջնորդությունը: Այդ իրավիճակում էլ ՀՀ դաշնակցական կառավարությունը որոշեց իշխանությունը փոխանցել խորհրդային ուժերին, բայց միևնույն ժամանակ ստորագրեց թուրքերի կողմից առաջադրված կոշտ պայմանների տակ: Գններալ Դրոն (Դրաստամատ Կանայան)՝ Հայաստանի դաշնակցական կառավարության լիազոր ներկայացուցիչը, և Սիլինը՝ խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչը, 1920 թ. դեկտեմբերի 2-ին Հայաստանը հռչակեցին «անկախ սոցիալիստական հանրապետություն»: Մի քան ժամ անց նախկին կառավարության պատվիրակությունը կնքեց Ալեքսանդրապոլի պայմանագիրը, որը թեպետ փաստացի անօրինական էր, այդուհանդերձ, հաստատեց այն սահմանը, որն ընկավ նորաստեղծ Խորհրդային Հայաստանի Հանրապետության և ազգայնական Թուրքիայի միջև:

Փոքրիկ, ոչ մեծ բնական ռեսուրսներ ունեցող Հայաստանը դիտարկվեց որպես «ցավալի թյուրիմացություն» և դժվար վճռելի հարցերի աղբյուր, որի առումով Լ. Շանթը կարծում էր, որ բրիտանացիները անդրկովկասյան տարածաշրջանում ուզում էին տեսնել ոչ թե ուժեղ և անկախ պետություններ, այլ «կախյալ անկախություններ»²:

Դա լավ է նկատել Հր. Աճառյանը, «Կազմվեց ուրեմն դաշնակցությունը բոլշևիկների և քեմալականների միջև ու ռուսների նյութական և բարոյական օգնությամբ քեմալիզմը տարածվեց ու բռնեց ամբողջ Փոքր Ասիան: Բայց այդ երկու դաշնակիցների ճանապարհի վրա կանգնել էին Կովկասյան նորակազմ չորս պետությունները՝ Դաղստանը, Ադրբեջանը, Վրաստանն ու Հայաստանը: Պետք էր որևէ ձևով վերացնել այս արգելքները՝ կամ նվաճելով նրանց և կամ դարձնելով դաշնակից պետություններ: Կովկասյան պետություններն ընկան երկընտրանքի մեջ: Հեշտ բան չէր միանգամից հրաժարվել ազգայնական ինքնագլուխ պետություն ունենալու այն հաճույքից, որի երազը դարերից ի վեր նոր միայն իրականացել էր: Մյուս կողմից անգլիացիք ամեն կերպով գրգռում էին այդ պետություններին,

¹ Кемаль 1934, 119.

² Շանթ 1925, 61:

նույնիսկ գինվորական օգնության խոստումով, որպեսզի դեմ կանգնեն արշավող Ռուսաստանին: Վերջապես Ռուսաստանի թուլացած վիճակը հավատալ էր տալիս իրենց, որ դժվար չէ խորտակել նրանց ուժը՝ նույնիսկ պատերազմի դեպքում: Հատկապես հայերն այս բոլորից դուրս՝ ունեին Սևրի դաշնագրի մի քանի հոդվածները, որոնք խոստանում էին նրանց մի մեծ և ընդարձակ Հայաստան: Այս պատճառներով ահա կովկասյան ազգերը չտեսան այն հեղեղը, որ փրթել էր հյուսիսից և (փոխանակ կանխավ բանակցելու) բոլշևիկյան վարչաձև ընդունելու, դաշնակից պետություններ ձևավորելու ծրագրին, դուրս եկան կռվելու ռուսների դեմ»¹:

Այս իրավիճակում Հայաստանի խորհրդայնացումն առաջին պլան մղվեց, որը կապվեց թուրքական հարձակման հետ: Թեև Քեմալական Թուրքիան և Խորհրդային Ռուսաստանը դաշնակիցներ էին, այդուհանդերձ թե՛ մեկին և թե՛ մյուսին ամենևին էլ ձեռնտու չէր մյուսի չափից ավելի ծավալվելը տարածաշրջանում, ինչպես և այսօր: Աշխարհաքաղաքական այս պահը հստակ է գնահատել Մեծ Բրիտանիայի վարչապետ Սթենլի Բոլդուինի որդին՝ հայկական բանակում գնդապետի կոչումով ծառայած Օլ. Բոլդուինը. «Այս պատերազմը, որ սկսվել էր 1920 թվականի սեպտեմբերի կեսերին, Ռուսաստանի առաջարկությամբ համաձայնեցված հարձակում էր. Հայաստանը կարող էր համաձայնվել շատ ավելի փոքր զիջումներով, քան ի վերջո արեց, բայց երկիրը տարօրինակ կերպով կուրորեն վստահեց Մեծ Բրիտանիային, որը օգնելու բազմաթիվ խոստումներ էր տվել ու մի անգամ պարտության մատնել թուրքերին»²:

Դաշնակիցները, ելնելով նոր աշխարհակարգի իրողություններից, իրենց հակաբոլշևիզմը արխիվ ուղարկեցին, արագ լքեցին Անդրկովկասը և Հայաստանը՝ այն ճանաչելով որպես բոլշևիկյան ազդեցության ոլորտ՝ հակվելով իրենց կողմից մերժված Խորհրդային Ռուսաստանի հետ տնտեսաքաղաքական, առևտրային և ռազմական հարաբերությունների բարելավման անհրաժեշտությանը: Անտանտի Գերագույն խորհուրդը 1920 թ. հունվարի 16-ին բանաձև է ընդունում Ռուսաստանի նկատմամբ տնտեսական շրջափակումը չեղարկելու մասին, իսկ 1920 թ. նոյեմբերին Դ. Լոյդը Զորջը և Խորհրդային հայտնի դիվանագետ Լ. Բ. Կրասինը նախնական համաձայնության են գալիս ռուս-բրիտանական առևտրատնտեսական պայմանագրի կնքման շուրջ³, որը ստորագրվում է 1921 թ. մարտի 16-ին⁴:

¹ Աճառյան 2004, 469-470.

² Բոլդուին 2022, 36-37:

³ Lang 1962, 231.

⁴ Վիրաբյան 2021, 65-82:

Մեծ Բրիտանիայի վարչապետը ոչ միայն համակերպվում է Խորհրդային Ռուսաստանի ռազմաքաղաքական ներկայության փաստի հետ, այլև կառավարության ոչ պաշտոնական համաձայնությունն է տալիս Անդրկովկասում ազատ գործելու համար¹:

Թուրք-հայկական պատերազմի թեժ պահին՝ 1920 թ. նոյեմբերին, ինչպես արդարացիորեն նշում է Վ. Մ. Մուխանովը, խառնվել պատերազմին Մեծ տերություններից և ոչ մեկը ցանկություն չունեցավ. Հայաստանն ուղղակի թողնվեց ճակատագրի քմահաճույքին: Իսկ թուրքագետ Ռ. Սաֆրաստյանը եզրահանգում է, որ Հայաստանի վրա հարձակման վերջնական ժամկետը որոշելիս հաշվի առնվեց հիմնականում արտաքին գործոնը: Ըստ հեղինակի, 1920 թ. օգոստոսի վերջին և սեպտեմբերի սկզբին իրադրությունն այնպիսին էր, որ Հայաստանի դեմ նախանշվող պատերազմին չէին միջամտի ո՛չ արևմտյան երկրները, ո՛չ էլ բոլշևիկները: Ըստ այդմ՝ որոշիչ նշանակություն ունեցավ քեմալականների և բոլշևիկների միջև փաստացի դաշնակցային հարաբերությունների հաստատումը: 1920 թ. սեպտեմբերի 8-ին Կարին (Էրզրում) հասավ Ռուսաստանից՝ որպես օգնություն ուղարկված 200 կիլոգրամ ոսկին: Նրա մի մասը հանձնվեց Ք. Քարաբեքիրի հրամանատարության տակ գտնվող բանակին, մյուս մասն ուղարկվեց Անկարա և օգտագործվեց քեմալականների, պաշտոնյաների և սպաների աշխատավարձերը վճարելու նպատակով²:

Ավելին, դաշնակիցները չէին էլ մտածում խանգարել Մ. Քեմալին Հայաստանի ոչնչացման նրա ագրեսիվ ծրագրում, և Ռ. Սաֆրաստյանի կարծիքով, սկսած 1920 թ. ամռանից և մանավանդ հայ-թուրքական պատերազմի սկզբնական փուլում քեմալականների ձեռք բերած հաջողություններից հետո, Անկարայի և Լոնդոնի միջև ի հայտ եկան որոշ ընդհանուր եզրեր, սկիզբ դրվեց գաղտնի շփումների դիվանագիտությանը: Դրան զուգընթաց Մոսկվայի հետ Անկարայի սերտ հարաբերությունները սկսեցին որոշ չափով սառել, և շփումներն ընդունեցին անկանոն բնույթ. Քեմալը կարողացավ ճիշտ գնահատել այդ նոր ձևավորվող իրադրությունը և ճարակորեն օգտվեց դրանից³:

Կարելի է ասել, որ 1920 թ. կեսերին իրավիճակը ավելի շուտ առավելություններ տվեց քեմալական Թուրքիային, քան բոլշևիկյան Ռուսաստանին, որը քաղաքացիական պատերազմից դժվարությամբ էր դուրս գալիս, դեռ բազմաթիվ տագնապներ ուներ, ինչն էլ պայմանավորեց Մ. Քեմալի

¹ Pipes 1964, 234.

² Սաֆրաստյան 2019, 75:

³ Սաֆրաստյան 2019, 80-81:

ճարպիկ խաղարկումը թե՛ անգլիացիների, թե՛ ռուսների և թե՛ հայերի մյուս դաշնակիցների հետ, ինչն էլ նրան գործողությունների ազատություն ընձեռեց Հայաստանի պարագայում: Իսկ ՀՀ արտաքին-քաղաքական անհաշվենկատ արևմտյան մտասևեռումը Ռուսաստանին թույլ տվեց 1920 թ. երկրորդ կեսին իրագործել երկակի ստանդարտների կոշտ ռազմավարություն, որից Հայաստանը տուժեց այն չափով, ինչքանով թույլ տվեց իրավիճակը, ինչը թե՛ 1920 թ. և թե՛ 2020 թ. չէր կարող չհանգեցնել Հայաստանի անվերապահ կապիտուլյացիային:

Քաղաքական ընթացքի այդ նրբերանգները հետադարձ հայացքով ընդհանուր առմամբ ճիշտ է նկատել Ալ. Խատիսյանը. «Միս կողմէ, Փարիզի Վեհաժողովը չափազանց կ'ուշացնէր Թուրքիոյ խնդիրներով զբաղուիլը եւ քեմալականներուն ժամանակ տուաւ ուժեղանալու համար: Իսկ յետոյ, երբ Ռուսաստանը վերջացուց իր ներքին քաղաքացիական կռիւները, Դաշնակիցները վախցան բարդութիւններէն եւ հեռացան՝ բախտի բերմունքին ձգելով նորակազմ հանրապետութիւնները»¹, որ ինքը «եկամ է այն անխախտ համոզման, որ Դաշնակիցները քեցին Հայաստանը, որ Թուրքերը ատկէ լայնօրէն օգտուեցան, բայց Թուրքերու գլխաւոր զինակիցները բոլշեւիկներն էին, որ ոյժ եւ հնարաւորութիւն տուին Թուրքերուն յարձակելու Հայաստանի վրայ: Ադ՝ անվիճելի փաստ է: Փաստ է նոյնպէս, որ իրար օգնելէ ետքը իրար մէջ բաժնեցին Հայաստանը: Եւ բոլշեւիկները ըրին այդ՝ ո՛չ թէ առանձին թշնամութենէն դէպի Հայաստանը, այլ դրդուած իրենց «համաշխարհային» քաղաքականութենէն, որուն համար անոնք պէտք կը զգային շահելու Թուրքերու բարեկամութիւնը՝ զոհաբերելով Հայաստանը: Եւ բոլշեւիկները Թուրքերուն տուին այն, ինչ որ անոնք կուզէին–Կարսը, Սուրմալուն, Արտահանը, մնացած մասը, ինչ-որ Թուրքերուն պէտք չէր, այսինքն՝ Հայերով բնակուած շրջանները, Ռուսերը առին»²:

Դա պարզապես Էնվերի երազանքի իրականացումն էր: Ըստ Ա. Խատիսյանի հուշագրության՝ կարելի էր ինչ-որ լուծում գտնել՝ «թեկուզ մի փոքրիկ Հայաստան ստեղծելու միջոցով: Եվ երրորդը՝ նրանք կուզենային ունենալ մի տարածք, ուր հնարավոր լիներ Թուրքիայից արտաքսել հայերին, իրենց կարիքների համար այնտեղ թողնելով արհեստավորների մի սահմանափակ քանակ, ինչպես այդ մասին ուղղակիորեն ասում էր Էնվերը: Ընդ որում, այն պայմանով, որ հայերի թիվը ոչ մի շրջանում չպետք է գերազանցեր ընդհանուր բնակչության 20 տոկոսը»³:

¹ Խատիսյան 1968, 193:

² Խատիսյան 1968, 293:

³ Խատիսյան 2023, 469:

Իսկ ահա թե ինչպես է ներկայացնում բոլշևիզմի մուտքը Հայաստան դաշնակիցներից, մասնավորապես՝ Մեծ Բրիտանիայից լքված ու խաբված հայկական գնդապետ Օլ. Բոլդուինը, որը Հայաստանի ճակատագրի այդ սրընթաց շրջադարձի անմիջական ականատեսն է եղել. «Բոլշևիզմի մուտքը Հայաստան ու Վրաստան... վերջ տվեց բոլոր այն մարդկանց հույսերին, ովքեր իրենց կյանքը նվիրել էին սեփական երկրի անկախությանը հասնելու նպատակին: Քայլ առ քայլ, առանց տեսանելի ջանքերի, տերությունները խաղում էին Լենինի օգտին»¹:

Ժամանակաշրջանը ցայտուն է բնութագրել Ս. Վրացյանը. «Անկախության համար անժամանակ ծնունդ էր Հայաստանի Հանրապետութիւնը: Ո՛չ առարկայական պայմաններով, ո՛չ ենթակայական գիտակցութեամբ նախապատրաստուած...: Զարմանալի չէր, որ հայ միտքը շփոթի մատնուեց եւ դժուարանում էր ըմբռնել կացութիւնը եւ քաղաքական նոր դիրքաւորում որդեգրել...»²:

Երևի հենց այդ հանգամանքը նկատի ունեն Ալ. Խատիսյանը, երբ տարագրության մեջ, հետադարձ հայացք գցելով անցյալի հեռացող էջերին և Առաջին հանրապետության թախծոտ մայրամուտին, դառնում է խորաթափանց և ի վերջո գալիս իրատեսական եզրահանգման. «Այդ պատճառով Դաշնակիցներու մասին, առհասարակ, մեր ժողովուրդը սկսաւ մտածել եւ արտահայտուիլ մեծ դառնութեամբ: Եւ այդ զգացումը մնաց մինչեւ այսօր: Ինչպէս այդ կըլլայ շատ յաճախ, համաշխարհային քաղաքականութեան գլխաւոր գիծերը կը ստեղծուէին զոհերու համար աննկատելի կերպով, եւ հարուածները երեւան կու գային կարծես թէ անակնընկալ, բայց այդպէս կը թուէր միայն առաջին հայացքէն: Պատմական վերլուծութիւնէն պարզ կերեւայ, որ դաշնակիցները եկան Կովկաս ոչ թե Կովկասեան ժողովուրդներու սիրոյն համար եւ հեռացան այնտեղէն, ոչ թե թշնամութենէ դրդուած: Հաշիւը չարդարացաւ, եւ անոնք հեռացան՝ թողելով մեզ ամենադժուարին րոպէին, միանգամայն անօգնական եւ միմակ: Այդ եղաւ անոնց դերը»³:

¹ Բոլդուին 2022, 336-338:

² Վրացեան 1966, 11:

³ Խատիսեան 1968, 193:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աճառյան Հր., Հայոց պատմություն (հյուսված ընդհանուր պատմության հետ), Երևան, 2004, ԵՊՀ հրատ., 484 էջ:

Բոլդուին Օ., Վեց բանտարկություն և վեց հեղափոխություն. Անգլ. թարգմ. Լ. Զիլֆուլարյանը, Երևան, 2022, «Անտարես» հրատ., 360 էջ: Զոհրաբյան Էդ., 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Երևան, 1997, «Ոսկան Երևանցի» հրատ., 368 էջ:

Խատիսեան Ալ., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը. Բ տպագր., Բէյրութ, 1968, տպ. «Համազգայինի», 486 էջ:

Խատիսյան Ալ., Անտիպ գործեր, նամակներ, նյութեր և փաստաթղթեր (աշխատասիրությամբ՝ Վ. Հարությունյանի), Երևան, 2023, հեղ. հրատ., 752 էջ:

Խուրշուդյան Լ., Հայաստանի բաժանումը 1920 թվականին, Երևան, 2017, ԵՊՀ հրատ., 352 էջ:

Հայաստանի Ազգային արխիվ (ՀԱԱ), ֆոնդ 199, ցուցակ 1, գործ 119, թերթ 190:

ՀԱԱ, ֆոնդ 200, ցուցակ 1, գործ 142, թերթ 189-190:

ՀԱԱ, ֆոնդ 200, ցուցակ 1, գործ 440, թերթ 47-48:

Յովհաննէսեան Ռ., Հայ Յեղափոխական Դաշնակցության դերը Հայաստանի Հանրապետության մէջ// «Դրօշակ», 1993, թիւ 19 (1402), 13 յունուար, էջ 31-35:

«Յառաջ», 1920. 15 մայիսի, No 91, Երևան:

Շանթ Լ., Մեր անկախութիւնը, Պոսթըն, 1925, «Հայրենիք», 306 էջ:

Սաֆրաստյան Ռ., Մութաֆա Քեմալ. պայքար Հայաստանի Հանրապետության դեմ (1919-1921 թթ.), Երևան, 2019, «Տիր» հրատ., 140 էջ:

Վիրաբյան Վ., Ազգամիջյան զարգացումները և Անտանտի պետությունները Անդրկովկասում 1917 թ. Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո: «Պատմություն և մշակույթ». Հայագիտական հանդես. Հատոր 2 (Գիտական հոդվածների ժողովածու), Երևան, 2021, ԵՊՀ հրատ., էջ 65-82:

Վրացեան Ս., Հին թղթեր նոր պատմութեան համար, Բէյրութ, 1962, Տպարան «Մշակ», 382 էջ:

Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, Դէպքեր, Դէմքեր, Ապրումներ. հատոր Ե, Պէյրութ, 1966, տպարան «Համազգային», 357 էջ:

Քաջազնունի Հովհ., Դաշնակցութիւնը անելիք չունի այլ եւս, Վիեննա, 1923, տպ. Մխիթարեան, 108 էջ:

- Кемаль М., Путь новой Турции. Т. 3. Интервенция союзников. Греко-турецкая война и консолидация национального фронта. 1920-1921, Москва: 1934, Гос. изд-во Литиздат Н.К.И.Д., 456 с.
- Andersen A. Partskhaladze G. A_NEW_TURN_OF_THE_ KARABAKH_ CONFLICT_ IN _THE_CONTEXT_OF_ARMENIAN_RUSSIAN_RELATION, 2020. <https://www.academia.edu/44370851/>, Qalgary, Canada. accessed: 08.01.2024. 25 P.
- Gökay B., Turkish Settlement and the Caucasus, 1918-20. Middle Eastern Studies, Vol. 32, No. 2, 1996, pp. 45-76.
- Lang D. M., A modern history of Georgia, London, 1962, Publisher: Weidenfeld and Nicolson, 298 p.
- Pipes R., The formation of the Soviet Union. Communizm and Nationalizm. 1917-1923 (Russian Research Center Studies), Cambridge, Massachusetts (USA), 1964, Published by Harvard University Press. 365 p.
- Suny R. G., Armenia in the Twentieth Century, Chico, 1983, CA: Scholars Press, 87 p.
- Tsvetkova T., Turkish National Movement and Soviet Russia in Caucasus (In English) (1919-1922), Journal of Balkan and Black Sea Studies, 2018, Year I, Issue 1, pp. 77-114.

THE FALL OF THE FIRST REPUBLIC OF ARMENIA: THE FAILURE OF RA FOREIGN POLICY CALCULATIONS

Keywords: Republic of Armenia, Turkey, Soviet Russia, allies, Alexandropol Treaty, Yerevan Agreement

The Armenian leadership's unrealistic expectations for support from victorious states, aimed at expanding Armenia's borders and securing the sovereignty of the Republic of Armenia, proved to be illusory. These misplaced hopes contributed to the failures Armenia faced by the end of 1920. Only too late did it become clear that the political leadership had miscalculated. They did not take timely action to secure Soviet support, a critical oversight that had severe consequences.

Ultimately, foreign policy missteps were the main factor in Armenia's decline. The leadership's delay in seeking Soviet assistance, coupled with misplaced reliance on Western powers, led to both Armenia's defeat in the Turkish-Armenian war and the subsequent capitulation at the end of 1920. These failures culminated in the forced Sovietization of Armenia and its division between Bolshevik Russia and Kemalist Turkey.

The political miscalculations of the Armenian leadership had far-reaching consequences, as Armenia lost the opportunity to assert its sovereignty and secure more favorable terms in the regional power struggles of the time. This period marked a pivotal moment in Armenia's history, where external pressures and internal misjudgments converged to shape its political fate.

ПАДЕНИЕ ПЕРВОЙ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ: ПРОВАЛ ВНЕШНЕПОЛИТИЧЕСКИХ РАСЧЕТОВ РА

Ключевые слова: Республика Армения, Турция, Советская Россия, союзники, Александропольский договор, Ереванское соглашение.

Неоправданно большие надежды армянского руководства на ожидаемую от государств-победителей помощь в расширении границ Армении и в защите суверенитета Республики Армения оказались обманчивыми, что и стало причиной неудач Республики Армения в конце 1920 г. С опозданием стало очевидно, что политическое руководство Армении ошиблось в своих расчетах, поскольку оно даже не пыталось действовать быстрее, чтобы заручиться советской поддержкой, и в конечном итоге главным фактором упадка Армении стала внешняя политика, которая обусловила как капитуляцию в турецко-армянской войне в конце 1920 года, так и насильственную советизацию и раздел Армении между большевистской Россией и кемалистской Турцией.

Политические просчеты армянского руководства имели далеко идущие последствия, поскольку армянское государство потеряло возможность утвердить свой суверенитет и обеспечить себе более выгодные условия в регионе. Этот период стал поворотным моментом в истории Армении, когда внешнее давление и внутренние просчеты сошлись, чтобы сформировать ее политическую судьбу.

INDIA-ARMENIA RELATIONS IN THE POST-COLD WAR PERIOD

Following the Soviet disintegration, India recognized Armenia on 26 December 1991, and eight months later on 31 August 1992, the “Protocol on Establishment of Diplomatic Relations between India and Armenia” was signed in Moscow. In 2022, both countries celebrated the 30th anniversary of the establishment of their diplomatic relations. In the last three decades, political, diplomatic and economic exchanges have become the mainstay of their overall partnership. There has been increasing trade between the two sides since 2020-21 onwards. The trade may not be significant, but the balance of trade is in the favour of Armenia.

Armenia has always supported India’s candidature for a permanent seat at the UN Security Council and India’s candidature for a non-permanent seat for the term 2021-22. In addition, cultural cooperation has remained the mainstay of the relationship between the two.

It is against this background that this article aims to analyse the overall relationship between the two in the post-Soviet space while highlighting the age-old civilizational linkage between two nations.

Keywords: India, Armenia, Soviet Union, political, economic, historical-cultural.

Introduction

Before embarking upon the India-Armenia relationship in the post-Soviet space, it is important to highlight the historico-cultural relationship between the two, which has been the fulcrum of their civilizational linkage for centuries. In the next few paragraphs, this Chapter briefly analyses the relationship between India and Armenia, which is as old as methuselah. In addition, this Chapter throws some light on the relationship between the two regions during the four-decade-long period from India’s independence (1947) to the end of the Soviet era (1991), which led to the establishment of Armenia as an independent republic. Furthermore, this Chapter argues that both like-minded nations

have the opportunity to enhance their relationship to a new level so that they can not only look after their national and bilateral interests but also be able to fend off regional and global challenges.

Historico-Cultural Linkage

For over two thousand years, India and Armenia have been connected culturally. The people-to-people contact, which has become an essential ingredient of soft power, in modern-day diplomatic parlance, was very much there between the people of the two regions. Most importantly, there were Indian settlements established in Armenia by two Indian Princes (Krishna and Ganesh escaping from Kannauj along with their families) as early as 149 BC. Similarly, in the 7th century AD, Armenian settlements had appeared in India's southern province of Kerala, after Tomas Cana, an Armenian merchant-cum-diplomat, arrived in Malabar Coast in 780 AD. During Mughal and British rule, Armenian settlements were established in Agra and Saidabad, Surat and Bengal (Kolkata). Several large and small Armenian settlements were also found in the Indian cities of Mumbai, Chandan Nagar, Gwalior, Lucknow, Madras (Chennai) and Puducherry. Madras became a vital cog in the India-Armenia relationship. In this context, Martija Ceric's (2024) account seems interesting. According to Martija, Armenian writer, philosopher and merchant in Madras Shahamir Shahamirian, published a book *Vorogayt Parats* (The Trap of Glory) almost two centuries ago in 1787-88, which contained a proposal for a constitution for the future independent Armenia. Furthermore, the Armenian language magazine *Azdarar*, published in Madras in 1794, was the first Armenian magazine ever. In addition, the Armenian language, literature, art and architecture in India have prospered by leaps and bounds. Besides trade, the Armenians contributed to the enrichment of Indian administration, art, architecture and culture¹. As rightly pointed out by India's present Ambassador to Armenia, Nilakshi Saha Sinha, India's political relations with Armenia have been historically "warm."²

After India's independence, because of a favourable tilt towards the Soviet Union, Indian political dispensation considered Armenia as part of the Union of Soviet Socialist Republics (USSR). A couple of visits in the next three decades, first by the Indian President and then by the Indian Premier, respectively in

¹ Ministry of External Affairs 2018.

² Armenpress, 2024.

1964 and 1976¹, was significant only from the political point of view. However, in the post-Soviet era, both republics tried to renew the civilizational bond on a one-to-one basis.

India and Armenia in the post-Soviet Period

This section of this Chapter brings out a sequence of political and diplomatic connections between the two countries. Following the Soviet disintegration, India recognized Armenia on 26 December 1991, and eight months later on 31 August 1992, the “Protocol on Establishment of Diplomatic Relations between India and Armenia” was signed in Moscow. However, both countries took more than half a dozen years to open their respective embassies, India in Yerevan in March 1999 and Armenia in New Delhi in October 1999. Similarly, Armenian Presidents visited India in 1995, 2003 and 2017, while Indian leaders (Vice Presidents) reciprocated only in 2005 and 2017². It means the political relations between India and Armenia at the highest level remained lacklustre for over a quarter century. For instance, India’s country head has yet to visit Yerevan even after several visits by its Armenian counterparts.

Similarly, the bilateral trade between the two was not so impressive. However, the trade balance remained in favour of Armenia. In the last couple of years, the trade partnership between the two republics has touched close to 400 million USD, with defence exports from India being the mainstay³. Bilateral trade between the two may be criticized as negligible, but there is considerable space for improvement, and perhaps both countries are working on this front.

But the real turning point in their relationship was the unwavering support extended by Armenian Prime Minister Nikol Pashinyan to India on the issue of Kashmir in the year 2019. Indian Prime Minister Narendra Modi met Prime Minister Nikol Pashinyan on the sidelines of the UN General Assembly same year (2019)⁴ and discussed several issues, including the Nagorno-Karabakh crisis.

Further, the year 2021 and onwards witnessed a flurry of diplomatic activities between India and Armenia. The main highlight was the Indian External

¹ Ministry of External Affairs 2018.

² Ministry of External Affairs 2018.

³ Singh 2024.

⁴ The Prime Minister of the Republic of Armenia 2019.

Affairs Minister's Armenia visit in 2021 and the reciprocal visit by Armenia's Foreign Minister to India in 2022. In 2022 alone, the foreign ministers of both countries met thrice. In 2023 and early 2024, the Raisina Dialogue, organized by the Observer Research Foundation with the active support and assistance of the Indian Ministry of External Affairs, has become an altar of solid India-Armenia partnership¹. The politicians, bureaucrats, diplomats, think tanks, strategists, cultural ambassadors, business and corporate honchos, and even students, of both countries have had meaningful exchanges to inject the necessary pep into the bilateral relations. During my meeting with some Armenian intellectuals on the sidelines of Raisina Dialogue (February 2024), and academicians and think tanks from Armenia and other parts of globe during a Conference at Yerevan in the last week of March 2024 on the theme "Armenia as a Civilization Crossroad: Historical and Cultural Ties", I had found an overwhelming interest among these scholars to discuss and strengthen partnership between the two old civilizations at all levels – social, cultural and trade.

India-Armenia Partnership: Need of the Hour

The next few paragraphs in this section dilate upon the reinvigoration of the India-Armenia Partnership based on their newfound mutual needs and aspirations. Both India and Armenia have considerable mutual interests and stakes as far as the "complex" strategic power play² in the South Caucasus is concerned. It is important to note herewith that in the last few years, there has been a tectonic shift in the power politics of the South Caucasus with Russia, Iran, Israel, Turkiye, Georgia, Azerbaijan and Armenia as the main actors. In one short piece published this year (April 2024), I have rounded up the sorry and scary state of affairs in the South Caucasus which has become prone to conflicts. I have argued that any crisis in the South Caucasus will have deleterious effects on both India and Armenia. Hence, a meaningful alliance between the two republics is the need of the hour.

There are several common issues and challenges both countries face at the present juncture. For instance, the most important power in Eurasia, Russia has been a good friend of both India and Armenia in the last several decades, both strategically and economically. Russia may have its issues, problems and challenges at regional and global levels, but perhaps will not have any

¹ Ministry of External Affairs 2024.

² Poghosyan 2024.

inhibition if India and Armenia work together to nourish their individual and bilateral interests.

There is one example where there is a convergence of interests among Russia, India and Armenia, that is the International North-South Trade Corridor (INSTC), a corridor of hope for India. Another regional big wig, Iran, does have warm relations with both India and Armenia notwithstanding its ideological connection with Azerbaijan. However, Azerbaijan's efforts to build the Zangezur corridor could be a stumbling block for the INSTC.

Secondly, India and Armenia have common enemies in the form of Türkiye, Azerbaijan and Pakistan. India and Pakistan, and Armenia and Azerbaijan have been arch rivals, perhaps inveterate enemies, and even fought wars. But the notorious actor here is Türkiye, who does not fail to support Pakistan against India, and subsequently provokes Azerbaijan against Armenia. A glaring example of brazenness was witnessed during the Pakistan Army Chief's visit to Baku in November 2023, where the Azerbaijan President reiterated support to Pakistan on the issue of Kashmir and Pakistani military leadership supported the Azeri position on the Nagorno-Karabakh war¹. This axis of three evils is going to pose several challenges in the coming times. They also promote a brand of radical Islam which is antithetical to both India and Armenia.

Lastly, another dark horse in the South Caucasus is China, which has become a common factor between the two countries. Sahakyan² describes how the natural mineral resources of the South Caucasus (oil, gas, water, gold, metal, ore, copper etc.) arouse considerable interest among the Chinese. It is a fact that India has been a trenchant critic of the BRI, the South Asia segment of which has encroached upon India's sovereignty³. Similarly, even though Armenia has been a major beneficiary of billions of dollars of Chinese investment in the last few years, it has not taken part in the Belt and Road Forum, which is a testament to its disapproval of the BRI. And perhaps India tacitly approves such an Armenian stand.

¹ Khan 2023.

² Sahakyan 2023.

³ Debata 2022.

Conclusion

It is found from the above analysis that there is high hope in both Indian and Armenian camps to build a new-age partnership based on their shared history, commonalities and mutual interests. Both the republics are enticed into the power game in the South Caucasus, where they have to withstand the pressure and challenges from different angles, corners and actors as well. Thereupon they need a strong rapport with each other to face and brave ensuing challenges, and to man their strategic ship in a stormy voyage. Their economic and defence cooperation is increasing slowly and steadily. What they need is a Strategic Partnership at this critical juncture. With Narendra Modi ushering in his third term as the Prime Minister of India in the recently held general elections, the possibility for a Strategic Partnership Agreement between the two countries grows further. As a prequel to it, India had appointed a Defence Attache in Yerevan in April 2024. And this will give both countries a leeway to nurture their national, bilateral and global interests.

BIBLIOGRAPHY

Armenpress, 20 May 2024, "Armenia-India Defense Cooperation is going very well, we are working to expand it further. Indian Ambassador's interview", <https://armenpress.am/en/article/1137310>

Benyamin, Poghosyan, 24 April 2024, "The Alternative Scenarios Facing the South Caucasus", <https://www.commonspace.eu/opinion/opinion-alternative-scenarios-facing-south-caucasus>

Ceric, Martija, 21 March 2024, "The India-Armenia Alliance: A Stabilizing Factor in West Asia", *Eurasia Review*, <https://www.eurasiareview.com/21032024-the-india-armenia-alliance-a-stabilizing-factor-in-west-asia-analysis/>

Debata, Mahesh Ranjan, 13 April 2024, "Is Armenia India's new 'Extended Neighbourhood'", Firstpost, <https://www.firstpost.com/opinion/is-armenia-in-dias-new-extended-neighbourhood-13759197.html>

Debata, Mahesh Ranjan, 2022, "Belt and Road Initiative (BRI): Central Asia, the Middle East and South Asia", in Mojtaba Mahdavi and Tugrul Keskin (eds.), *Rethinking china, Middle East and Asia in a "Multiplex World"*, Leiden: Brill, 80-95.

Debata, Mahesh Ranjan, 28-29 March 2024, "India-Armenia Relations in the post-Cold War Period", paper presented at the International Conference

“Armenia as a Civilization Crossroad: Historical and Cultural Ties”, Yerevan, Armenia.

Khan, Mehmood UI Hassan, 2 November 2023, “General Asim Munir’s Visit to Baku”, Azernews, <https://www.azernews.az/analysis/216915.html>

Ministry of External Affairs, Government of India, 2018, “Bilateral Brief on India-Armenia Relations”, <https://www.mea.gov.in/Portal/ForeignRelation/Armenia-2>

Ministry of External Affairs, Government of India, 2024, “Raisina Dialogue 2024”, https://www.mea.gov.in/press-releases.htm?dtl/37644/Raisina_Dialogue_2024

Sahakyan, Mher, 2023, “China’s Belt and Road Initiative and South Caucasus in the era of Ukraine War and Multipolar World Order 2.0”, in Mher Sahakyan (ed.), *China and Eurasian Powers in the Multipolar World 2.0*, NY and London: Routledge, 105-128.

Singh, Amitabh, 5 January 2024, “Understanding India’s Armenia Outreach amid global power-play in South Caucasus”, <https://www.firstpost.com/opinion/understanding-indias-armenia-outreach-amid-global-power-play-in-south-caucasus-13579412.html>

The Prime Minister of the Republic of Armenia, 26 September 2019, “Armenian Premier meets with Indian Prime Minister Narendra Modi in New York”, <https://www.primeminister.am/en/press-release/item/2019/09/26/Nikol-Pashinyan-Indian-Prime-Minister/>

ՀՆԴԿԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԵՏԱԱՌԸՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Բանալի բառեր՝ Հնդկաստան, Հայաստան, Խորհրդային Միություն, քաղաքականություն, տնտեսություն, պատմություն, մշակույթ:

Խորհրդային Միության փլուզումից հետո Հնդկաստանը Հայաստանի Հանրապետությունը ճանաչեց 1991 թվականի դեկտեմբերի 26-ին, իսկ ութ ամիս անց՝ 1992 թվականի օգոստոսի 31-ին, Մոսկվայում ստորագրվեց «Հնդկաստանի և Հայաստանի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման մասին արձանագրությունը»: 2022 թվականին երկու երկրներն էլ նշել են իրենց դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակը: Վերջին երեք տասնամյակների ընթացքում քաղաքական, դիվանագիտական և տնտեսական փոխանակումները դարձել են երկու պետությունների միջև ընդհանուր գործընկերության հենարանը: Երկու կողմերի միջև առևտուրն աճ է արձանագրել հատկապես 2020-21 թվականներից սկսած: Հայաստանը միշտ պաշտպանել է Հնդկաստանի՝ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում մշտական տեղի համար և 2021-2022 թվականների ընթացքում ոչ մշտական տեղի համար թեկնածությունը: Նշվում է նաև, որ մշակութային համագործակցությունը երկու կողմերի հարաբերությունների հիմնական ուղղություններից է:

Հեղինակը վերլուծում է հետխորհրդային տարածքում երկու երկրների միջև հարաբերությունները՝ միաժամանակ ընդգծելով երկուսի միջև դավոր քաղաքակրթական կապը:

ИНДИЙСКО-АРМЯНСКИЕ ОТНОШЕНИЯ В ПЕРИОД ПОСЛЕ ХОЛОДНОЙ ВОЙНЫ

Ключевые слова: Индия, Армения, Советский Союз, политика, экономика, история, культура.

После распада Советского Союза Индия признала Армению 26 декабря 1991 года, а восемь месяцев спустя, 31 августа 1992 года, в Москве был подписан «Протокол об установлении дипломатических отношений между Индией и Арменией». В 2022 году обе страны отметили 30-ю годовщину установления дипломатических отношений. За последние три десятилетия политические, дипломатические и экономические обмены стали основой их общего партнерства. С 2020-21 годов наблюдается рост торговли между двумя сторонами.

Армения всегда поддерживала кандидатуру Индии на постоянное место в Совете Безопасности ООН и кандидатуру Индии на непостоянное место на срок 2021-22 годов. Кроме того, культурное сотрудничество остается основой отношений между двумя странами. В статье есть анализ общих отношений между двумя странами на постсоветском пространстве, где особо подчеркивается цивилизационная связь между двумя народами.

THE HAY HOROM COMMUNITIES (ORTHODOX ARMENIANS) IN THE 19TH - EARLY 20TH CENTURIES

The article is dedicated to a little-studied group of the Armenian people: the so-called Hay Horoms. Once a fairly numerous groups within the population of Armenia, the medieval Eastern Orthodox (Chalcedonian) Armenians left a significant cultural heritage. However, with the establishment of Turkic rule in the Armenian Plateau and Asia Minor, and the gradual Islamization of the indigenous Christian population, their numbers declined markedly. As of the 19th century, the Hay Horom communities were limited to just a few villages in three regions of Western Armenia, as well as in the vilayet (province) of Izmit. However, they preserved their mother tongue and national traditions. Since the end of the 19th century, under the bloody repression of the Armenians by the Ottoman authorities on one hand, and the promotion of the Great Greek Idea by the representatives of the Greek clergy and intellectuals on the other, the Hay Horoms have undergone a process of Hellenization. Moreover, in the early 20th century, the genocidal policy of the Young Turks led to mass massacres of the Orthodox Armenians of Izmit and the migration of the last remnants of the Hay Horoms to Greece.

Keywords: Eastern Orthodox Armenians, Hay Horoms, Chalcedonian Armenians, Armenia, Armenian Genocide, Greek Genocide, identity.

The Eastern Orthodox Armenians, known in the Middle Ages as *Tsait*¹ and in modern times as *Hay Horoms*², are an important part of the Armenian people, occupying a special place in Armenian history, as well as in its spiritual and cultural heritage. The dogmatic disagreements that arose after the Fourth Ecumenical Council (Chalcedon, 451), along with the ecclesiastical and

